

© Association of Judges of the RA,
http://www.judge.am/index.php?option=com_content&view=category&layout=blog&id=36&Itemid=60&lang=en. [Translation already published in Collection of judgments of ECHR in Volume 4, 2003.] Permission to re-publish this translation has been granted for the sole purpose of its inclusion in the Court's database HUDOC.

CASE OF BRONIEWSKI v. POLAND - [Armenian Translation] by the Association of Judges of the RA

ԲՐՈՆԻՈՎՍԿԻՆ ԸՆԴԴԵՄ ԼԵՅԱՍԱՆԻ ԳՈՐԾԸ

CASE OF BRONIEWSKI v. POLAND

Դատարանի 2004թ. հունիսի 22-ի

վճիռը

Ստրասբուրգ

ՓԱՍՏԵՐ

I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

9. Դիմողը՝ պրն Յեժի Բրոնիովսկին, որը հանդիսանում է Լեհաստանի քաղաքացի, ծնվել է 1944թ. և ապրել Լեհաստանում, Մոտոպոլսկա մարզի Վելիչկա բնակավայրում:

A. ՊԱՏՄԱԿԱՆ ԽՈՐԱՊԱՏԿԵՐԸ

10. Նախապատերազմյան Լեհաստանի արևելյան մարզերը կոչվել են «Սահմանամերձ մարզեր» («Krezy»): Դրանք ընդգրկել են ներկայիս Բելառուսի և Ուկրաինայի լայն տարածքները և Վիլնյուսի շրջակա այն տարածքները, որոնք այժմ հանդիսանում են Լիտվան:

Ավելի ուշ, երբ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Լեհաստանի արևելյան սահմանը սահմանվեց Նեման (Խոտոր) գետի երկայնքով (որի կենտրոնական ուղեգիծը կազմում էր Քուրզոն գծի մի մասը), «Սահմանամերձ մարզերը» կոչվեցին «Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս գտնվող տարածքներ» («ziemie zabuzaniskie»):

Այդ մարզեր (շրջաններ) 1939թ. սեպտեմբերին ներխուժեց ԽՍՀՄ-ը:

11. Հետագա համաձայնագրերով, որոնք կնքվեցին Լեհական Ազգային ազատագրության կոմիտեի և Ուկրաինայի (9 սեպտեմբերի 1944թ.), Բելոռուսիայի (9 սեպտեմբերի 1944թ.) և Լիտվայի (22 սեպտեմբերի 1944թ.) նախկին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների միջև («Հանրապետական համաձայնագրեր» (unowyy republikanskie), Լեհական պետությունն ստանձնեց պարտավորություն փոխհատուցում տրամադրել այն անձանց, ովքեր «հայրենադարձել էին» «Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս գտնվող տարածքներից» և պետք է իրենց սեփականությունը թողնեին այնտեղ: Այդպիսի սեփականությունը սովորաբար հիշատակվում է որպես «Նեման (Խոտոր) գետի տարածքներից դուրս գտնվող սեփականություն»:

12. Ըստ լեհական կառավարության գնահատման՝ 1944թ. մինչև 1953թ. մոտավորապես 1.240.000 մարդ «հայրենադարձել է» համաձայն Հանրապետական համաձայնագրերի դրույթների: Բանավոր լսումների ժամանակ կողմերն ընդունել են, որ հայրենադարձվածների մեծամասնությանը տրամադրվել է փոխհատուցում՝ իրենց հայրենադարձության հետևանքով սեփականության կորստի դիմաց:

Այդ կապակցությամբ, Կառավարությունը նաև հայտարարել է, որ լեհ-խորհրդային սահմանագծի հաստատման արդյունքում (չնայած այն փաստին, որ Լեհաստանի Դաշնակիցները «փոխհատուցել էին» նախկին Գերմանիայի՝ Օդեր-Նեյսի գծից արեւելք ընկնող հողերի հաշվին) - Լեհաստանը կրել է 19.78 % կազմող տարածքային կորուստ:

B. Գործի հանգամանքները

13. Գործի փաստերը, ինչպես ներկայացրել են կողմերը, ստացվել են հետևյալ կերպ:

1. Փաստերը մինչև 10 հոկտեմբերի 1994թ. ժամանակահատվածում

14. Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո դիմողի տատը հայրենադարձել է LWOW-ից (Լվով) (այժմ LVIV Ուկրաինայում):

1947թ. օգոստոսի 19-ին Կրակովում Յայրենադարձության պետական գրասենյակը տվել է վկայական, որով հավաստվել է, որ նա ճանաչել է Լվովում ունեցած իրական սեփականության մի մասը, և որ քննության առարկա սեփականությունը կազմված է մոտ 400 քառ. մ հողից և 260 քառ. մ մակերեսային տիրույթով տնից:

15. 1968թ. հունիսի 11-ին Կրակովի շրջանային դատարանը (Sad Rejonowy) որոշում է կայացրել՝ հայտարարելով, որ դիմողի մայրը ժառանգել է իր մահացած մոր ամբողջ սեփականությունը:

16. Ավելի ուշ՝ չպարզված ամսաթվի, դիմողի մայրը խնդրել է Վելիչկայի քաղաքապետին թույլատրել իրեն գնելու Պետական գանձապետարանին պատկանող կալվածքի, այսպես կոչված՝ «անժամկետ օգտագործման» իրավունքը (prawo uzytkowania wieczystego) (տես նաև ստորև՝ 66-րդ կետը):

17. 1980թ. սեպտեմբերին Կրակովի քաղաքապետարանի փորձագետը գնահատել է Լվովում դիմողի տատի թողած սեփականության արժեքը: Փաստացի արժեքը գնահատվել է 1.949.560 հին լեհական զլոտի (PLZ), բայց, պետության կողմից պատշաճ փոխհատուցման նպատակով, արժեքը սահմանվել է 532.260 PLZ:

18. 1981թ. մարտի 25-ին Վելիչկայի քաղաքապետը կայացրել է որոշում, որով թույլատրվել է դիմողի մորը գնելու Վելիչկայում գտնվող 467 քառ. մ հողամասի անժամկետ օգտագործման իրավունքը: Անժամկետ օգտագործման իրավունքի վճարը եղել է տարեկան 392 PLZ, և տևողությունը սահմանվել է նվազագույնը՝ քառասուն և առավելագույնը՝ իննսունհինը տարի: Օգտագործման դիմաց ամբողջ վճարը, որը կազմել է 38.808 PLZ (PLZ 392x99 տարի), հաշվանցվել է 1980թ. սեպտեմբերին փորձագետի կողմից գնահատված արժեքի դիմաց:

2002թ. հունիսին Կառավարության կողմից նշանակված փորձագետը սահմանել էր, որ այդ գործարքի արժեքը կազմում է այն փոխհատուցման 2%-ը, որի իրավունքն ունեցել է դիմողի ընտանիքը (տես նաև ստորև՝ կետ 35):

19. Դիմողի մայրը մահացել է 1989թ. նոյեմբերի 3-ին: 1989թ. դեկտեմբերի 29-ին Կրակովի շրջանային դատարանը որոշում է կայացրել՝ հայտարարելով, որ դիմողը ժառանգել է իր մահացած մոր ամբողջ սեփականությունը:

20. 1992 թվականին, չպարզված ամսաթվին, դիմողը վաճառել է սեփականությունը, որն իր մայրն ստացել էր պետությունից 1981թ.:

21. 1992թ. սեպտեմբերի 15-ին դիմողը դիմել է Կրակովի շրջանային գրասենյակ (Urząd Rejonowy) իրեն տրամադրել Լվովում տատի թողած սեփականության դիմաց փոխհատուցման մնացորդը: Նա շեշտել է, որ իր մահացած մոր ստացած փոխհատուցելի սեփականության արժեքը եղել է զգալիորեն ցածր, քան սեփականության նախասկզբնական արժեքն էր:

22. 1993թ. հունիսի 16-ի նամակով Կրակովի շրջանային գրասենյակի քաղաքաշինության բաժանմունքը հայտնել է դիմողին, որ նրա դիմումը գրանցվել է համապատասխան գրանցամատյանում՝ R/74/92 համարի ներքո: Այդ նամակն այնուհետև շարադրվել է, մասնավորապես, հետևյալ կերպ.

«Մենք հարկ ենք համարում հայտնել Ձեզ, որ ներկայումս Ձեր պահանջի բավարարման որևէ հնարավորություն չկա... 1985թ. ապրիլի 29-ի Հողի կառավարման և հարկադիր օտարման մասին օրենքի 81 հոդվածը դարձել է՝ բոլոր գործնական նպատակներով, չգործող դրույթ՝ 1990թ. մայիսի 10-ի Տեղական ինքնակառավարման մասին օրենքի ընդունմամբ: Այդ Օրենքի ընդունումը հանգեցրել է նրան, որ հողերը Պետական գանձապետարանի Կրակովի մասնաճյուղից փոխանցվում են Կրակովի մունիցիպալիտետին: Հետևաբար, Կրակովյան շրջանային գրասենյակի ղեկավարը, որը, ըստ կիրարկելի դրույթների, պատասխանատու է փոխհատուցման տրամադրման համար, որևէ հնարավորություն չունի բավարարելու ներկայացված պահանջները: Ակնկալվում է, որ նոր օրենսդրությունը կնախատեսի փոխհատուցման այլ ձև: Մենք Ձեզ համապատասխանաբար կհայտնենք, որ Ձեր պահանջին կանդարդառճանք նրանից հետո, երբ նոր օրենքով կսահմանվի, ինչպես շարունակել հայրենադարձների կողմից ներկայացված դիմումների քննության կարգը»:

23. 1994թ. հունիսի 14-ին Կրակովի նահանգապետի գրասենյակը (Urząd Wojewodzki) հայտնել է դիմողին, որ Պետական գանձապետարանը չունի որևէ կալվածք՝ Նեման (Խոտոր) գետի ափին գտնվող տարածքներում թողնված սեփականության դիմաց որպես փոխհատուցում տրամադրելու համար:

24. 1994թ. օգոստոսի 12-ին դիմողը գանգատ է ներկայացրել Գերագույն վարչական դատարան՝ վիճարկելով Կառավարության անգործությունն՝ առ այն, որ նա Խորհրդարան չի ներկայացրել հայրենադարձված անձանց առնչվող օրինագիծ: Նա նաև խնդրել է փոխհատուցման տրամադրում՝ Պետական գանձապետական պարտավորագրի ձևով:

2. Փաստերը 1994թ. հոկտեմբերի 10-ից հետո

(a) Իրադարձություններ, որոնք տեղի են ունեցել մինչև 2002թ. դեկտեմբերի 19-ը, երբ Դատարանը գանգատը ընդունելի է հայտարարել

25. 1994թ. հոկտեմբերի 12-ին Գերագույն վարչական դատարանը մերժել է դիմողի գանգատը: Այն չի գտել պետական իշխանությունների կողմից որևէ անգոր-

ծության դրսևորում, այլ «փաստերից պարզվել է հակառակը, այն է՝ դիմողը Կրակովյան շրջանային գրասենյակից և Կրակովի նահանգապետի գրասենյակից ստացել է պատասխաններ»:

26. 1999թ. օգոստոսի 31-ին, Կառավարության 1998թ. հունվարի 13-ի որոշման ուժի մեջ մտնելու կապակցությամբ (տես նաև ստորև՝ կետեր 51-52), Կրակովյան շրջանային գրասենյակը՝ դիմողի փոխհատուցման մնացորդի համար 1992թ. սեպտեմբերի 15-ի պահանջը և համապատասխան գործը փոխանցել է Վելիչկայի քաղաքապետին (Starosta): Միևնույն ժամանակ, տեղական վարչական իշխանությունների բարեփոխումներից հետո նախկին Կրակովի մարզը (Wojewodztwo Krakowskie), որտեղ գտնվում է Վելիչկայի շրջանը, մեծացվել և վերանվանվել է «Մատոպոլսկա մարզ» (Wojewodztwo Matopolskie):

27. 2002թ. ապրիլի 11-ին Վելիչկայի քաղաքապետը կազմակերպել է մրցութային աճուրդ՝ Choragwica-ում գտնվող սեփականությունը Պետական գանձապետարանի կողմից վաճառելու համար: Աճուրդին մասնակցել է 17 անձ, որից բոլորը հայրենադարձներ էին կամ նրանց ժառանգներ: Դիմողը չի մասնակցել աճուրդին:

28. 2002թ. հուլիսի 5-ին Օմբուդսմենը՝ գործելով հայրենադարձված անձանց անունից, Սահմանադրության 191 հոդվածի հիման վրա՝ համակցված 188 հոդվածի հետ, դիմել է Սահմանադրական տրիբունալին՝ խնդրելով քննության առնել այն իրավական դրույթների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, որոնք սահմանափակել էին նրանց իրավունքների իրացման հնարավորությունը (տես նաև ստորև՝ 50, 55, 60 և 70-71 կետերը):

(b) Իրադարձությունները, որ տեղի էին ունեցել 2002 թ. դեկտեմբերի 19-ին և դրանից հետո

29. 2002թ. դեկտեմբերի 19-ին Սահմանադրական տրիբունալը քննության է առել Օմբուդսմենի դիմումը եւ բավարարել այն (տես նաև ստորև՝ 79-87 կետերը): Սահմանադրական տրիբունալի որոշումն ուժի մեջ է մտել 2003թ. հունվարի 8-ին:

30. 2003թ. հունվարի 8-ին Ձինվորական սեփականության գործակալությունը շրջանառության մեջ էր դրել պաշտոնական հաղորդագրություն, որը տեղակայվել էր նրա պաշտոնական վեբկայքում, և որը, մասնավորապես, շարադրված է հետևյալ կերպ.

«Սահմանադրական տրիբունալն իր՝ 2002թ. դեկտեմբերի 19-ի որոշման մեջ հայտարարել է, որ, ի թիվս այլոց, Ձինվորական սեփականության գործակալության կողմից ներկայացվող՝ Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս գտնվող հողերի իրացմանը վերաբերող դրույթները եղել են հակասահմանադրական:

Սակայն Սահմանադրական տրիբունալի որոշման կատարումը պահանջում է, որպեսզի 1997թ. Հողի կառավարման մասին օրենքը, 1996թ. մայիսի 30-ի օրենքը՝ Պետական գանձապետարանի և Զինվորական սեփականության գործակալության սեփականության որոշ մասերի կառավարման մասին, ինչպես նաև 2001թ. մայիսի 25-ի օրենքը՝ 2001-2006թթ. լեհական բանակի վերակառուցման, տեխնիկական արդիականացման և ֆինանսավորման մասին, պետք է փոփոխվեն:

Նաև անհրաժեշտ է փոփոխել 1995թ. փետրվարի 15-ի՝ Իրավաբանական անձանցից՝ Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս գտնվող տարածքներից հայրենադարձների պահանջների բավարարումից գանձվող եկամտահարկի մասին օրենքը:

Ստեղծված իրավիճակում Զինվորական սեփականության գործակալությունը կկարողանա կազմակերպել անշարժ գույքի վաճառքի համար աճուրդներ՝ գործող օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելուց հետո:

Աճուրդները կգովազդվեն մամուլում... և վեբկայքում (գործակալության)»:

Համաձայն գործակալության վեբկայքում զետեղված տեղեկատվության՝ 2002թ. այն իր տնօրինության ներքո ունեցել է երկու կարգի սեփականություն: Առաջինը եղել է անշարժ գույք, որն այլևս չի օգտագործվել ռազմական նպատակներով, եւ որը վաճառվել է աճուրդներում: Այն ներառել է 13.800 հեկտար հող և 4500 շենք՝ ամբողջը 1770000 քառ.մ մակերեսային տիրույթով: Այդ սեփականությունն ընդգրկել է ռազմական օդանավակայաններ, հիմքի (հողի) ստուգիչներ, հրացանի ձայնաչափարաններ, հիվանդանոցներ, բարաքներ, գրասենյակներ, հանգստի և մարզական կենտրոններ, շենքեր, կայաններ, արտադրամասեր, պահեստներ և այլն): Երկրորդ կարգի սեփականությունը միայն ժամանակավորապես չէր օգտագործվում բանակի կողմից: Այն ընդգրկում էր 650 հեկտար հող և շենքեր՝ ամբողջը 100000 քառ.մ մակերեսային տիրույթով:

31. 2003թ. հունվարի 8-ին Պետական գանձապետարանի գյուղատնտեսական սեփականության գործակալությունը, մարմին, որն այն ժամանակ կառավարել է Պետական գանձապետարանի սեփականության գյուղատնտեսական ռեսուրսները (տես նաև ստորև՝ կետ 91), շրջանառության մեջ է դրել նմանատիպ պաշտոնական հաղորդագրություն, որը տեղակայվել է նրա պաշտոնական վեբկայքում, ինչը ներկայացվել է հետևյալ կերպ.

«Սահմանադրական տրիբունալի՝ Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս գտնվող հողերի դիմաց փոխհատուցումը կանոնակարգող դրույթների սահմանադրականության վերաբերյալ 2002թ. դեկտեմբերի 19-ի որոշումն ուժի մեջ է մտել 2003թ. հունվարի 8-ին:

Որպես Տրիբունալի որոշման հետևանք՝ անհրաժեշտ է փոփոխել հողի կառավարմանը վերաբերող դրույթները: Որոշումն ինքնին չի ստեղծում նոր իրավական ռեժիմ և չի կարող հիմք հանդիսանալ, որպեսզի Պետական սահմանից դուրս մնացած սեփականության արժեքը հակադրվի Պետական գանձապետարանի գյուղատնտեսական սեփականության գնին: Ուստի

պետք է սահմանվեն դրան առնչվող սկզբունքները, պայմանները և ընթացակարգը: Այդպիսի գործողություններ արդեն իսկ ձեռնարկվել են Բնակարանային և քաղաքային զարգացման նախարարության գրասենյակի և Գանձապետարանի կողմից:

Ստեղծված իրավիճակում այդ Գործակալությունը ձեռնպահ է մնում անշարժ գույքի՝ որպես իր ռեսուրսներում պահպանվող գյուղատնտեսական սեփականության, վաճառքի համար աճուրդների կազմակերպումից, բացառությամբ մանր հողակտորների:

Գործակալության որոշումը կոչված է երաշխավորելու Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս գտնվող տարածքներից հայրենադարձված դիմողների պահանջների բավարարումը՝ բոլոր դիմողների համար հավասար պայմաններով»:

32. Մինչև 2003թ. տարեվերջը վերոնշյալ գործակալություններից և՛ ոչ մեկը չվերականգնեց աճուրդները: Սույն վճռի ընդունման օրը Զինվորական սեփականության գործակալության վեբկայքը դեռևս պահպանում էր, անփոփոխ, աճուրդները դադարեցնելու վերաբերյալ 2003թ. հունվարի 8-ի պաշտոնական հայտարարությունը:

2004թ. փետրվարի 2-ին, այն բանից հետո երկու օր անց, երբ ուժի մեջ էր մտել Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս գտնվող տարածքներից հայրենադարձների պահանջներին վերաբերող նոր օրենսդրությունը (տես ստորև՝ 114-119 կետերը), Գյուղատնտեսական սեփականության գործակալությունը՝ (Agencja Nieruchomosci Rolnych), մարմին, որն այդ ժամանակ փոխարինում էր Պետական գանձապետարանի Գյուղատնտեսական սեփականության գործակալությանը (տես նաև ստորև՝ կետ 91), 2003թ. հունվարի 8-ի պաշտոնական հայտարարությունը հանեց իր վեբկայքից և տեղադրեց «Նեման (Խոտոր) գետի մարդկանց համար տեղեկատվություն» վերտառությամբ հայտարարություն («Informacja dla zabuzan»)՝ ներկայացնելով նոր օրենքի գործողության վերաբերյալ մանրամասն պարզաբանում:

33. Մինչույն ժամանակ, 2003թ. գարնանը և ամռանը, «Նեման (Խոտոր) գետի պահանջները» կարգավորելուն նպատակաուղղված օրինագծի մշակման ընթացքում (այսուհետ՝ «Կառավարական օրինագիծ») (տես նաև ստորև՝ 111-113 կետերը) Կառավարությունը հաշվարկել էր դիմողների թիվը և վնասապահանջների արժեքը: Ըստ Կառավարության՝ առկա էին 4120 գրանցված դիմումներ, որոնցից 3910-ը եղել էր ստուգված և գնահատված օրենքով սահմանված կարգով: Գրանցված պահանջները գնահատվել էին 3 միլիարդ լեհական նոր զլոտի (PLN): Եղել են նաև գրանցման սպասող 82740 չստուգված դիմումներ, որոնցից 74740-ը՝ հավանական գրանցման ենթակա: Իրավունք ունեցող անձանց սպասվելիք ընդհանուր թվաքանակը 78380 էր: Քանի որ Կառավարության օրինագծի շուրջ խորհրդարանական բանավեճերը, բանավեճեր, որոնք լայնորեն քննարկվել էին ամենուր՝ լեհական ԶԼՄ-ներով, աստիճանաբար զարգացան, Նեման (Խոտոր) գետին առնչվող դիմումների թիվն սկսել էր աճել, արդյունքում նոր դիմումներ էին գրանցվել:

34. Կառավարության կողմից պատրաստված վիճակագրական հաղորդումները, մասնավորապես՝ Գանձապետական նախարարության (Ministerstwo Skarbu Panstwa) և Ենթակառուցվածքների նախարարության (Ministerstwo infrastruktury) կողմից, մինչ օրս չեն անդրադարձել այն հարցին, թե Նեման (Խոտոր) գետի առնչությամբ դիմողներից քանիսն է երբևէ ստացել որևէ փոխհատուցում, և եթե այդպիսին եղել է, ապա դա եղել է լիովին, թե՛ մասամբ, և նրանցից քանիսը դեռևս ընդհանրապես ոչինչ չի ստացել:

Նեման (Խոտոր) գետին առնչվող դիմումների գրանցամատյան պահելու գաղափարը ծագել էր Կառավարության օրինագծի մշակման ընթացքում, և այդպիսի գրանցամատյանը պետք է պահպանվեր նաև ապագայում: Սակայն պատշաճ տվյալներ հավաքելու անհրաժեշտությունն ըմբռնել էր արդեն Ենթակառուցվածքների նախարարը՝ 2002թ. հուլիսին, երբ նա պատասխանել էր Խորհրդարանի անդամ Յ. Գ.-ի հարցին, մասնավորապես՝ տեղակալի բառերով. «Լեհական պետության պարտավորությունների վերջնական կատարումն այն մարդկանց հանդեպ, ովքեր Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո իրենց անշարժ գույքը թողել են արևելյան սահմանից այն կողմ»: Իր պատասխանում նախարարը հայտարարել է, որ ի թիվս այլնի.

«Ի պատասխան չբավարարված պահանջների թվաքանակին վերաբերող հարցին, հարկ է նշել, որ այն Կառավարության կողմից հաշվարկվել է 1990-ականների սկզբներին և եղել է մոտավորապես 90 000 այդպիսի դիմում: Ներկայումս խիստ դժվար է այդպիսի հաշվարկ կատարելը... Գործնականում, յուրաքանչյուր օրինական իրավահաջորդ (Նեման (Խոտոր) գետի դիմողների) կարող է վկայական ստանալ - ներկայումս, որոշում՝ լքված սեփականության բաժնեմասի (իրավունքի հաստատման): Որո՞նք պետք է լինեն այն չափանիշները, համաձայն որոնց կհաշվարկվի բավարարված և չբավարարված դիմումների թիվը: Արդյոք դա պետք է լինի ներկայացված դիմումների թիվը, ներառյալ՝ օրինական իրավահաջորդների դիմումները մեկ սեփականության առնչությամբ, որը թողել է մեկ սեփականատեր (ժառանգատու), կամ էլ դա պետք է լինի Պետական սահմանից այն կողմ մնացած սեփականությունների թիվը»:

Նաև դժվար է հաշվարկել այն անձանց թիվը, որոնց իրավունքն իրացվել է, առավել ևս, որ իրավունքի իրացումը կարող է տեղի ունենալ ողջ երկրով մեկ, և հաճախ է պատահում, որ այն մասնակիորեն իրացված լինի տարբեր մարզերում, քանի դեռ լիովին չի իրացվել: Այդ իրավիճակն ստեղծում է այնպիսի պայմաններ, որոնցում իրավունքն իրացրած անձինք կարող են չարաշահել իրենց իրավունքները - փաստ, որի վերաբերյալ նահանգապետները և քաղաքապետները տեղեկացրել են մեզ: Նրանք, հետևաբար, առաջարկում են, որպեսզի պահվի փոխհատուցման ենթակա սեփականության իրավունքը հավաստող վկայականների գրանցամատյան: Ներկայումս, սակայն, չկա որևէ միասնական (առանձին), համակողմանի համակարգ՝ դիմողներին (փոխհատուցման ենթակա սեփականության) տրվող վկայականների և որոշումների գրանցման համար:

Յետևաբար, պատգամավորի այն հարցի պատասխանը, թե ինչպես պետք է բավարարվեն (Նեման (Խոտոր) գետի դիմումները եւ ինչ իրավական լուծումներ են հնարավոր, կախված է բավարարված դիմումների թվի վերաբերյալ վստահելի տեղեկատվությունից: Եթե պարզվի, որ այդ թիվը զգալի է, և որ ոչ բոլոր դիմումները կարող են բավարարվել համաձայն կիրառելի օրենքի, ապա պետք է գտնվեն այլ օրենսդրական լուծումներ - որը, սակայն, դժվար կլինի՝ նկատի ունենալով Պետության տնտեսական և ֆինանսական հիմնախնդիրները»:

35. 2003թ. հունիսի 12-ին Կառավարությունը ներկայացրել է իր կողմից նշանակված փորձագետի գնահատող եզրակացությունը: Այդ եզրակացությունը կազմվել էր 2002թ. հունիսի 14-ին: Այն սեփականության արժեքը, որը դիմողի տատը ստիպված է եղել լքել, գնահատվել էր 390.000 PLN: Փորձագետը հայտարարել է, որ դիմողի ընտանիքը մինչ օրս ստացել է անհրաժեշտ փոխհատուցման 2 %-ը:

36. 2003թ. հոկտեմբերի 28-ին Վելիչկայի քաղաքապետը կազմակերպել է մրցույթ-աճուրդ Matopolska մարզի Choragwica-ում և Niepotomice-ում գտնվող սեփականության վերաբերյալ, որը վաճառվել էր Պետական գանձապետարանի կողմից: Պահուստային գներն էին համապատասխանաբար 150.000 PLN և 48.000 PLN: Աճուրդին մասնակցել էին Նեման (Խոտոր) գետի մի քանի դիմողներ: Առաջին սեփականությունը վաճառվել էր 900.000 PLN-ով, երկրորդը՝ 425.000 PLN-ով: Դիմողը չէր մասնակցել այդ աճուրդներին:

37. 2004թ. հունվարի 30-ին Լեհական պետության գոյություն ունեցող սահմանից այն կողմ մնացած սեփականության արժեքը Պետական սեփականության արժեքի կամ անժամկետ օգտագործման իրավունքի դիմաց վճարի հետ համադրելու մասին 2003թ. դեկտեմբերի 12-ի օրենքի հիման վրա (Ustawa o zaliczaniu na poczet ceny sprzedazy albo optat z tytutu uzytkowania wieczystego nieruchomosci Skarbu Panstwa wartosci nieruchomosci pozostawionysh poza obecnymi granicami Panstwa Polskiego) («2003թ. դեկտեմբերի օրենք»), պետության պարտավորություններն այն անձանց հանդեպ, որպիսին դիմողն է, որոնք ստացել են որոշ փոխհատուցումային սեփականություն, համաձայն նախորդ օրենքների՝ համարվում են կատարված (տես նաև ստորև՝ կետ 116):

38. 2004թ. հունվարի 30-ին Խորհրդարանի 51 անդամ՝ «Քաղաքացիական ծրագիր» (Platforma Obywatelska) ընդդիմադիր կուսակցության կողմից, դիմել են Սահմանադրական տրիբունալ՝ վիճարկելով 2003թ. դեկտեմբերի օրենքի բազմաթիվ դրույթներ (տես նաև ստորև՝ կետ 120):

C. Ներպետական համապատասխան օրենսդրությունը և պրակտիկան

1. Միջազգային համաձայնագրերով նախատեսված՝ հայրենադարձված անձանց փոխհատուցում տրամադրելու պարտավորություն

39. Հանրապետական համաձայնագրերից (տես վերը՝ կետ 11) յուրաքանչյուրում նախատեսված են համանման դրույթներ: Յուրաքանչյուր համաձայնագրի 3-րդ հոդվածը սահմանել է այն սեփականության և՛ ձևին, և՛ չափին վերաբերող դրույթներ, որը հայրենադարձած անձինք տարահանումից հետո կարող են վերցնել իրենց հետ, և պարտավորեցրել է Պայմանավորվող կողմերին նրանց հատուցել այն սեփականության արժեքը, որը նրանք հարկադրված էին թողնել:

40. Ազգային ազատագրության լեհական կոմիտեի և Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կառավարության միջև 1944 թվականի սեպտեմբերի 9-ի՝ Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության տարածքից՝ Լեհաստանի քաղաքացիների և Լեհաստանի տարածքից՝ Ուկրաինայի քաղաքացիների տարահանման մասին համաձայնագրի 3-րդ հոդվածը («համապատասխան Հանրապետական համաձայնագիր») շարադրված է հետևյալ կերպ.

«2. Տարահանվածներին կթույլատրվի իրենց հետ վերցնելու հագուստ, կոշիկ, վերարկու, անկողնային պարագաներ, սննդամթերք, կենցաղային ապրանքներ, գյուղատնտեսական արտադրանքի պաշար, փրկագոտիներ և կենցաղային ու գյուղատնտեսական օգտագործման այլ առարկաներ, մեկ ընտանիքի համար մինչև լիարժեք 2 մետրական տոննայի չափով, ինչպես նաև տարահանվող ֆերմային պատկանող ցանկացած եղջերավոր անասուն և ընտանի թռչուն:

3. Որոշակի մասնագիտության անձինք, ինչպիսիք են բանվորները, արհեստագործները, բժիշկները, նկարիչները և գիտնականները պետք է ստանան իրենց հետ իրենց մասնագիտական աշխատանքը կատարելու համար անհրաժեշտ իրեր վերցնելու իրավունք:

4. Տարահանման ժամանակ չի թույլատրվում վերցնել հետևյալը.

(a) կանխիկ դրամ, թղթադրամ և ցանկացած տեսակի ոսկյա ու արծաթյա մետաղադրամներ, բացառությամբ լեհական թղթադրամի՝ առավելագույնը մեկ անձի համար 1000 գլոտիի չափով, կամ Խորհրդային արտարժույթ՝ մեկ անձի համար առավելագույնը 1000 ռուբլի,

(b) ոսկի և պլատին՝ ձուլվածքի, փոշու կամ թափոնի ձևով,

(c) թանկարժեք քարեր՝ չմշակված ձևով,

(d) արվեստի և հնարժեք ստեղծագործություններ՝ ցանկացած դեպքում, երբ դրանք կազմում են հավաքածուներ կամ նույնիսկ անհատական իր, եթե դրանք տարահանվածի ընտանեկան սեփականությունը չեն,

(e) հրագեն (բացառությամբ որսորդական հրացանի) և ռազմական սարքավորումներ,

(f) լուսանկարներ (ոչ անձնական լուսանկարներ), գեղապատկերներ և քարտեզներ,

(g) ավտոմոբիլներ և մոտոցիկլետներ,

(h) կահույք՝ երկաթուղով կամ ավտոմեքենայով, պատերազմի հետևանքով առաջացած հիմնախնդիրների պատճառով:

...

6. Տարահանումից հետո թողնված շարժական, ինչպես նաև անշարժ գույքի արժեքը պետք է հատուցվի տարահանված անձին՝ ապահովագրության գնահատումների հիման վրա, Լեհաստանում և Ուկրաինայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում գործող օրենքներին համապատասխան: Ապահովագրության գնահատման բացակայության դեպքում շարժական և անշարժ գույքի արժեքը պետք է գնահատվի Լիազորված ներկայացուցիչների և Կողմերի ներկայացուցիչների կողմից: Պայմանավորվող կողմերը պետք է երաշխավորեն, որ վերաբնակեցման հետևանքով ազատված քաղաքային և գյուղական շենքերն առաջնայնության հիման վրա մատչելի են դառնում վերաբնակեցված անձանց համար»:

41. 1952թ. հուլիսի 21-ին Լեհաստանի Հանրապետության կառավարությունը և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության, Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության, Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության և Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կառավարությունները կնքեցին համաձայնագիր՝ բնակչության խմբերի տարահանման հետ կապված ֆինանսական գործարքների փոխադարձ կարգավորման և լեհ-խորհրդային պետական սահմանի սահմանման վերաբերյալ:

1952թ. պայմանագրի 2-րդ հոդվածը նախատեսում էր.

«Լեհ-խորհրդային պետական սահմանի սահմանման կապակցությամբ Լեհաստանի Հանրապետության և ԽՍՀՄ-ի տարածքից տարահանված և վերաբնակեցված անձանց և ընտանիքների կողմից Լեհաստանի Հանրապետության և ԽՍՀՄ-ի տարածքում թողնված շարժական և անշարժ գույքի, գյուղատնտեսական արտադրանքի հետ կապված ֆինանսական գործարքների լիարժեք և վերջնական փոխադարձ կարգավորման նպատակով Լեհաստանի Հանրապետության կառավարությունը նախատեսում է ԽՍՀՄ կառավարությանը վճարել 76 (յոթանասունվեց) միլիոն ռուբլի»:

42. 1946 թվականից մինչ օրս Լեհաստանի օրենքը նախատեսել է, որ՝ Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս տարածքներից հայրենադարձներն իրավունք ունեն ստանալու Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով թողած սեփականության արժեքը կամ հատուցում՝ անժամկետ օգտագործման իրավունքի համար վճարի դիմաց, կամ Պետական գանձապետարանից գնված անշարժ գույքի գնի դիմաց:

43. Այդ դրույթը կրկնվել է մի քանի օրենքներում, սկսած 1946թ. դեկտեմբերի 6-ի՝ Վերականգնված տարածքներում եւ նախկին ազատ քաղաք Գդանսկում ոչ գյուղատնտեսական հողերը Պետությունից փոխանցելու մասին (Decret o

przekazywaniu przez Państwo mienia nierolniczego na obszarze Ziemi odzyskanych ' Woinego Miasta- Gdanska):

Այսպես կոչված՝ «Վերականգնված տարածքները» («Zienie Odzyskane») եղել են նախկին գերմանական տարածքներ՝ Օդեր-Նիսա գծից դեպի արևելք, որից-Ստալինի առաջարկի հիման վրա - հաղթական Ռաշնակիցները որպես փոխհատուցում տվեցին լեհերին՝ նախկին ԽՍՀՄ-ի կողմից վերցված՝ «Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս տարածքների» դիմաց:

Այն ժամանակ իշխանությունների կողմից վարվող քաղաքականության համաձայն՝ «Վերականգնված տարածքները» և Գդանսկը, այդտեղ ապրող գերմանացիների արտաքսումից հետո, նախատեսվեցին «Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս», այսինքն՝ Քուրզոնի գծի տարածքից հայրենադարձած Լեհաստանի քաղաքացիների տեղավորման համար: Հայրենադարձներն ունեին հողի գնման նախապատվության իրավունք:

44. Այնուհետև դեկրետներ և օրենքներ ընդունվել են 1952 և 1991թթ. միջակայքում:

1990-ականներին, սակայն, իշխանությունները ձեռնամուխ եղան միասնական օրենքի ընդունման հնարավորության խնդրի քննարկմանը, որը պետք է առնչվեր սեփականության իրավունքի բոլոր ձևերի վերականգնմանը, ներառյալ հայրենադարձների թողած սեփականության դիմաց փոխհատուցման պահանջները (տես նաև ստորև՝ կետեր 62-65):

45. Ի վերջո, բացառապես Նեման (Խոտոր) գետին առնչվող պահանջներին վերաբերող օրենքը (2003թ. դեկտեմբերի օրենքը) ուժի մեջ է մտել 2004թ. հունվարի 30-ին (տես նաև վերը՝ կետ 37 և ստորև՝ կետեր 114-119):

2. Հողի կառավարման և հարկադիր օտարման մասին 1985թ. ապրիլի 29-ի օրենքը և դրա հետ կապված հրամանագիրը

(a) 1985թ. օրենքը

46. 1985թ. ապրիլի 29-ից մինչև 1998թ. հունվարի 1-ը Պետական գանձապետարանին և մունիցիպալիտետին պատկանող հողերի կառավարման հարցերը կարգավորվում էին 1985թ. ապրիլի 29-ի՝ Հողի կառավարման եւ հարկադիր օտարման մասին օրենքով («1985թ. Հողի կառավարման օրենք»):

Այդ օրենքի 81-րդ բաժինն առնչվում է «Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս տարածքներում» թողնված սեփականության դիմաց փոխհատուցում ստա-

նալու իրավունքին: 1994թ. հոկտեմբերի 10-ից մինչև 1997թ. դեկտեմբերի 31-ը կիրառված տարբերակում այն շարադրված է հետևյալ կերպ.

«1. Այն անձինք, ովքեր 1939թ. սկսված պատերազմի պատճառով թողել են անշարժ գույք այն տարածքներում, որոնք ներկայումս չեն պատկանում Լեհական պետությանը, և ովքեր Պետության կողմից կնքված միջազգային համաձայնագրերի հիման վրա արտասահմանում թողած իրենց սեփականության դիմաց պետք է ստանան համարժեք փոխհատուցում, պետք է ստանան այն անշարժ գույքի արժեքը, որը թողել են կամ անժամկետ օգտագործման համար վճարի դիմաց կամ շինարարական հրապարակի և ցանկացած շենքի, դրանից հետո այդտեղ գտնվող շենքերի կամ շինությունների գնի դիմաց:

...

4. Արտասահմանում թողնված անշարժ գույքի սեփականատիրոջ մահվան դեպքում, 1-ին ենթաբաժնում նշված իրավունքը պետք է վերապահվի նրա բոլոր ըստ օրենքի ժառանգներին՝ համատեղ, կամ իրավասու անձի կողմից որոշվող մեկ ժառանգի:

5. Արտասահմանում թողնված անշարժ գույքի արժեքի հատուցումը, ինչպես սահմանված է 1-ին ենթաբաժնում, պետք է իրականացվի դրա իրավունքն ունեցող անձի դիմումի հիման վրա...»:

(b) 1985թ. որոշումը

47. Մանրամասն դրույթներ են շարադրված Կառավարության 1985թ. սեպտեմբերի 16-ի (որպես փոփոխություն)՝ Յոդի անժամկետ օգտագործման իրավունքի համար վճարի դիմաց կամ դրանից հետո այդտեղ գտնվող շինարարական հրապարակի և շենքերի գնի դիմաց՝ արտասահմանում թողնված անշարժ գույքի արժեքի հատուցման որոշման մեջ («1985թ. որոշում»):

1985թ. որոշման 3-րդ կետը շարադրված է հետևյալ կերպ.

«Եթե սեփականության (արտասահմանում թողած) արժեքը գերազանցում է այն անշարժ գույքի գինը, որը վաճառվել է..., ապա հավելյալ արժեքը կարող է հատուցվել հողի անժամկետ օգտագործման իրավունքի համար վճարի դիմաց կամ էլ արդյունաբերական կամ առևտրային գործունեություն ծավալելու նպատակով օգտագործվող հողամասի գնի կամ ցանկացած առևտրային, կամ փոքր գործարարության, դրանից անմիջապես հետո այդտեղ գտնվող շենքերի, որոնք օգտագործվում են որպես արտադրամասեր, ատելյենների, հանգստյան տների կամ ավտոտնակների գնի դիմաց»:

5-րդ կետը նախատեսում է, որ պետական կառավարման տեղական առաջին ատյանի մարմինը, որն իրավասու է զբաղվելու քաղաքի և գյուղի պլանավորման հարցերով, պետք է կայացնի արտասահմանում թողած սեփականության արժեքի հատուցման վերաբերյալ որոշում: 6-րդ կետը սահմանել է այդպիսի սեփականության գնահատմանը վերաբերող մանրամասն դրույթներ:

3. 1997թ. օգոստոսի 21-ի՝ Հողի կառավարման օրենքը և դրա հետ կապված որոշումը

(a) 1997թ. Հողի կառավարման օրենքը

48. 1998թ. հունվարի 1-ին 1985թ. Հողի կառավարման օրենքը չեղյալ է հայտարարվել, և ուժի մեջ է մտել 1997թ. օգոստոսի 21-ի՝ Հողի կառավարման օրենքը (Ustawa o gospdarce nieruchomosciami) («1997թ. Հողի կառավարման օրենքը»):

Հայրենադարձներին փոխհատուցում տրամադրելու պարտավորությունը զետեղված էր 212-րդ բաժնում, որը բովանդակում էր 1985թ. չեղյալ հայտարարված Օրենքի 81-րդ բաժնում նախատեսված պայմանները: 212-րդ բաժինը, իր համապատասխան մասում, նախատեսում է հետևյալը.

«1. Այն անձինք, ովքեր 1939թ. սկսված պատերազմի պատճառով թողել են անշարժ գույք այն տարածքներում, որոնք ներկայումս չեն պատկանում Լեհական պետությանը, և ովքեր Պետության կողմից կնքված միջազգային համաձայնագրերի հիման վրա արտասահմանում թողած իրենց սեփականության դիմաց պետք է ստանան համարժեք փոխհատուցում, պետք է ստանան այն անշարժ գույքի արժեքը, որը թողել են կամ անժամկետ օգտագործման համար վճարի դիմաց կամ շինարարական հրապարակի և ցանկացած շենքի, դրանից հետո այդտեղ գտնվող շենքերի կամ շինությունների գնի դիմաց:

...

4. Արտասահմանում թողնված անշարժ գույքի սեփականատիրոջ մահվան դեպքում, 1-ին ենթաբաժնում նշված իրավունքը պետք է վերապահվի նրա բոլոր ըստ օրենքի ժառանգներին՝ համատեղ, կամ իրավասու անձի կողմից որոշվող մեկ ժառանգի:

5. Արտասահմանում թողնված անշարժ գույքի արժեքի հատուցումը, ինչպես սահմանված է 1-ին ենթաբաժնում, պետք է իրականացվի դրա իրավունքն ունեցող անձի դիմումի հիման վրա...»:

2. Եթե արտասահմանում թողնված անշարժ գույքի արժեքը գերազանցում է 1-ին ենթաբաժնում նշված համարժեք փոխհատուցման միջոցով ձեռք բերված գույքի արժեքը, մնացած գումարը կարող է հատուցվել առեւտրային նպատակներով օգտագործվող հողի եւ շինության արժեքի կամ դրանց անժամկետ օգտագործման համար նախատեսված վճարի դիմաց:

49. Սակայն 213-րդ բաժնում ամրագրված է.

«Սույն Օրենքի 204-212-րդ բաժինները չեն վերաբերում Պետական գանձապետարանի Գյուղատնտեսական սեփականության պաշարներին, եթե այդ պաշարների կառավարմանը վերաբերող այլ պայմաններ չեն նախատեսված»:

50. 2002թ. հուլիսի 5-ին Օմբուդսմենը դիմել է Սահմանադրական տրիբունալ՝ վիճարկելով 1997թ. Հողի կառավարման օրենքի 212 (1) բաժնի և 213-րդ բաժնի սահմանադրականությունը (տես նաև վերը՝ կետ 28 և ստորև՝ կետեր 55, 60 և 70-71):

(b) 1998թ. որոշումը

51. 1997թ. Հողի կառավարման օրենքի 212-րդ բաժնի կիրարկման կարգը սահմանվել է Արտասահմանում թողնված անշարժ գույքի արժեքի՝ անշարժ գույքի իրավունքի արժեքի կամ անժամկետ օգտագործման համար վճարի դիմաց փոխհատուցման եւ այդ գույքի գնահատման մեթոդների մասին Կառավարության 1998թ. հունվարի 13-ի որոշմամբ («1998թ. որոշում»):

52. 1998թ. որոշման 4 (1) կետն ամրագրում է, որ խնդրո առարկա փոխհատուցումը պետք է կատարվի իրավասու անձի դիմումի հիման վրա: Դիմումը պետք է տրվի այն մարզի մարզպետին, որտեղ տվյալ անձը բնակվել է: Մարզպետը պետք է պահի հայրենադարձած անձանց դիմումների գրանցամատյան:

5 (1) կետի համաձայն՝ մարզպետը պետք է 30 օրվա ընթացքում կայացնի արտասահմանում թողնված անշարժ գույքի արժեքը սահմանող որոշում: Այդպիսի որոշման կայացման դեպքում հայրենադարձների պահանջների բավարարման համար պատասխանատու մարմինները չեն կարող մերժել փոխհատուցման կատարումը (կետ 6):

Գործնականում, որպես փոխհատուցում տրվող սեփականության իրավունքի կամ անժամկետ օգտագործման իրավունքի ձեռքբերումը կարող է տեղի ունենալ միայն համապատասխան հանրային իշխանության կողմից կազմակերպվող մրցույթ-աճուրդին մասնակցելու միջոցով: Հայրենադարձված անձանց չէր վերապահվում Պետությունից հողի գնման առաջնայնություն:

1998թ. որոշման 12-րդ կետում ամրագրված անցումային դրույթներով սահմանված էր, որ նախորդ դրույթների համաձայն սկսված և չավարտված վարույթները պետք է անցկացվեն այդ նոր որոշմանը համապատասխան:

4. 1990թ. մայիսի 10-ի՝ Տեղական ինքնակառավարման օրենքը

53. Պետության վարչակազմի կառուցվածքային վերակազմավորմանն ուղղված օրենսդրական միջոցներն էապես նվազեցրին Պետական գանձապետարանի հողային պաշարները:

1990թ. մայիսի 10-ի՝ Տեղական ինքնակառավարման օրենքը («1990թ. օրենք»), որն ուժի մեջ է մտել 1990թ. մայիսի 27-ին, և այդ ժամանակ ընդունված հարակից այլ օրենքները վերականգնեցին մունիցիպալիտետները և նրանց վերապահեցին նախկինում պետական կառավարման տեղական մարմինների կողմից իրականաց-

վող լիազորությունները: Այն ներառում էր հանրային հողերի նկատմամբ վերահսկողությունը և Պետական գանձապետարանի հողերի մեծ մասի փոխանցումը մունիցիպալիտետներին:

1990թ. օրենքի 5(1) բաժնին համապատասխան նախկինում Պետական գանձապետարանի կողմից տնօրինվող և մունիցիպալիտետի վարչական տարածքում գտնվող հողերի սեփականության իրավունքը փոխանցվել էր մունիցիպալիտետին:

Քանի որ Նեման (Խոտոր) գետի առնչությամբ դիմողները կարող էին պահանջ ներկայացնել միայն պետական սեփականության հանդեպ և ոչ տեղական ինքնակառավարման մարմինների սեփականության, ապա դա հանգեցրել էր նրանց պահանջները բավարարելու համար անհրաժեշտ հողի պակասի:

5. 1991թ. հոկտեմբերի 19-ի՝ Պետական գանձապետարանի գյուղատնտեսական սեփականության կառավարման մասին օրենքը

54. Մինչև 1994թ. հունվարի 19-ը հայրենադարձած անձինք կարող էին փորձել ստանալու սեփականություն Պետական գանձապետարանի գյուղատնտեսական սեփականության պաշարներից՝ համաձայն 1991թ. հոկտեմբերի 19-ի՝ Պետական գանձապետարանի գյուղատնտեսական սեփականության կառավարման մասին օրենքի դրույթների («1991թ. օրենք»): Սակայն, այդ օրը, 1993թ. դեկտեմբերի 29-ի՝ Պետական գանձապետարանի գյուղատնտեսական սեփականության կառավարման մասին օրենքի և այլ օրենքների փոփոխությունների մասին օրենքի ուժի մեջ մտնելով՝ այդ հնարավորությունը բացառվեց:

1993թ. փոփոխությունների 17-րդ բաժինը շարադրված է հետևյալ կերպ.

«Քանի դեռ այն անձանց սեփականության կորստի դիմաց փոխհատուցման ձևերը և սեփականության վերականգնման պայմանները, ովքեր ըստ 1985թ. Հողի կառավարման օրենքի 81-րդ բաժնի հայցել են 1939թ. սկսված պատերազմի հետևանքով արտասահմանում թողնված անշարժ գույքի հատուցում, չեն սահմանվել ինքնավար օրենքով, այդպիսի որևէ հատուցում չի կարող կատարվել Պետական գանձապետարանի սեփականության պետական պաշարներում պահպանվող սեփականության գնի դիմաց»:

55. 2002թ. հուլիսի 5-ին Օմբուդսմենը 1993թ. փոփոխությունների 17-րդ բաժնի սահմանադրականության հարցով դիմել է Սահմանադրական տրիբունալ (տես նաև վերը՝ կետեր 28 ու 50, և ստորև՝ կետեր 60 ու 70-71):

6. 1994թ. հունիսի 10-ի՝ Պետական գանձապետարանի կողմից Ռուսաստանի Դաշնության բանակից ընդունված անշարժ գույքի կառավարման մասին օրենքը

56. Այդ օրենքը («1994թ. օրենք») ուժի մեջ է մտել 1994թ. հունիսի 23-ին: 4-րդ բաժնին համապատասխան՝ մեկնաբանելով 16-րդ բաժնի հետ համակցված, սահմանում է, որ հայրենադարձած անձանց պետք է նախապատվություն տալ այդպիսի սեփականության ձեռքբերման հարցում:

57. Բանավոր լուծման ժամանակ Կառավարությունն ընդունել է, որ իրականում Ռուսաստանի Դաշնության բանակի թողած սեփականության պաշարներն արդեն սպառվել են:

7. 1996թ. մայիսի 30-ի՝ Պետական գանձապետարանի և Զինվորական սեփականության գործակալության սեփականության որոշ մասերի կառավարման մասին օրենքը (փոփոխված)

58. 1996թ. օգոստոսի 26-ին ուժի մեջ մտած այդ օրենքն («1996թ. օրենք») առնչվում է Պետությանը պատկանող զինվորական սեփականության, ներառյալ՝ հողը, արդյունաբերական սեփականությունը, հյուրանոցները, բնակելի և առևտրային շենքերը, կառավարմանը: Զինվորական սեփականության գործակալությունը կարող է կազմակերպել անշարժ գույքի վաճառքի համար մրցույթ-աճուրդ:

59. Մինչև 2002թ. հունվարի 1-ը, համաձայն 1996թ. օրենքի ընդհանուր դրույթների, հայրենադարձած անձինք կարող էին փորձել որպես փոխհատուցում ստանալու սեփականություն՝ այդպիսի աճուրդների մասնակցելու միջոցով: Բայց մյուս դիմողների նկատմամբ որևէ առաջնայնության իրավունք չունեին: Սակայն 2001թ. դեկտեմբերի 21-ի՝ Կառավարության կազմավորման ու աշխատանքի և նախարարների լիազորությունների մասին օրենքի և Գործադիր իշխանության ճյուղերի մասին օրենքի ու այլ օրենքների փոփոխությունների մասին օրենքի ուժի մեջ մտնելով («2001թ. փոփոխություններ»)՝ իրադրությունը փոխվել էր: Այդ պահից սկսած Գործակալության կողմից կառավարվող ոչ մի սեփականություն չէր կարող նախատեսվել Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս գտնվող տարածքներում թողնված սեփականության դիմաց փոխհատուցում տրամադրելու նպատակով:

1996թ. օրենքի փոփոխված 31 (4) բաժինը շարադրված է հետևյալ կերպ.

«1997թ. օգոստոսի 21-ի՝ Հողի կառավարման օրենքի 212-րդ բաժինը չի վերաբերում այդ օրենքի 1(1) բաժնուն նշված սեփականությանը»:

«Սեփականությունը» վերջին դրույթի շրջանակներում-Պետական գանձապետարանի սեփականությունն է, որը կառավարվում է կամ օգտագործվում է ցանկացած իրավաբանական անձի կողմից, որը ենթարկվում է Ազգային պաշտպանության նախարարին կամ վերահսկվում նրա կողմից, և որը չի սպասարկում այդպիսի իրավաբանական անձի գործառնական նպատակները»: Այն, օրինակ, ներառում է հողը, առևտրային և արդյունաբերական սեփականությունը, բնակարանները, մարզական սպասարկման միջոցները և այլն:

60. 2002թ. հուլիսի 5-ին Օմբուդսմենը դիմել է Սահմանադրական տրիբունալ՝ վիճարկելով 1996թ. օրենքի 31 (4) բաժնի սահմանադրականությունը (տես նաև վերը՝ կետեր 28, 50, և ստորև՝ կետեր 70-71):

61. Սակայն մինչև 2001թ. փոփոխությունների ուժի մեջ մտնելը, Ջինվորական սեփականության գործակալության ղեկավարությունը հրապարակել էր հայրենադարձված անձանց դիմումների մշակմանը վերաբերող հրահանգ: Այդ փաստաթղթի համապատասխան մասը շարադրված է հետևյալ կերպ.

«2001թ. օգոստոսի 21-ի՝ Կառավարության որոշման դրույթները՝ 2001թ. սեպտեմբերի 15-ին ուժի մեջ մտնելու կապակցությամբ, որով փոփոխվում է Արտասահմանում թողնված անշարժ գույքի արժեքի՝ անշարժ գույքի իրավունքի գնի դիմաց կամ անժամկետ օգտագործման վճարի դիմաց հատուցման ընթացակարգի և այդպիսի հատուցման գնահատման մեթոդների մասին որոշումը (թիվ 90 իրավաբանական անսագրում նշված են 999 կետեր), ինչպես նաև Նեման (Խոտոր) գետի հայրենադարձվածների պահանջների կարգավորման համար Գործակալության պատասխանատվության հարցերի կապակցությամբ, համաձայնեցվել է հետևյալը.

1. Ջինվորական սեփականության գործակալությունը չի հատուցի արտասահմանում թողնված սեփականության արժեքը՝ անշարժ գույքի իրավունքի գնի դիմաց կամ անժամկետ օգտագործման վճարների դիմաց:

2. Նեման (Խոտոր) գետի հայրենադարձվածների կողմից ներկայացված առաջարկները՝ առանց ավանդի մուծման, մերժվում են, եթե ավանդի վճարումից հետո եւ աճուրդի անցկացումից հետո աճուրդի մասնակիցը խնդրում է փոխհատուցել արտասահմանում թողնված հողի արժեքը սեփականության իրավունքի արժեքի կամ անժամկետ օգտագործման համար վճարի դիմաց, ենթադրվում է, որ աճուրդի մասնակիցը հրաժարվել է պայմանագրի կնքումից, եւ ավանդը փոխանցում է գործակալության հաշվին: Եթե այն բանից հետո, երբ ավանդը վճարվել է և մրցույթ-աճուրդը հաջող է անցել, աճուրդի մասնակիցը խնդրում է հատուցել արտասահմանում թողնված հողի արժեքը՝ իրավունքի համար վճարի դիմաց կամ անժամկետ օգտագործման վճարների դիմաց, ենթադրվում է, որ դիմողը հրաժարվում է կնքված պայմանագրի կնքումից, և ավանդն անցնում է Գործակալությանը:

3. Վերոհիշյալ դեպքերում, աճուրդին մասնակից անձի կողմից գանգատ ներկայացնելու պարագայում, գանգատն անհապաղ պետք է հանձնվի Գործակալության նախագահին՝ խնդիրը կարգավորելու համար: Այլապես գանգատները հաշվի չեն առնվի:

4. Աճուրդի մասնակցի կողմից դատարանում գործ հարուցելու պարագայում մրցույթ-աճուրդի գործընթացը պետք է շարունակվի, որովհետև դատակոչելը չի կասեցնում վարույթը, եթե դատարանը չարձակի հայցվորի շահերը պաշտպանելու ժամանակավոր կարգադրություն:

5. Առանց մրցույթ-աճուրդի վաճառքն իրականացնելու դեպքում և բանակցությունների միջոցով վաճառքի դեպքում Նեման (Խոտոր) գետի տարածքից հայրենադարձված անձանց առաջարկությունները նույնպես պետք է հաշվի չառնվեն՝ Գործակալության կողմից նրանց պահանջները կարգավորված չլինելու պատճառով...»:

8. 1999թ. օրինագիծը

62. Պետության կամ Վարչավայի մունիցիպալիտետի կողմից ֆիզիկական անձանցից վերցված անշարժ գույքի և որոշ տեսակի շարժական գույքի վերադարձման և դրանց դիմաց փոխհատուցման մասին 1999թ. օրինագծի («1999թ. Վերադարձման օրինագիծ») մշակումն ավարտվել է 1999թ. մարտին:

63. Կառավարությունն օրինագիծը Խորհրդարան է ներկայացրել 1999թ. սեպտեմբերին: Սակայն այն աղմկահարույց բախումներ առաջացրեց գոյություն ունեցող բոլոր քաղաքական խմբակցությունների շրջանում՝ մինչև գրեթե մեկուկես տարի տևած օրենսդրական գործընթացից հետո դրա վերջնական մերժումը:

Այն նախատեսում էր, որ բոլոր անձինք, որոնց սեփականությունը վերցվել էր Պետության կողմից՝ ամբողջատիրական վարչակարգի օրոք ընդունված որոշ օրենքների հիման վրա, պետք է ստանային իրենց սեփականության փաստացի արժեքի 50%-ը՝ կամ restitution in integrum ձևով, կամ արժեթղթերով փոխհատուցման ձևով: Ըստ 2(3) բաժնի՝ համակցված 8-րդ բաժնի հետ, հայրենադարձված անձինք պետք է ստանային իրենց սեփականության արժեքի 50%-ը կազմող արժեթղթեր՝ հաշվարկված բոլորին հավասարապես վերաբերող մանրամասն դրույթների համաձայն:

64. Հանրության բոլոր խավերին, բոլոր քաղաքական կուսակցություններին և խորհրդարանական խմբակցություններին ներգրաված թե՛ բանավեճերից հետո, Խորհրդարանի կողմից ընդունված օրենքը 2001թ. մարտին հանձնվել էր Լեհաստանի Նախագահին՝ ստորագրման համար:

Նախագահը, կիրառելով վետոյի իր իրավունքը, մերժել է դրա ստորագրումը:

65. Նախագահն օրենքը, որի վրա վետո էր դրված, վերադարձրել էր Խորհրդարան 2001թ. մարտի 22-ին: 1999թ. Վերադարձման մասին օրինագծի ընդունման համար ստեղծված խորհրդարանական հատուկ հանձնաժողովն այն ներկայացրել էր վերաընդունման:

Վերջին հաշվով, կառավարական կոալիցիան ի վիճակի չի եղել հավաքելու Նախագահի վետոն հաղթահարելու համար անհրաժեշտ ձայների երեք հինգերորդ

մեծամասնություն, և օրինագիծը Խորհրդարանի կողմից մերժվել է 2001թ. մայիսի 25-ին:

9. Հողի անժամկետ օգտագործման իրավունք

66. Անժամկետ օգտագործման իրավունքն անրագրված է Քաղաքացիական օրենսգրքի 232 և seq. հոդվածներում: Այն in rem ժառանգվող և փոխանցվող իրավունք է, որը 99 տարվա ընթացքում անձին տալիս է Պետական գանձապետարանին կամ մունիցիպալիտետին պատկանող հողից ստացված եկամտի նկատմամբ լիարժեք իրավունք եւ հողի հետ կապված գույքային իրավունքներից օգտվելու հնարավորություն: Այն պետք է գրանցվի դատարանի հողային գրանցամատյանում՝ նույն կերպ, ինչպես սեփականությունը: Այդ իրավունքի փոխանցումը, ինչպես որ սեփականության փոխանցումը, կարող է կատարվել միայն նոտարական վավերացմամբ գործարքով, այլապես նման փոխանցումը կլինի առոչինչ: «Անժամկետ օգտագործողը» պարտավոր է Պետական գանձապետարան (կամ մունիցիպալիտետ՝ նայած հանգամանքներին) մուծել ամենամյա վճար, որը համապատասխանում է տվյալ հողի արժեքի որոշակի տոկոսին:

10.Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս գտնվող տարածքներում թողնված սեփականության դիմաց փոխհատուցման իրավունքի հասկացությունը, ինչպես պարզաբանվել է Գերագույն դատարանի կողմից

(a) 1990թ. մայիսի 30-ի վճիռը

67. Իր՝ 1990թ. մայիսի 30-ի վճռում՝ ընդունված յոթ դատավորի կազմով, Գերագույն դատարանը քննության է առել այն հարցը, թե արդյո՞ք 1957թ. մարտի 25-ի՝ Խորհրդային Միությունից լեռ քաղաքացիների հայրենադարձության ժամկետների եւ ընթացակարգի մասին՝ Լեհական Ժողովրդական Հանրապետության կառավարության և ԽՍՀՄ կառավարության միջև կնքված պայմանագրի հիման վրա հայրենադարձվածներն ունեցել են 1985թ. Հողի կառավարման օրենքի 88(1) բաժնում (հետագայում 1997թ. Հողի կառավարման օրենքի 212(1) բաժնում) անրագրված կրճատման իրավունքը: Պատասխանը եղել է դրական:

Այդ համատեքստում Գերագույն դատարանը հիշատակել է 1944թ. Հանրապետական համաձայնագրերը և, ի թիվս այլնի, նշել է հետևյալը.

« . . . 1944թ. Հանրապետական համաձայնագրերով Լեհական պետությունն ստանձնել է (թողած) սեփականության դիմաց համարժեք փոխհատուցում վճարելու պարտավորություն:

Այդպիսով, այդ միջոցով այդ համաձայնագրի դրույթները ներառվել են լեհական իրավունքի մեջ և Լեհաստանի քաղաքացիների առնչությամբ կարող են ընդհանուր իրավունքների համար հինք հանդիսանալ . . .

88 (1) բաժինը . . . , դրա որոշ ձևակերպումների հետևանքով, կառուցվածքային լուրջ դժվարություններ է ստեղծում: Համարժեք փոխհատուցման իրավունքի համար սուբյեկտիվ և օբյեկտիվ նախապայմաններն անմիջականորեն սահմանելու փոխարեն, օրենսդիր մարմինը հղում է կատարել միջազգային համաձայնագրերի դրույթներին: Այդ հղումը հանդիսանում է լեհական իրավունքում այդ համաձայնագրերի դրույթների փոխակերպում: Սակայն, այդ բաժինը չի նշում այն համաձայնագրերի ցանկը, որոնց այն հղում է կատարում: Այդպիսով, հնարավոր համաձայնագրերն են.

(a) 1944թ. սեպտեմբերի 9-ի և 22-ի Հանրապետական համաձայնագիրը,

. . .

(c) 1957թ. մարտի 25-ի Լեհական Ժողովրդական Հանրապետության կառավարության և ԽՍՀՄ կառավարության միջև ԽՍՀՄ-ից ազգությամբ լեհերի հետագա տարահանման ժամանակի և ընթացակարգի մասին պայմանագիրը:

1944թ. համաձայնագրերում ամրագրված հիմնական սկզբունքներից այդ համաձայնագրերից յուրաքանչյուրի 3-րդ հոդվածի 6-րդ կետում շարադրված միայն մեկ, հիմնարար սկզբունք է (Լեհական պետությունը պետք է նշված համաձայնագրերին համապատասխան տարահանված անձանց վերադարձնի թողնված սեփականության արժեքը) ներառված ներպետական իրավունքում: Ոչ այն մյուս սկզբունքներից, այլ միայն այդ սկզբունքից է բխում համարժեք փոխհատուցում ստանալու ընդհանուր իրավունքը»:

(b) 2001թ. մարտի 27-ի վճիռը

68. Գերագույն դատարանը, երեք դատավորի կազմով, իր՝ 2001թ. մարտի 27-ի վճռով, քննության է առել այն հարցը, թե արդյոք հնարավոր է Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս տարածքներում թողնված սեփականության դիմաց փոխհատուցման իրավունքը համարել Պետական գանձապետարանի պարտք, և կարո՞ղ է, արդյոք, այդպիսի իրավունք ունեցող անձն իր իրավունքը ներդրման միջոցով փոխանցել՝ բաժնետիրական ընկերության բաժնեմասի դիմաց վճարելու համար:

Համաձայն Գերագույն դատարանի՝ խնդրո առարկա իրավունքը բոլոր գործնական նպատակներով Պետական գանձապետարանի պարտքն է և, անշուշտ, ունի դրամական ու ժառանգման ենթակա և որոշ չափով՝ փոխանցվող բնույթ, քանի որ այն կարող է փոխանցվել միայն 1997թ. Հողի կառավարման օրենքի 212(4) բաժնում ակնհայտորեն հիշատակվող անձանց միջև, այն է՝ Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս գտնվող տարածքներում թողնված սեփականության տերերի կամ նրանց ժառանգորդների միջև:

Յետևաբար, այդ իրավունքը չի կարող փոխանցվել 212(4) բաժնում առկա ցուցակի մեջ չնշված իրավաբանական ցեղով, և որը, համաձայն լեհական օրենքի, ժառանգման իրավունակ չէ: Նաև ընդգծվել է, որ համապատասխան պրակտիկայի և իրավունքի տեսության լույսի ներքո զուտ ներդրումը պետք է լինի լիովին փոխանցելի, պետք է ունենա ճշգրիտ հաշվապահական արժեք, պետք է լինի գնահատելի և հնարավոր լինի այն որպես հիմնական կապիտալ ներառել հաշվապահական հաշվեկշռում: Յետևաբար, համապատասխան իրավունքը չի բավարարում զուտ ներդրմանը ներկայացվող պահանջները:

11. 2002թ. հունվար և հուլիս ամիսների միջև ընկած ժամանակահատվածում Օմբուդսմենի կողմից ձեռնարկված գործողությունները

69. 2002թ. հունվարի 9-ի նամակում Օմբուդսմենը հիշեցրել է Վարչապետին, որ ինքն արդեն հարցրել է նրա նախորդին՝ թե կսկսվի⁶, արդյոք, որել է օրենսդրական գործընթաց, որպեսզի փոփոխություններ կատարվեն օրենսդրությունում և ավելացվի Պետական գանձապետարանի պահուստային հողի չափը՝ հայրենադարձված անձանց փոխհատուցման ենթակա սեփականությանը ապահովելու նպատակով: Նա նաև հիշատակել է 1997թ. Հողի կառավարման օրենքի 212 բաժնի հիման վրա ձեւավորված մերժման պրակտիկան: Այդ նամակի համապատասխան մասում շարադրված է հետևյալը.

«2001թ. մայիսի 30-ին ես նամակով դիմել եմ նախկին Վարչապետին՝ պրոֆեսոր Յերժի Բազեկին և հայտնել իմ վրդովմունքը մարզպետների գրասենյակների կողմից Նեման (խոտոր) գետի տարածքից դուրս գտնվող տարածքներից հայրենադարձվածների որոշ իրավունքների խախտման վերաբերյալ: Բացի Ձեր ուշադրությունն այդ հիմնախնդրի վրա իրավիրելուց, ես նաև պահանջել եմ այն հարցի առնչությամբ տեղեկատվություն, թե արդյո՞ք տարվել է որոշակի օրենսդրական աշխատանք՝ այդ քաղաքացիների խիստ նշանակալից խմբի պահանջները բավարարելու համար նախատեսված անշարժ գույքի պաշարն ավելացնելու ուղղությամբ . . .

1998թ. որոշման 6-րդ կետը հստակորեն սահմանում է, որ բացի մարզպետներից, առանձին ակտերի հիման վրա պետական սեփականությունը կառավարող այլ մարմիններ ևս պետք է կառավարեն Պետական գանձապետարանին պատկանող անշարժ գույքը՝ երաշխավորելու համար, որպեսզի առավել արդյունավետորեն իրացվի զուտ փոխհատուցումը՝ Նեման (խոտոր) գետի տարածքից դուրս սեփականության դիմաց: Սակայն, ինչպես պարզվում է, 1998թ. որոշման փոփոխություններից հետո օրենսդրության մեջ փոփոխություններ չեն կատարվել այն առումով, որպեսզի ավելացվի Նեման (խոտոր) գետի տարածքներից հայրենադարձված անձանց պահանջները բավարարելու նպատակով նախատեսված սեփականության ծավալը:

Այս վիճակը հաստատվել է նամակներով, որոնք ես ստացել եմ իրավասու անձանցից, ովքեր հայտնում են, օրինակ, որ Զինվորական սեփականության գործակալությունը մինչ օրս

հրաժարվում է հատուցել արտասահմանում թողած նրանց սեփականության արժեքը՝ Գործակալության կողմից վաճառվող սեփականության գնի դիմաց կամ անժամկետ օգտագործման իրավունքի համար վճարների դիմաց: Իրավիճակը նույնն է, երբ Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս տարածքներից հայրենադարձված անձինք ցանկանում են մասնակցել Պետական գյուղատնտեսական սեփականության գործակալության կողմից կազմակերպվող աճուրդներին: Վերը նշված բոլոր դեպքերում յուրաքանչյուր Գործակալություն՝ որպես մարդկանց՝ աճուրդներին մասնակցելու իրավունքը մերժելու հիմք, մատնացույց է անում համապատասխան իրավական կարգավորման բացակայությունը, որոնք թույլ կտային հատուցելու արտասահմանում թողնված սեփականության արժեքը՝ տվյալ Գործակալության կողմից վաճառվող սեփականության գնի դիմաց . . .

Վերոնշյալի կապակցությամբ խնդրում եմ, որպեսզի ինձ տեղեկացնեիք, թե արդյոք ներկայումս Դուք ծրագրում եք փոփոխություններ կատարել համապատասխան օրենսդրությունում՝ այն առումով, որպեսզի ավելացվի հանրային սեփականությունը կառավարող սուբյեկտների քանակը, որոնք պարտավոր են հարգել Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս տարածքներից հայրենադարձված մարդկանց՝ բնական փոխհատուցման իրավունքը . . . »:

Վարչապետը պատասխանել է, որ ներկայումս իշխանությունները որևէ որոշակի միջոց դեռևս չեն ձեռնարկել:

70. 2002թ. հուլիսի 5-ին Օմբուդսմենը դիմել է Սահմանադրական տրիբունալ՝ խնդրելով՝

«1. 1997թ. Հոդի կառավարման օրենքի 212 (1) բաժինն այնքանով, որքանով բացառում է 1939թ. սկսված պատերազմի պատճառով թողնված սեփականության արժեքի հատուցման հնարավորությունը՝ Պետական գանձապետարանին պատկանող գյուղատնտեսական սեփականության բացթողման գնի դիմաց,

2. 1997թ. Հոդի կառավարման օրենքի 213 բաժինը, այնքանով որքանով բացառում է նույն օրենքի 212 բաժնի կիրառումը Պետական գանձապետարանի գյուղատնտեսական սեփականության պահուստում պահպանվող սեփականության նկատմամբ,

3. 17-րդ բաժինը (1993թ. փոփոխություն),

4. 31 (4) բաժինը (1996թ. օրենք)

ճանաչել անհամատեղելի Պետության և Պետության կողմից ընդունված օրենքի հանդեպ քաղաքացիների վստահության պահպանման սկզբունքի հետ, որն ամրագրված է Սահմանադրության 2-րդ հոդվածում, ինչպես նաև Սահմանադրության 64 հոդվածի 1-ին և 2-րդ կետերում՝ 31 հոդվածի 3-րդ կետի հետ համակցված»:

71. Իր դիմումի պատճառաբանական մասում Օմբուդսմենը խնդրել է Սահմանադրական տրիբունալին 1997թ. Հոդի կառավարման օրենքի 212 (1) բաժնում ամրագրված իրավունքը որակել որպես «որոշակի գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հնարավորություն կամ ձեռքբերման հույս»,

«propritorial բնույթի իրավունք, որը պաշտպանվում է Սահմանադրության 64-րդ հոդվածով, և «դրամական բնույթի իրավունք, ինչը կրում է նաև պարտքի բնույթ»:

12. Սահմանադրական համապատասխան դրույթները

72. Սահմանադրության 2-րդ հոդվածը շարադրված է հետևյալ կերպ.

«Լեհաստանի Հանրապետությունը ժողովրդավարական պետություն է, որն առաջնորդվում է իրավունքով և սոցիալական արդարության սկզբունքներով»:

73. Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ կետը, որը սահմանում է սահմանադրական իրավունքների ու ազատությունների ոչ համամասնորեն սահմանափակման ընդհանուր արգելումը (համամասնության սկզբունք), նախատեսում է.

«Սահմանադրական իրավունքների իրացման ցանկացած սահմանափակում կարող է իրականացվել միայն օրենքին համապատասխան, և եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական պետությունում պետական անվտանգության և հասարակական կարգի, բնական շրջակա միջավայրի, հանրության առողջության և բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Այդպիսի սահմանափակումները չպետք է խախտեն ազատությունների ու իրավունքների էությունը»:

74. Սահմանադրության 64 հոդվածը սահմանում է սեփականության իրավունքի պաշտպանության սկզբունքը: Այն, մասնավորապես, ամրագրում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի սեփականության իրավունք, գույքային այլ իրավունքներ և ժառանգման իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք, հավասար հիմունքներով, ունի սեփականության իրավունքի, գույքային այլ իրավունքների և ժառանգման իրավունքի դատական պաշտպանության իրավունք . . . »:

75. Սահմանադրության 77 հոդվածի 1-ին կետը, որը վերաբերում է Պետական քաղաքացիական պատասխանատվությանը՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների խախտման համար, շարադրված է հետևյալ կերպ.

«Յուրաքանչյուր ոք ունի հանրային իշխանության ցանկացած ակտով իրեն պատճառված ցանկացած վնասի փոխհատուցման իրավունք»:

76. Սահմանադրության 87 հոդվածում նշված է իրավունքի աղբյուրների ցանկը: Այդ դրույթը շարադրված է, մասնավորապես, հետևյալ կերպ.

«1. Լեհաստանի Հանրապետության համապարտադիր իրավունքի աղբյուրներն են՝ Սահմանադրությունը, օրենքները, վավերացված միջազգային պայմանագրերը և ենթաօրենսդրական ակտերը . . . »:

77. Սահմանադրության 91 հոդվածում մասնավորապես ամրագրված է.

«1. Լեհաստանի Հանրապետության «Օրենքների տեղեկագրում» հրապարակումից հետո վավերացված միջազգային պայմանագրերը կազմում են ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մասը և կիրառվում են անմիջականորեն, եթե այդ կիրառումը կախված չէ օրենքի ընդունումից:

2. Եթե վավերացված միջազգային պայմանագրերում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը»:

78. Սահմանադրության 118 հոդվածը սահմանում է Սահմանադրական տրիբունալի իրավազորությունը: 91 հոդվածը սահմանում է իշխանության այն մարմինների և կազմակերպությունների ցանկը, որոնք իրավասու են դիմելու Սահմանադրական տրիբունալ՝ որոշելու օրենսդրական ակտերի և դրանց դրույթների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Սահմանադրության 188 հոդվածն ամրագրում է, մասնավորապես, հետևյալը.

«Սահմանադրական տրիբունալը որոշում է կայացնում հետևյալ հարցերի վերաբերյալ.

(1) օրենքների և միջազգային պայմանագրերի՝ Սահմանադրությանը համապատասխանության,

...

(3) կենտրոնական պետական իշխանությունների կողմից ընդունվող իրավական ակտերի՝ Սահմանադրությանը, վավերացված միջազգային պայմանագրերին և օրենքներին համապատասխանության վերաբերյալ ...»:

191 հոդվածը մասնավորապես շարադրված է հետևյալ կերպ.

«1. 188 հոդվածում նշված հարցերով Սահմանադրական տրիբունալ կարող են դիմել հետևյալ սուբյեկտները.

1) Հանրապետության Նախագահը, Սեյմի խոսնակը, Սենատի խոսնակը, Վարչապետը, 50 ներկայացուցիչներ, 30 սենատորներ, Գերագույն դատարանի Առաջին նախագահը, Գերագույն վարչական դատարանի նախագահը... Գլխավոր մեղադրողը, Գերագույն վերստուգիչ պալատի նախագահը և Օմբուդսմենը...»:

13. Դիմումի ընդունելիության վերաբերյալ Դատարանի որոշումից հետո ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունները

(a) Սահմանադրական տրիբունալի 2002թ. դեկտեմբերի 19-ի որոշումը

79. Սահմանադրական տրիբունալն Օմբուդսմենի դիմումը քննության է առել 2002թ. դեկտեմբերի 19-ին (տես նաև վերը՝ կետեր 70-71): Լսումներին որպես կողմ հանդես էր եկել Վարչապետը՝ ներկայացնելով կառավարությունը, Գլխավոր դատախազը և Սեյմը՝ ներկայացվելով իր խոսնակի կողմից: Գլխավոր գանձապետարանի՝ Սահմանամերձ մարզի Վարկատուների համալեհական ընկերակցությունը ներկայացրել է դիմում, որում հայտնել են, որ իշխանությունները,

իրենց կարծիքով, չեն բավարարել 1997թ. Հողի կառավարման օրենքի 212 հոդվածով նախատեսված իրենց իրավունքները: Սահմանադրական տրիբունալն ընդունել է նրանց դիմումն և այն համարել է ոչ կառավարական կազմակերպության կողմից տրված կարծիք:

80. Սահմանադրական տրիբունալը գտել է, որ 1997թ. Հողի կառավարման օրենքի 212(2) և 213 բաժինները՝ այնքանով, որքանով որ բացառել են արտասահմանում թողնված սեփականության արժեքի հատուցման հնարավորությունը՝ Պետական գյուղատնտեսական սեփականության բացթողման վաճառքի դիմաց, անհամատեղելի են Սահմանադրության 2-րդ կետում (իրավունքի գերակայության սկզբունք, Պետության եւ նրա կողմից ընդունված օրենքի նկատմամբ վստահության պահպանման սկզբունք), 64 հոդվածի 1-ին և 2-րդ կետերում (սեփականության իրավունքի պաշտպանության) և 31 հոդվածի 3-րդ կետում (սահմանադրական իրավունքների և ազատությունների անհամասնորեն սահմանափակման արգելման) ամրագրված սահմանադրական սկզբունքների հետ: Նա գտել է նաև, որ 1993թ. փոփոխությունների 17 բաժինը և 1996թ. օրենքի 31(4) բաժինը, ամբողջությամբ, նույնպես անհամատեղելի են վերոնշյալ սկզբունքների հետ:

81. Լեհաստանում Սահմանադրական տրիբունալի որոշումը դիտվեց որպես առանցքային կարգավորում Նեման (Խոտոր) գետի հետ կապված պահանջների վերաբերյալ, որով մանրամասն պատմական և իրավաբանական վերլուծության է ենթարկվում այդ հիմնախնդիրը: Ինչ վերաբերում է գործի պատմական հիմքերին, ի թիվս այլնի, Սահմանադրական տրիբունալը նշել է.

«Առաջին հիմնախնդիրն առնչվում է համայնավարական իշխանությունների՝ միջազգային համաձայնագիր կնքելու իրավազորությանը, որոնք կնքել էին Հանրապետական համաձայնագիրը: Անկասկած, Լեհական ազգային ազատագրման կոմիտեն չի կարելի դիտել որպես ինքնիշխան պետության սահմանադրական սուբյեկտ՝ համապատասխան ժողովրդավարական լեգիտիմությամբ և ունակ Պետության անունից որոշումներ ընդունելու:

Հանրապետական համաձայնագրերում ամրագրված՝ հայրենադարձված անձանց փոխհատուցման շրջանակը որևէ կերպ համարժեք կամ համաչափ չեն եղել այն փոխհատուցման շրջանակին, որը որպես պարտավորություն ստանձնել են այն Պետությունները, որոնց հետ կնքվել են այդ համաձայնագրերը: Մեծամասամբ հայրենադարձումը տեղի է ունցել փաստորեն մեկ ուղղությամբ, քանի որ տարահանվածների մեծամասնությունը եղել են նախկին լեհական քաղաքացիներ այն տարածքներից, որոնք Լեհաստանի Հանրապետությունը կորցրել էր Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով: Որպես հետևանք, չնայած վերաբնակեցման և հայրենադարձության զգալիորեն մեծ նյութական ծանրությանը, Լեհաստանը, 1952թ. պայմանագրի հիման վրա, պարտավոր է ԽՍՀՄ-ին վճարել զգալի գումար՝ 76 միլիոն ռուբլի (1952թ. պայմանագրի 2-րդ հոդված): Լեհաստանի սահմանների փոփոխման պարագայում նման պարտավորությունը, իհարկե, չի կարելի դիտել որպես Լեհական պետական մարմինների ինքնիշխան որոշում:

Այս կապակցությամբ պետք է նշվի, որ պատերազմի հետևանքով նման դժվարություններ են կրել այլ պետություններ, բայց ոչ մի դեպքում, բացառությամբ Գերմանիայի, այդ դժվարությունները չեն կարող համեմատվել Լեհական պետության կրած դժվարությունների հետ: Նաև արժե հիշեցնել, որ այդ պարտավորությունների կատարումը հետագայում զուգահեռաց զգալի նյութական կորուստներին, որոնք պետությունը կրել էր պատերազմի ընթացքում և դրանից անմիջապես հետո: Այդ պայմաններում, ակնհայտ էր, որ ԽՍՀՄ և համապատասխան խորհրդային հանրապետությունների հետ կնքված համաձայնագրերով հայրենադարձված անձանց փոխհատուցում տրամադրելու գործընթացը պետք է տեղի ունենար չափավոր կերպով և աստիճանաբար: Դա նաև նշանակում էր, որ անհրաժեշտ էր հաշվի առնել պետության ծանր ֆինանսական վիճակը և, ամենից առաջ, քաղաքացիների այլ խմբերի վիճակը, քան Նեման (Խոտոր) գետի հայրենադարձվածներինը: Անշուշտ, պատերազմի հետևանքներն զգաց ողջ Լեհական հանրությունը: Այդ կապակցությամբ, չի կարող պնդվել, որ, օրինակ, ոչ լիարժեքորեն, ինչը վճարվում է որոշակի ժամկետային սահմանափակումներով կամ որոշակի ձևով, ինքնաբերաբար հակասության մեջ է գտնվում արդարադատության սկզբունքների հետ: Այդ պատկերացումը նաև վերաբերում է այն մեխանիզմներին, որոնցով ապահովվում է միայն պատերազմական գործողությունների և տարածքային փոփոխությունների հետևանքով տուժածների կորուստների դիմաց մասնակի փոխհատուցումը:»

82. Ընդգրկվում պատճառներ բովանդակող որոշումը խարսխվում էր հետևյալ գլխավոր հիմքերի վրա.

«(1) Հանրապետական համաձայնագրերը հանգեցրեցին համապատասխան ներպետական օրենքի միջոցով այն անձանց փոխհատուցում տրամադրելու որոշակի տեսակի պետական պարտավորությունների, որոնք սեփականությունը կորցրել էին Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Լեհաստանի սահմանի փոփոխման կապակցությամբ: Հանրապետական համաձայնագրերն անմիջական հիմքեր չէին ստեղծում հայրենադարձվածների համար՝ փոխհատուցում պահանջելու առումով, քանի որ օրենսդիր մարմինն հնարավորություն էր տրված ազատորեն որոշելու, թե ինչ կերպ պետք է կատարվի փոխհատուցումը: Այդ առումով պետական պարտավորությունները, ինչպես նախատեսված էր հետագա իրավական ակտերում, հանդիսանում էին օրենսդիր մարմնի անկախ լուծմանը թողնված հարցեր:

(2) Վարկավորման իրավունքը, որը նախատեսում է Լեհաստանի քաղաքացիների՝ Պետության ներկա տարածքներից դուրս կորցրած սեփականության արժեքի հատուցման հնարավորությունը՝ անշարժ գույքի վաճառքի գնի դիմաց կամ անժամկետ օգտագործման իրավունքի համար վճարների դիմաց, հանդիսանում է սեփականության կորցրած իրավունքների որոշակի փոխարինիչ, որը, չբացառելով փոխհատուցման օրինական ակնկալիքը, ավելի շատ սեփականության իրավունք է՝ իրավական կարգում ճանաչված որպես հանրային իրավունք: Որպես այդպիսին, այս իրավունքն օգտվում է Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի պաշտպանությունից (Սահմանադրության 64 հոդվածի 1-ին և 2-րդ կետեր):

(3) Տվյալ հաստատությունների համար իրավական շրջանակների ստեղծումը չի կարող լիովին վերացարկվել փաստացի հանգամանքներից և տնտեսական իրականությունից,

որոնցում այդ կերպ ձևավորված իրավական հաստատությունները պետք է գործեն: Ուստի, որպես սկզբունք, օրենսդիր մարմինը չի կարող անհատին վերապահվող ընդհանուր իրավունքի օգուտի հնարավորությունը նեղացնել այնքան խստորեն, որ վերջնական արդյունքն ըստ էության դառնա ոսումս ius, այնպես, որ սեփականությունը դառնա ոչ էական իրավունք՝ զրկված գործնականում ցանկացած դրամական արժեքից: Այսպես կոչված՝ վարկավորման իրավունքի պարագայում դրա անվանական արժեքը, սակայն, չի համապատասխանում դրա փաստացի արժեքին: Այդ իրավունքի արժեքի արժեզրկումը տեղի է ունեցել օրենսդիր մարմնի կողմից որոշ կատեգորիաների անշարժ գույքի բացառման պատճառով, որն էականորեն սահմանափակել էր այդ իրավունքից օգտվելու հնարավորությունը:

(4) Գույքային բոլոր իրավունքները, իրավական կարգի շրջանակներում, ենթակա են սահմանադրական պաշտպանության: Սուբյեկտի օրինականորեն պաշտպանվող գույքային շահերին միջամտությունը, երբ դա տեղի է ունենում առանց այդ սուբյեկտի օրինական իրավունքի ձևական վերացման, հանդիսանում է փաստացի էքսպրոպրիացիա՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ընդունված նշանակության շրջանակներում: Հետևաբար, այն դրույթների գնահատումը, որոնք գործնականում վերացնում են իրավունքից օգուտ քաղելու հնարավորությունը, հանգեցնում են այլ եզրակացության, որ դրանք հանդիսանում են անհամատեղելի Սահմանադրության 64 հոդվածի 1-ին և 2-րդ կետերի հետ:

(5) Վարկավորման իրավունքից օգուտ քաղելու հնարավորությունը սահմանափակող իրավական լուծումները, որոնց արդյունքում այդ իրավունքները զրկվել են իրենց էությունից, չի կարելի համարել անհրաժեշտ ժողովրդավարական եւ իրավական պետության մեջ, և գործառնական առումով չեն առնչվում Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ կետում ամրագրված արժեքներից որեւէ մեկին (համամասնության սկզբունք):

(6) Իրավական պետության սկզբունքից բխող՝ Պետության եւ նրա ընդունած օրենքների նկատմամբ քաղաքացիների հարգանքը պահպանելու սկզբունքը հարգելու պահանջը (Սահմանադրության 2-րդ հոդված) հանգեցնում է այնպիսի օրենքների ընդունման արգելքի, որոնք կստեղծեն պատրանքային իրավական ինստիտուտներ: Ուստի այդ սկզբունքը պահանջում է, որպեսզի այն խոչընդոտները, որոնք կանխում են վարկավորման իրավունքից օգուտ ստանալուն, վերացվեն իրավական համակարգից: Վստահության սկզբունքի տեսանկյունից, վարկավորման իրավունքի պարագայում, պետք է գնահատվի իրավունքի պաշտպանության միջոցը եւ ոչ թե էությունը: Այդ իրավունքից, օրենսդրի կողմից սահմանված շրջանակներում, օգուտ ստանալու հնարավորության բացակայությունը վկայում է, որ ստեղծվել է պատրանքային իրավական ինստիտուտ և, այդպիսով, խախտվել է Սահմանադրության 2-րդ հոդվածը»:

83. Սահմանադրական տրիբունալը նոր եզրույթ է ստեղծել 1997թ. Հողի կառավարման օրենքի 212 բաժնով նախատեսված իրավունքի համար, այն անվանելով «վարկավորման իրավունք»: Այդ եզրույթն արդեն մտել է իրավական կիրառության մեջ և հաճախ հիշատակվում է հետագա բազմաթիվ դատական վճիռներում և տարաբնույթ իրավաբանական տեքստերում:

Դատարանը գտել է, որ չնայած նրան, որ այդ իրավունքը ծնունդ է առել Չանրապետական համաձայնագրերի դրույթներում, 212-րդ բաժինն է փաստորեն համարվում դրա իրավական հիմքը: Այդ առումով նա գտել է, որ այդ համաձայնագրերը չեն կազմել ներպետական իրավունքի մաս, քանի որ, չնայած դրանք վավերացվել են, բայց չեն հրապարակվել Օրենքների տեղեկագրում և չէին կարող համարվել իրավունքի աղբյուր՝ Սահմանադրության 91-րդ հոդվածի իմաստով:

Սահմանադրական տրիբունալը վարկավորման իրավունքը սահմանել է հետևյալ կերպ.

«Վարկավորման իրավունքն ունի առանձնահատուկ բնույթ՝ որպես ինքնուրույն գույքային իրավունք: Ըստ Սահմանադրական տրիբունալի կարծիքի՝ այն հանդիսանում է սեփականության իրավունքի որոշակի փոխարինիչ, այլ ոչ թե պարզապես փոխհատուցման իրավունքի ակնկալում, այդ իսկ պատճառով այն պետք է ճանաչվի որպես սահմանադրորեն երաշխավորվող պաշտպանությամբ օժտված սեփականության իրավունք (64 հոդվածի 1-ին և 2-րդ կետեր): Սահմանադրական տրիբունալն արդարացված է համարում, որ վարկավորման իրավունքը հանրային իրավական բնույթի հատուկ գույքային իրավունք է: Դա սեփականության պատշաճ իրավունք չէ, բայցև, դրանով հանդերձ, չի կարող նվազեցվել պոտենցիալ իրավունքի կատեգորիայի՝ առավելապես ձեւակերպված ակնկալիքի իմաստով: Նույնիսկ այն պարագայում, երբ իրավունքի նյութականացումը կախված է իրավունք ունեցող անձի գործողություններից, արդարացված չէր լինի եզրակացնել, որ այդ իրավունքը գոյություն չունի մինչև դրա իրացման պահն աճուրդում հաղթելու արդյունքում, որին մասնակցելու իրավունք ունեցող անձին կարող է հատուցվել արտասահմանում թողած սեփականության արժեքը՝ ձեռք բերված սեփականության արժեքի դիմաց կամ անժամկետ օգտագործման իրավունքի համար վճարների դիմաց . . .

Անկասկած, վարկավորման իրավունքը պատկանում է այն իրավունքների կատեգորիային, որոնք պաշտպանվում են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով»:

84. Սահմանադրական տրիբունալն այնուհետև գործն ուսումնասիրել է Սահմանադրության 64 հոդվածի ներքո՝ պարզաբանելով սեփականության իրավունքի պաշտպանության սկզբունքը: Նա Պետության պետական վերաբերմունքը ներկայացրել է հետևյալ կերպ.

«Սահմանադրական տրիբունալի կարծիքով, կասկած չկա, որ այդ հանգամանքներում, աճուրդների միջոցով Պետական գանձապետական որոշ կատեգորիաների սեփականության ձեռքբերման՝ հայրենադարձվածների հնարավորությունը սահմանափակող բոլոր օրենքներն ուղղակի ազդեցություն ունեն վարկավորման իրավունքի իրացման վրա:

Առկա իրավական հանգամանքներում կարելի է խոսել գործառնական պարադոքսի գոյության մասին, երբ օրենսդրությամբ սահմանված ընդհանուր իրավունքը չի կարող գործնականում իրականացվել: Յետևաբար, վարկավորման իրավունքն էլ ավելի է դառնում «դատարկ պարտավորություն» և վերածվում է «*nudum ius*-ի»: Առկա միտումների պահպանումը, երբ Պետական գանձապետական տարատեսակ հողերը բացառվում են վարկավորման իրավունքի իրացման շրջանակից, նշանակում է, որ այդ իրավունքի՝

ապագայում իրացման առումով, որևէ հույս չկա: Գործերի այդ վիճակն արդեն հանգեցրել է անբարենպաստ և պարադոքսալ իրադրության. իրավասու անձինք, որոնք տարիներ շարունակ սպասել են, որպեսզի կարողանան մասնակցել մրցույթ-աճուրդների և, արդյունքում, այդպիսի աճուրդների ընթացքում, գիտենալով, որ դժվար կլինի իրենց վարկավորման իրավունքի իրացումը, գույքի գինը «բարձրացվել» է դրա շուկայական արժեքն էապես գերազանցող մակարդակի:

Առկա հանգամանքներում՝ վարկավորման իրավունքից օգտվելու հնարավորությունը գնահատելու համար պետք է հաշվի առնել ոչ միայն սեփականության որոշ տեսակների մատչելիության սահմանափակումը՝ տարբեր աստիճանների արդարացմամբ, այլ նաև այդ իրավունքի իրացման համար փաստացի հնարավորությունները և դրա տնտեսական արժեքը:

Չայրենադարձների համար Գանձապետական սեփականության մատչելիությունը սահմանափակող օրենքները հանգեցնում են *de facto* էքսպրոպրիացիայի, որի հետևանքով հնարավոր չէ իրացնել վարկավորման իրավունքը եւ ներկա ժամանակ, եւ ապագայում՝ այն իմաստով, որով այդ հասկացությունն օգտագործվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ վերը մեջբերված նախադեպային իրավունքում . . . :

1997թ. Յոլի կառավարման օրենքի 212(1) բաժնում և 213-րդ բաժնում, 1993թ. փոփոխությունների 17-րդ բաժնում և 1996թ. օրենքի 31(4) բաժնում ամրագրված սահմանափակումների հակասահմանադրականությունը կայանում է նրանում, որ ընդհանուր իրավունքը (վարկավորման իրավունքը) ձևակերպվել է այնպես, որ այն չի կարող նյութականացվել առկա իրավական միջավայրում, ուստի այն դարձել է պատրանքային և ուղղակի խաբեություն: Բացի դրանից, դա ոչ միայն ժամանակավոր անհնարինության հարց է՝ պայմանավորված որոշ փաստական և իրավական հանգամանքներով, այլ, ավելի շուտ, իրավական կառույցների ստեղծման հարց, որոնք բացառում են այդ հնարավորությունը՝ *ex thesi*: Այդ իրավունքի նյութականացման հնարավորության գնահատումն առավել կարելուով է այն առումով, որ օրենսդիրն ընդունելով միջազգային պայմանագրերի հիման վրա՝ հայրենադարձված անձանց նկատմամբ Պետության պարտավորությունները, միևնույն ժամանակ չի ստեղծել փոխհատուցման որևէ այլընտրանքային մեխանիզմ: Մի քանի տասնամյակի ընթացքում վարկավորման իրավունքը եղել է միակ առկա *de lege lata* լուծումը, որը թույլատրել է փոխհատուցել 1940-ականներին տարածքային փոփոխությունների հետևանքով լեռ քաղաքացիների կրած նյութական կորուստները . . . »:

85. Իրավիճակը գնահատելով՝ Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ կետի տեսանկյունից, այն է՝ վարկավորման իրավունքի իրականացման նկատմամբ իշխանությունների կողմից դրված սահմանափակման թույլատրելիության, Սահմանադրական տրիբունալը, *inter alia*, նկատել է.

« (T) գույքային իրավունքների պաշտպանությունը չի նշանակում, որ ամբողջովին անհնարին է միջամտել դրանց էությանը, կամ որ դրանք հանդիսանում են բացարձակապես անձեռնմխելի . . . Անհրաժեշտ է մնալ սահմանադրական շրջանակներում, որը նախատեսում է գույքային տվյալ իրավունքի սահմանադրական պաշտպանության սահմանները (Սահմանադրական տրիբունալի որոշումից անհրաժեշտ մեջբերումներ): Այդպիսի սահմանափակումները նախատեսված են Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ կետով:

Սահմանադրական տրիբունալի նախադեպային իրավունքում բազմաթիվ անգամներ նշվել է, որ այդ դրույթը նախատեսում է սահմանադրական իրավունքներից ու ազատություններից օգտվելու սահմանափակումների թույլատրելիության համար պայմանները որոշելու թեստը . . . :

Այդ համատեքստում, կարևոր է ուշադրություն դարձնել Սահմանադրական տրիբունալի դիրքորոշմանը, որն արտահայտվել է 2000թ. հունվարի 12-ի որոշման մեջ (հղումներում), համաձայն որոնց՝ այդպիսի սահմանափակումների շրջանակը չպետք է ոչնչացնի ընդհանուր իրավունքի հիմնարար բաղադրատարրերը, ինչի արդյունքում այն զրկվում է իր իրական էությունից և վերածվում է իրավաբանական ֆիկցիայի: Այդպիսի իրավիճակը հանգեցնում է այդ իրավունքի հիմնական էության սահմանադրորեն անթույլատրելի խախտման . . . :

Նախորդ դիտարկումների լույսի ներքո, պետք է ճանաչել, որ Օմբուդսմենի դիմումում հիշատակված բոլոր այն դրույթները, որոնք սահմանափակում են սեփականության իրավունքի փաստացի շրջանակը, որի առնչությամբ կարող է կիրառվել 1997թ. Հողի կառավարման օրենքի 212 բաժինը, անհամատեղելի են Սահմանադրության 64 հոդվածի 1-ին և 2-րդ կետերի հետ՝ համակցված 31 հոդվածի 3-րդ կետի հետ:

Այդպիսի սահմանափակումներն արդարացված չեն ժողովրդավարական եւ իրավական պետությունում: 1993թ. փոփոխությունների 17-րդ բաժնում շարադրված նպատակները եւ Զինվորական սեփականության գործակալության գույքի առնչությամբ վարկավորման իրավունքի սահմանափակումների համար նախատեսված հիմքերը, այն է՝ զինված ուժերը արդիակացնելու համար ռեսուրսների անհրաժեշտությունը չպետք է բավարարվի այնպես, որ մարդկանց միայն որոշակի խմբի զրկի իրենց վերապահված գույքային իրավունքների իրացման հնարավորությունից:

Պետական գանձապետարանի Գյուղատնտեսական սեփականության գործակալության կողմից կառավարվող գյուղատնտեսական սեփականության պարագայում այդպիսի բացառություն չպետք է թույլ տալ՝ առանց համապարփակ լուծումների միաժամանակյա ընդունման, որոնք հնարավորություն կընձեռեն լուծելու սեփականատիրական հարաբերությունների կարգավորմանը վերաբերող հիմնախնդիրները:

Բացառությունների դեպքում, որոնք նախատեսված են 1996թ. օրենքում, ռազմական հաստատությունների արդիականացման և սպասարկման համար պաշարների արտադրման նպատակը չի արդարացնում այն մարդկանց հանդեպ խտրականության դրսևորումը, որոնք ունեն Լեհաստանի գոյություն ունեցող տարածքից դուրս թողնված սեփականության արժեքի վարկավորման իրավունք, պարզապես նրա համար, որ այդ մարդիկ անկարող են կանխիկ դրամով վճարել գնման գինը: Նման լուծումը երբևէ չի կարող ճանաչվել ժողովրդավարական եւ իրավական պետությունում անհրաժեշտ: Չկա նաեւ որեւէ գործառնական կապ այդ սահմանափակման եւ Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ կետում հիշատակված նպատակների իրականացման միջև: Սահմանափակում կիրառելու անհրաժեշտություն կարող է առաջանալ, եթե վարկավորման իրավունքի իրացումը կարող է այլոց զրկել օրինականորեն պաշտպանվող իրենց շահերի բավարարումից: Մասնավորապես, վարկավորման իրավունքի գոյությունը չի հանգեցնում այնպիսի իրավիճակի, որի պարագայում կարող են խախտվել այլոց իրավունքները (օրինակ՝ նախկին սեփականատերերի իրավունքները, որոնց առաջնություն է տրվել):

Միևնույն ժամանակ պետք է ընդգծել, որ այդ դրույթների հակասահմանադրականությունը կապված չէ օրենսդրական բացթողման հետ, որոնք կազմում են Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս տարածքներից հայրենադարձվածներին փոխհատուցում տրամադրելուն վերաբերող որոշ ակտերի թերությանը: Ավելի շուտ դա հետևանք է փոխհատուցման հարցերը կարգավորող դրույթների՝ իրավաբանորեն թերի ձևակերպումների, ինչը պատճառում է անթույլատրելի համակարգային դիսֆունկցիա: Հարկ է շեշտել, որ սեփականության ընդհանուր իրավունքի ստեղծման ժամանակ Պետությունը չի կարող նույն այդ ժամանակ կանայականորեն մտցնել, հանուն իր շահերի օգտագործելով պետական լծակները, այնպիսի սահմանափակումներ, որոնք սեփականության էական պաշարները հանելով փոխհատուցման ընթացակարգից, փաստորեն, շահառուների համար խափանում է այդ իրավունքներից ցանկացած տնտեսական առավելություն ստանալու հնարավորությունը»:

86. Ի վերջո, Սահմանադրական տրիբունալը հիշատակել է Սահմանադրության 2-րդ հոդվածում ամրագրված իրավական պետության սկզբունքը: Այն, ի թիվս այլնի, ներկայացրել է հետևյալ կերպ.

«Այս սկզբունքը նշանակում է, նախևառաջ, պահանջ հավուր պատշաճի պաշտպանել և հարգել ձեռք բերված իրավունքները և պաշտպանել շահերը, որոնք դեռևս չեն տրամադրվել... բայց դա նաև օրենսդրին արգելում է ստեղծել այնպիսի ինստիտուտներ, որոնք չեն կարող գործել եւ հանդիսանում են իրավունքի պատրանք և, հետևաբար՝ այն գույքային շահերի պաշտպանության պատրվակ, որոնք գործառնորեն կապված են սահմանված ընդհանուր իրավունքի էության հետ:

Որպես սկզբունք՝ օրենսդիր մարմինը չի կարող անհատին ձևականորեն տրվող ընդհանուր իրավունքի իրացման հնարավորությունը նեղացնել մինչև այն աստիճանի, որ ստեղծվի *nudum ius*, այսինքն՝ սեփականության իրավունք, որը, դառնում է էությունից զուրկ և գործնականում չունի ոչ մի դրամական արժեք: Պետք է կրկին ընդգծվի, որ, այսպես կոչված՝ վարկավորման իրավունքի պարագայում, դրա անվանական արժեքը չի համապատասխանում իր իրական արժեքին: Այդ արժեգրկումը տեղի է ունենում, որովհետև այդ իրավունքի իրացման հնարավորությունը սահմանափակվել էր էականորեն՝ օրենսդրության միջոցով, որը բացառում էր սեփականության որոշ կատեգորիաների...:

Պետության նկատմամբ վստահության պահպանման սկզբունքին հավատարմությունը, որն, ինչպես նշվել է վերը, արգելում է ֆիկցիա հանդիսացող իրավական ինստիտուտներ ստեղծող օրենքների ընդունումը, պահանջում է այն իրավական խոչընդոտների վերացում, որոնք զրկում են վարկավորման իրավունքից օգտվելու հնարավորությունից: Սահմանադրական տրիբունալը չի կարող գնահատել, թե պատշաճ կերպով գործող վարկավորման իրավունքը մինչև ինչ աստիճանի կարող է վերականգնել Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս սեփականության կորստի հետևանքով առաջացած վնասը: Այդ հիմնախնդրի լուծումը, ինչը հանդիսանում է մի քանի տասնյակ տարի առաջ տեղի ունեցած՝ երկրի պատմական տարածքային փոփոխությունների և սեփականության հարցում փոփոխությունների հետևանքով բնակչության որոշակի խմբերի կրած կորուստների վերականգնման ընդհանուր հիմնախնդրի մի մասը, օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է...:

Այստեղ կարևոր է այն կանխադրույթի կատարումը, որ իրավական ակտերը պետք է ձևակերպված լինեն այնպես, որպեսզի ոչ միայն անհատի համար ապահովեն իրավական որոշակիություն, այլ նաև լիարժեք կանխատեսելիություն՝ այնքանով, որքանով դրանք կազդեն անհատի իրավական դրության վրա կոնկրետ իրավական իրավիճակներում: Տարածքային փոփոխությունների հետևանքով սեփականությունից զրկված անձանց փոխհատուցում տրամադրելու մեխանիզմի սահմանումը հանգեցրեց օրինական սպասելիքների առ այն, որ այդ հիմնախնդիրը վերջնականապես կլուծվի ապագայում, որը միտված կլինի այդ անձանց շահերի բավարարմանը: Այն կարծիքը, որ Պետության և նրա կողմից ընդունված օրենքի նկատմամբ հարգանքի պահպանման սկզբունքը խախտվել է, ավելի է խորանում իրավական համակարգում փոխհատուցման այլընտրանքային ձևերի բացակայության պատճառով...:

Իրավական համակարգից 1997թ. Յոզի կառավարման օրենքի 212 և 213 բաժիններով և այլ առանձին դրույթներով նախատեսված սահմանափակումների վերացումը թույլ կտա, որ վարկի մեխանիզմի մնացորդը դառնա իրական, այլ ոչ թե, ինչպես մինչ օրս, փոխհատուցման մտացածին միջոց: Այս Տրիբունալը չի գնահատել օրենսդիր մարմնի կողմից հայրենադարձվածների գույքային շահերի բավարարման միջոցների ընտրությունը, քանի որ կոնկրետ ինստիտուցիոնալ լուծումների սահմանումն օրենսդիր մարմնի իրավասության անկախ ոլորտի շրջանակներում է: Ուստի օրենսդրության մեջ արդեն ամրագրված փոխհատուցման մեխանիզմն է, որը գնահատման է ենթարկվել սահմանադրական երաշխիքների տեսանկյունից:

Չարկ է նշել, որ, ի լրումն փոխհատուցման ընթացակարգի, որն անմիջականորեն սահմանված է Յոզի կառավարման օրենքի 212 բաժնում, օրենսդիր մարմինը վերջերս 2002թ. դեկտեմբերի 5-ի՝ Պետական գանձապետարանի լիազորությունների իրականացման մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքով, 2003թ. հունվարի 14-ին ուժի մեջ մտած Պետական ձեռնարկությունների առևտրականացման և մասնավորեցման մասին օրենքով և այլ ակտերով ստեղծել է վարկավորման իրավունքի իրացման նոր հնարավորություն: Այդ դրույթի հիման վրա 1997թ. Յոզի կառավարման մասին օրենքի 212 բաժնում հիշատակվող անձանց տրվում է կորցրած սեփականության վարկավորման հնարավորություն՝ մասնավորեցված ձեռնարկության բացթողման գնի դիմաց, սեփականության իրավունքի արժեքի փոխանցում՝ մասնավորեցված ձեռնարկության բացթողման գնի դիմաց, անշարժ գույքի՝ ձեռնարկության ակտիվների մեջ մտցված որոշ մասերի նկատմամբ իրավունքի արժեքի փոխանցման կամ այնպիսի իրավունքների բացթողման գնի դիմաց, որոնք ակտիվների մեջ մտցված չեն: Դա վարկավորման իրավունքի նոր ձև է, և սպասվում է, որ այն կընդլայնի կորցրած սեփականության դիմաց փաստացի փոխհատուցում ստանալու հնարավորությունը: Սակայն նոր կարգավորումն սկզբունքորեն չի փոխարինում վարկավորման իրավունքի գնահատմանը, ինչպես որ այն ձևավորվել է ներկա պարագայում վիճարկվող դրույթներին համապատասխան: Վարկավորման իրավունքի նոր ձևի իրագործման համար... չի ազատում օրենսդիր մարմնին այն հանգամանքի ապահովումից, որ փոխհատուցման մեխանիզմները, ինչպես պարզվեց տվյալ դեպքում, մշակվել են այնպիսի եղանակով, որպեսզի լինեն անհատի սեփականության իրավունքի պաշտպանության իսկական միջոց, այլ ոչ թե սոսկ իրավական ֆիկցիա:

Վիճակվող դրույթներում պարունակվող սահմանափակումների վերացումը, անշուշտ, վարկավորման իրավունքի բավարարման համար կապահովի նոր և առավել բարենպաստ

պայմաններ և, հետևաբար, օրենսդրությանը համապատասխան սահմանված փոխհատուցման մեխանիզմի իսկական գործառնության հնարավորություն»:

87. 2003թ. հունվարի 8-ին Սահմանադրական տրիբունալի որոշումը հրապարակվեց Օրենքների տեղեկագրում: Այն ուժի մեջ է մտել նույն օրը:

(b) 2002թ. դեկտեմբերի փոփոխությունը

88. 2003թ. հունվարի 14-ին ուժի մեջ են մտել 2002թ. դեկտեմբերի 5-ի՝ Պետական գանձապետարանի լիազորությունների իրականացման մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքը, Պետական ձեռնարկությունների առևտրականացման և մասնավորեցման մասին օրենքը և այլ ակտեր («2002թ. փոփոխություն»):

89. Պետական ձեռնարկությունների առևտրականացման և մասնավորեցման մասին օրենքի 53-րդ բաժինը 2(16) բաժնի հիման վրա ենթարկվել է հետևյալ փոփոխության.

«212-րդ բաժնում հիշատակված անձինք (1997թ. Հողի կառավարման օրենք) պետք է ունենան՝ գոյություն ունեցող Հանրապետությանը չպատկանող տարածքներում մնացած իրենց սեփականության արժեքի՝ Լեհաստանի կողմից մարման իրավունք՝ հետևյալի դիմաց.

(1) (Պետական ձեռնարկության) վաճառքի գնի մի մասի, որը համապատասխանում է այդ ձեռնարկության հողի նկատմամբ իրավունքների արժեքին (in rem), ինչպես նաև առևտրային կամ ծառայություններ մատուցելու նպատակով կամ որպես ատելյե, կամ արտիստական գործողությունների, կամ որպես հանդիսասրահ կամ ավտոտնակ, կամ այդպիսի ցանկացած նպատակի համար օգտագործվող շինության արժեքին:

(2) 2-րդ ենթաբաժնում մատնանշված այն իրավունքների վաճառքի գնի, որոնք վաճառվել են որպես ձեռնարկությանը չպատկանող ակտիվներ և Պետության կողմից վերցվել են այն բանից հետո, երբ ձեռնարկության վարձակալության պայմանագրի ժամանակը լրացել է կամ ազատվել էր պարտավորություններից»:

(c) 2003թ. հունվարի որոշումը

90. 2003թ. փետրվարի 7-ին ուժի մեջ մտավ Կառավարության 2003թ. հունվարի 14-ի՝ Պետական գանձապետարանին կամ մունիցիպալիտետին պատկանող սեփականության վաճառքի համար աճուրդների անցկացման մանրամասն դրույթների ու ընթացակարգերի վերաբերյալ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշումը: Փոփոխված որոշման 5-րդ կետը շարադրված է հետևյալ կերպ.

«Մարզպետի կողմից կազմակերպվող աճուրդներում 212-րդ բաժնում (1997թ. Հողի կառավարման օրենք) ամրագրված իրավունք ունեցող անձինք պետք է ազատվեն ապահովության վճարից, եթե նրանք անում են գրավոր հայտարարություն առ այն, որ

պայմանագրի կնքումից իրենց ձեռնպահ մնալու դեպքում նրանք կվճարեն մյուս մասնակիցներից պահանջվող ապահովության վճարին հավասար գումար:

2. Ապահովության համար վճարումը հաստատող փաստաթղթի փոխարեն 1-ին կետում հիշատակվող անձինք մարզպետին են ներկայացնում այն վկայականի կամ որոշման բնօրինակը, որով հաստատվում է, որ իրենք օգտվում են 212(1) և (2) բաժնում նախատեսված իրավունքից:

3. 1-ին կետում նշված աճուրդներում սեփականության վաճառքի պայմանները սահմանելիս՝ 212-րդ բաժնում ամրագրված ձևով վճարումը չի կարող բացառվել»:

(d) 2003թ. ապրիլի օրենքը

91. 2003թ. ապրիլի 16-ին ուժի մեջ է մտել Գյուղատնտեսական համակարգի մասին օրենքը («2003թ. ապրիլի 11-ի օրենք»):

Համաձայն այդ օրենքի դրույթների՝ Պետական գանձապետարանի Գյուղատնտեսական սեփականության գործակալությունը վերակազմավորվեց Գյուղատնտեսական սեփականության գործակալության (տես նաև վերը՝ կետեր 31-32), որը, 18-րդ բաժնին համապատասխան, դարձավ առաջինի իրավահաջորդը: Վերջին գործակալությունն ընդունեց նախկինին պատկանած ամբողջ սեփականությունը: Պետական գանձապետարանի սեփականության գյուղատնտեսական պաշարները կազմող սեփականության պահուստը հանձնվեց նոր գործակալությանը: Հետևաբար, այդ մարմինն է ներկայումս պատասխանատու Պետական գյուղատնտեսական սեփականության կառավարման և բաշխման համար և նրա համար, որպեսզի անցկացնի այդ սեփականության վաճառքի համար աճուրդներ՝ համաձայն համապատասխան որոշման դրույթների (տես ստորև՝ կետ 92):

(e) 2003թ. օգոստոսի որոշումը

92. Գանձապետարանի նախարարի՝ Պետական գանձապետարանի Գյուղատնտեսական սեփականության պաշարներից սեփականության և դրա մասերի վաճառքի մանրամասն դրույթներին, գնի տարաժամկետ վճարման և հողի գնահատման պայմաններին վերաբերող 2003թ. օգոստոսի 1-ի որոշումն ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 11-ին:

2003թ. օգոստոսի որոշման 8-րդ կետի համաձայն՝ հայրենադարձված անձինք ազատվել են մինչև Պետական սեփականության վաճառքի համար աճուրդների անցկացումը վաճառքի գնի վճարումը երաշխավորող ապահովության համար վճարման պարտավորությունից:

Այդ կետը նախատեսում է.

«1. Ֆիզիկական անձինք, ովքեր, համաձայն այլ օրենքների, ունեն 1939թ. սկսված պատերազմի հետևանքով Լեհաստանի Հանրապետության գոյություն ունեցող սահմաններից

դուրս թողնված սեփականության արժեքի հատուցման իրավունք՝ Պետական գանձապետարանի սեփականության (որը նրանք ցանկանում են գնել) գնի կամ անժամկետ օգտագործման վճարի դիմաց, կազատվեն ապահովության համար վճարումից, եթե նրանք անում են գրավոր հայտարարություն առ այն, որ երբ իրենք ձեռնպահ կմնան վաճառքի պայմանագրի կնքումից, կվճարեն այլ հավակնորդներից ապահովության համար պահանջվող գումարին հավասար գումար:

2. Ապահովության համար կատարված վճարումը հաստատող փաստաթղթի փոխարեն 1-ին ենթաբաժնում հիշատակված անձինք Աճուրդների վարչություն են ներկայացնում այն վկայականի կամ որոշման բնօրինակը, որով հաստատվում է վաճառքի գնի դիմաց՝ թողնված սեփականության արժեքի հատուցման իրենց իրավունքը:

3. Այն սեփականության վաճառքի պայմանները սահմանելիս, որի նկատմամբ կիրառվում է 1-ին ենթաբաժնում ամրագրված վարկավորման իրավունքը, 6-րդ կետում նշված աճուրդում (այսինքն՝ 1991թ. օրենքի դրույթների համաձայն կազմակերպված ցանկացած աճուրդում) այդպիսի վարկի միջոցով վաճառքի գնի վճարումը չպետք է բացառվի»:

(f) Կրակովի շրջանային դատարանի 2003թ. ապրիլի 2-ի և 7-ի վճիռները

93. 2003թ. սկզբներին մի քանի հայրենադարձված անձինք (կամ նրանց իրավահաջորդները) ընդդեմ Պետական գանձապետարանի դատարան հայց են ներկայացրել՝ կրած վնասներն օրինական իրավունքների խախտման մասին օրենքի և համապատասխան Հանրապետական համաձայնագրերի դրույթների համաձայն հատուցելու վերաբերյալ: Այդ հայցերից մի քանիսը հասցեագրվել էր Կրակովի շրջանային դատարանին:

Հայցերը ներկայացվել էին՝ չնայած նմանատիպ գործերի անբարենպաստ արդյունքներին, երբ վնասներին վերաբերող հայցերը մերժվել էին՝ որպես լեհական իրավունքում որևէ իրավաբանական հիմք չունեցողների (տես նաև ստորև՝ կետ 107):

94. Հայցվորների առաջին խումբը վիճարկել էր Պետության կողմից դրսևորված սահմանադրական խախտումն այն առումով, որ այն իրենց զրկել էր վարկավորման իրավունքն իրացնելու հնարավորությունից և որ ստեղծել էր արատավոր, պատրանքային և անարդյունավետ մեխանիզմ՝ 1997թ. Հողի կառավարման օրենքի 212 բաժնում ամրագրված իրենց իրավունքներից օգտվելու համար: Նրանք հիմնվում էին Հանրապետական համաձայնագրերի դրույթների վրա՝ որպես դրամական փոխհատուցման համար իրավական հիմք, և պնդում էին, որ իշխանությունները թույլ են տվել օրինական իրավունքների սահմանադրական խախտում՝ Սահմանադրության 77 հոդվածի իմաստով:

95. Երկրորդ խումբը պնդել է, որ Պետությունը թույլ է տվել սահմանադրական խախտում, նախ՝ հետագա օրենքների ընդունման միջոցով և թերի պրակտիկայի

միջոցով մշտապես անհնարին դարձնելով իրենց պահանջների բավարարումը և, երկրորդ, Հանրապետական համաձայնագրերը չիրապարակելով Օրենքների տեղեկագրում, այդպիսով խոչընդոտելով հայցվորներին հիմնվելու դրանց վրա՝ դատարանների առջև իրենց քաղաքացիական պահանջների պաշտպանության հարցում:

Բոլոր հայցվորները գտել էին, որ կրած վնասներն իրենց քանակով հավասար են այն սեփականության արժեքին, որն իրենք կամ իրենց ընտանիքներն ստիպված էին թողնել Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս:

Առաջին երկու վճիռներն ընդունվել էին 2003թ. ապրիլի 2-ին և 7-ին:

(i) 2003թ. ապրիլի 2-ի որոշումը

96. 2003թ. ապրիլի 2-ին Կրակովի շրջանային դատարանը՝ լսելով երեք անձի՝ Բ. Ջ -ի, Ժ. Կ.-ի և Բ.Կ.-ի կողմից բերված հայցն ընդդեմ Պետական գանձապետարանի՝ Պետության կողմից Հողի կառավարման օրենքի 212 բաժնի հիման վրա փոխհատուցման նրանց իրավունքը չբավարարելու արդյունքում պատճառված վնասի հատուցման վերաբերյալ, բավարարել է նրանց հայցն ամբողջությամբ:

97. Դատարանը պարզել է, որ 1991թ. մինչև 1998թ. Կրակովի շրջանային գրասենյակը կազմակերպել է սեփականության վաճառքի համար 22 աճուրդ, որոնց Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս տարածքներից հայրենադարձված անձինք կկարողանային մասնակցել: Որոշ աճուրդների միայն կարող էին մասնակցել այն անձինք, որոնք փոխհատուցման համար դիմել էին մինչև 1990թ. մայիսի 26-ը: 2002թ. Կրակովի մարզպետն սկսել է անցկացնել աճուրդներ, բայց այդ տարվա ընթացքում անցկացվել էր միայն 2 այդպիսի աճուրդ:

Շրջանային դատարանը հայցվորների՝ վարկավորման իրավունքներին առնչվող իրավիճակը նկարագրել է հետևյալ կերպ.

« . . . այդ աճուրդների կազմակերպումը կամ ամբողջովին բացառում էին Նեման (Խոտոր) գետից դուրս տարածքներից անձանց մասնակցությունը, կամ մասնակցությունը սահմանափակում էին այն անձանցով, ովքեր բնակվել են այդ շրջանում, կամ առաջարկվող գույքը չէր կարող բավարարել հայցվորների պահանջները՝ հաշվի առնելով նրանց իրավունքների արժեքը: Նաև եղել են այնպիսի իրավիճակներ, երբ Պետական գանձապետարանի Գյուղատնտեսական սեփականության գործակալությունը կազմակերպել է աճուրդներ, որոնց, համապատասխան դրույթների համաձայն, բացառել են Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս անձանց մասնակցությունը:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն իրավիճակներին, որոնց պարագայում աճուրդներին չի բացառվել Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս անձանց մասնակցությունը: Դրանք տեղի են ունեցել չափազանց հազվադեպ: Այդպիսի

իրավիճակներում մարդկանց մեծ խմբեր, որոնք ունեցել են փոխհատուցման իրավունք, կարող էին մասնակցել: Այդ մարդիկ, նրանց պահանջները բավարարելու համար հատկացված գույքի փոքր ծավալի պատճառով, չէին կարող ստանալ բավարարում, նրանք պետք է մեկնարկային գինը բարձրացնեին այնքան, որ վաճառքի համար սեփականության գինը լիներ մի քանի անգամ բարձր, քան դրա շուկայական արժեքը: Հատկանշական էր, որ միայն Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս անձինք էին մասնակցել այդ աճուրդներին, թեև կազմակերպիչները նաև թույլատրել էին այնպիսի մարդկանց մասնակցությունը, ովքեր կարող էին սեփականություն գնել կանխիկ դրամով: Աճուրդներից մեկում սեփականությունը, որի պահուստային գինը, գնահատված շուկայական գներով, եղել է 115.000 լեհական զլոտի, վաճառվել է 700.000 լեհական զլոտիով: Մեկ այլ աճուրդում հողամասը՝ շենքով, որն օգտագործվել էր որպես սերմնաբուծական տարածք, և որի պահուստային գինը եղել է ընդամենն ավելի քան 200.000 լեհական զլոտի, վաճառվել է 1.500.000 լեհական զլոտիով: Վերոնշյալ իրավիճակի համատեքստում բավական է ասել, որ Պետական գանձապետարանի՝ Սահմանամերձ մարզի վարկատուների համալեհական ընկերակցության կրակոլյան բաժանմունքի գործունեության ոլորտի շրջանակներում, այսինքն՝ նախկին Կրակովի մարզի տարածքի և Nowy Sacz մարզի մի մասի շրջանակներում վկայական կամ վարչական որոշում ունեցող մոտ 300 անձանց ընդհանուր թվից միայն մոտավորապես 20-ն է ստացել սպառիչ իր վարկավորման իրավունքի բավարարումը և նրանցից ոչ մեկը չի ստացել լիարժեք փոխհատուցում իր իրավունքի դիմաց: Հարկ է հավելել, որ Պետական գանձապետարանի Սահմանամերձ մարզի վարկատուների համալեհական ընկերակցության կրակոլյան բաժանմունքի գործունեության շրջանակներում 3.600 մարդ փորձել է ստանալ թողած սեփականության համարժեքն ստանալու իրենց իրավունքը հաստատող վկայական»:

Դատարանն այնուհետև գտել է, որ հայցվորները կամ նրանց իրավահաջորդներն ավելի վաղ հրաժարվել էին ընդունել փոխհատուցման ենթակա սեփականությանը վերաբերող երկու առաջարկ: Դատարանը հրաժարումը համարել է արդարացված, քանի որ գույքը ձեռք բերելու պայմանը տրամադրվող հողատարածքում 4 տարվա ընթացքում տուն կառուցելն էր, մինչդեռ հայցվորները միջոցներ չեն ունեցել այդպիսի ներդրումների համար: Երկրորդ առաջարկը կայացել է նրանում, որ այլ քաղաքում վարձակալված երեք շենքերից պետք է ընտրվեին բնակարաններ, բայց այդ շենքերը եղել են անմխիթար վիճակում:

98. Շրջանային դատարանը կիսել է Սահմանադրական տրիբունալի կարծիքն առ այն, որ Հանրապետական համաձայնագրերը չեն կազմել ներպետական իրավունքի մաս: Հետևաբար, դրանք չէին կարող հանդիսանալ իրավական հիմք՝ դրանց համաձայն դատարանի առջև քաղաքացիական հայց ներկայացնելու համար: Նա գտել է, այնուամենայնիվ, որ, Պետության վարքագիծը հանդիսանում է սահմանադրական խախտում եւ գտել, որ.

«Ինչպես սույն գործում հանգամանորեն ապացուցվել է՝ առաջացել էր տարօրինակ իրավիճակ, երբ իրավունք ունեցող անձինք սպասել են տարիներ շարունակ, որպեսզի մասնակցեն աճուրդի, և այնուհետև, եթե աճուրդը փաստորեն տեղի է ունեցել, գիտենալով, թե

որքան դժվար կլինի վարկավորման իրենց իրավունքից օգտվելը, նրանք առաջարկել են սեփականության շուկայական արժեքը շատ ավելի գերազանցող գին: Դրանով, նրանք հայտնվել են այնպիսի իրավիճակում, որ կորցրել են իրենց իրավունքների մեծ մասը: Իրենց իրավունքներից օգտվելու հնարավորության խիստ սահմանափակումները հանգեցրել են դրանց վերացմանը: Այդ իրավիճակը, երբ Պետությունն ստեղծել է վերը նկարագրված հանգամանքները, իրոք հանդիսանում է չարդարացված էքսպրոպրիացիա, որը Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս տարածքներից անձանց զրկում է իրենց ունեցած իրավունքներից: Պետության կողմից այդպիսի իրավիճակի ստեղծումն անգամ կարելի է դիտել հայրենադարձված անձանց իրավունքների առնչությամբ ապօրինություն:

Պետք է առավել եւս ընդգծել, որ օրենսդիր մարմինը ոչ միայն ունի սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված նորմեր եւ ընթացակարգեր սահմանելու դրական պարտավորություն, այլ ունի նաեւ բացասական պարտավորություն՝ ձեռնպահ մնալ այնպիսի օրենսդրական ակտերի ընդունումից, որոնք կարող են վերացնել այդպիսի իրավունքների իրավական պաշտպանությունը, կամ կարող են սահմանափակել դրանք, չխոսելով արդեն դրանց իսպառ վերացման մասին: Եթե օրենսդիր մարմինը չկատարի վերոնշյալ պահանջները, ապա դա կհամարվի Սահմանադրության 64 հոդվածի 2-րդ կետի խախտում և կհամարվի օրինազանցություն . . . :

Ըստ այդ դատարանի որոշման՝ թեև վերը նշված օրենսդրությունից բխող՝ օրենքով սահմանված սահմանափակումները, որոնք վերաբերում էին տեղական իշխանության մարմիններին, գյուղատնտեսական վերակառուցմանը, բանակի արդիականացմանը և այլ հիմնախնդիրների, չեն արդարացնում այն մարդկանց հանդեպ դրսևորված խտրականությունը, որոնք ունեն արտասահմանում թողնված սեփականության վարկավորման իրավունք, սոսկ նրա համար, որ այդ մարդիկ չեն կարող կանխիկ դրամով վճարել այդ սեփականության գինը կամ իրավունքի (անժամկետ օգտագործման) համար վճարը . . . :

Այն սեփականության իրավունքին առնչվող՝ օրենքով սահմանված սահմանափակումները, որոնք ձեռք էին բերվել Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս տարածքներից հայրենադարձված անձանց կողմից, ստեղծում են այնպիսի իրավիճակ, որ նրանք զրկված են օրենսդիր մարմնի կողմից սահմանված արժողությամբ սեփականությունից:

Դա, իրոք, Պետության կողմից կատարված սահմանադրական խախտում է, որի հետևանքով Պետությանը վերագրվող պատճառներով, հայցվորները վնաս են կրել, ինչը դրսևորվում է նրանում, որ նրանք անկարող էին իրացնել համապատասխան վարչական ակտով հաստատված արժողությամբ սեփականություն ստանալու իրենց իրավունքը: Այն պարագայում, երբ օրենսդիր մարմինը 1985թ. օրենքի 81-րդ բաժնում և 1997թ. Հողի կառավարման օրենքի 212-րդ բաժնում Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս մարդկանց տվել է արտասահմանում թողնված սեփականության արժեքի վարկավորման իրավունք՝ Պետական գանձապետարանին պատկանող հողերում գտնվող շինհրապարակների գնի կամ շենքերի ու շինությունների գնի դիմաց, հետագա գործողությունն այդ սոցիալական խմբի համար այդ իրավունքից օգտվելու ցանկացած հնարավորություն դարձնում էր անարդյունավետ:

Իր ելույթում, հայրենադարձված անձանց, նաև հայցվորների՝ ներկա դեպքի համատեքստում, կրած վնասը կայանում է այն տարբերության մեջ, որ նրանք պետք է կարողանային ունենալ իրենց իրավունքի արժեքի շրջանակներում՝ 1997թ. Հողի

կառավարման օրենքի 212-րդ բաժնին համապատասխան, եւ փաստացի ունեն այն, ինչը գործնականում Պետության կողմից սխալ ձևով օրենքի կիրառման հետևանք է:

Սահմանադրության 77 հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ յուրաքանչյուր ոք ունի հանրային իշխանության կողմից կատարված անօրինական գործողությունների հետևանքով պատճառված վնասի դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք: Պետական գանձապետարանի պատասխանատվությունը բխում է Քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածից, քանզի այն կապված է ամբողջությամբ հանրային իշխանության գործառնության հետ, այլ ոչ թե որոշակի անձանց հետ՝ կապված նույն հաստատության հետ, նկատի ունենալով, որ պատասխանատվություն է առաջանում, եթե առկա է անօրինական գործողություն: Բացի դրանից, հանրային իշխանության գործառնությունը դրսեւորվում է ավելի լայն իմաստով, գործողության կամ անգործության, որոշակի գործողությունների կամ կարգադրությունների, վճիռների, վարչական որոշումների, քվազինորմատիվ ակտերի և, ի վերջո, օրենսդրական գործունեության միջոցով . . . :

Այն փաստը, որ (հայցվորների) համար անհնարին էր իրենց ձեռք բերած իրավունքից օգտվելը՝ առանց դրանց արժեքի մեծ մասի նվազեցման, նրանց իրավունք է վերապահում, օրինական իրավունքների խախտման համար պատասխանատվության հիման վրա, պահանջել համապատասխան վկայականում նշված չափին հավասար փոխհատուցում:

Միանգամայն հասկանալի է, որ հայցվորներն այն վկայականներն ստանալուց հետո, որոնք հաստատում են իրենց իրավունքը՝ ինչպես ամրագրված է 1997թ. Հողի կառավարման օրենքի 212-րդ բաժնում, չեն մասնակցել կազմակերպված (իշխանության կողմից) աճուրդներին, քանի որ այն աճուրդների թիվը, որոնց անցկացման մասին հնարավոր է նրանք գիտեին, շատ փոքր էր: Սակայն հայրենադարձված անձանց թվից աճուրդներին մասնակցելու իրավունք ունեցող անձանց՝ աճուրդին ցանկացած հնարավոր մասնակցությունը կարող էր ավարտվել իրենց իրավունքների էական չափի կորուստներով:

Նույնիսկ այն պարագայում, երբ Սահմանադրական տրիբունալի 2002թ. դեկտեմբերի 19-ի որոշումն անմիջական ազդեցություն ունեցավ Օրենքների տեղեկագրում հրապարակումից հետո, այսինքն՝ 2003թ. հունվարի 8-ին, որոշում, որը գործնականում վերացրեց հայրենադարձված անձանց կողմից իրենց իրավունքների իրացման նկատմամբ կիրառվող սահմանափակումը, Ձինվորական սեփականության գործակալությունը և Պետական գյուղատնտեսական սեփականության գործակալությունը համարելով, որ այդ որոշմամբ Սահմանադրական տրիբունալը պահանջել է նորացնել 1997թ. Հողի կառավարման օրենքի և այլ օրենքների դրույթները, ստեղծել է մի իրավիճակ, որում հայրենադարձված անձանց համար շարունակում էր անհնարին լինել իրենց ձեռք բերած իրավունքի իրացումը:

Այդ փաստը, ինչպես նկարագրված է այդ դեպքերի փաստերի հաստատման մեջ, հանդիսանում է հանրաճանաչ փաստ՝ քաղված լրագրային հաղորդումներից: Այդպիսով, Կառավարությունը, ոչ ճիշտ մեկնաբանելով Սահմանադրական տրիբունալի որոշումը, շարունակում է շրջափակել հայրենադարձված անձանց իրավունքները՝ դրանով կատարելով օրինական իրավունքների՝ ավելի վաղ այդ Տրիբունալի կողմից նկարագրված աստիճանի և հետևանքներով խախտում»:

99. 2003թ. օգոստոսին պատասխանողներն ընդդեմ այդ վճռի գանգատ են ներկայացրել Կրակովի վճռաբեկ դատարան:

Գանգատը քննության է առնվել 2003թ. սեպտեմբերի 24-ին: Վճռաբեկ դատարանը ընդունել է ստորին ատյանի դատարանի կողմից հաստատված համարված փաստերը, բայց փոխել է եզրահանգումները: Նա համապատասխանաբար փոփոխել է առաջին ատյանի որոշումը և մերժել գանգատը:

Պատճառաբանական մասում Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ վարկավորման իրավունքի իրականացումը մեծամասամբ կախված է եղել իրավասու անձի գործունեությունից: Այն, ուստի, հանդիսացել է սոսկ պատահական իրավունք: Բացի դրանից, որևէ դրամական փոխհատուցում չի նախատեսվել 212-րդ բաժնում, որը կանոնակարգել է որոշակի այլ ընթացակարգ՝ Պետությանը պարտավորությունից ազատելու համար: Հայցվորները կարող էին փոխհատուցում ստանալ, եթե միայն ապացուցեին, որ իրենց համար անհնարին է եղել ստանալ ցանկացած փոխհատուցում՝ որպես սեփականություն, Լեհաստանի ողջ տարածքում: Այդ համատեքստում դատարանն ընդգծել է, որ հայցվորները դեռևս չեն սպառել ներպետական օրենսդրության համաձայն մատչելի բոլոր միջոցները: Նրանք չեն մասնակցել աճուրդներին և հրաժարվել են գնել իշխանությունների կողմից իրենց առաջարկված սեփականությունը՝ որպես փոխհատուցում: Աճուրդներին իրենց ակտիվ մասնակցության միջոցով միայն հայցվորները կարող էին ցույց տալ, որ դժվարություններ են կրել իրենց պահանջների բավարարման հարցում: Վճռաբեկ դատարանը նաև գտել է, որ որևէ հիմք չի եղել այն առումով, որպեսզի Պետությանը վերագրվի սահմանադրական խախտման համար պատասխանատվություն, մասնավորապես պատասխանատվություն՝ ենթադրյալ օրենսդրական անգործության համար: Նա մերժել է այն գաղափարը, որ օրենսդիր մարմինը, ստեղծելով սխալ օրենսդրություն կամ անկարող լինելով հավուր պատշաճի երաշխավորել Նեման (Խոտոր) գետի մարդկանց իրավունքները, անօրինական կարգով օտարել է հայցվորների իրավունքները:

100. 2004թ. մայիսի 14-ին հայցվորները վճռաբեկ բողոք են ներկայացրել Գերագույն դատարան: Վճռաբեկ բողոքը գտնվում է քննության փուլում:

(ii) 2003թ. ապրիլի 7-ի վճիռը

101. 2003թ. ապրիլի 7-ին Կրակովի շրջանային դատարանը, այլ կազմով, լսելով երկու անձի՝ T. Rz.-ի և E. Rz.-ի կողմից ընդդեմ Պետական գանձապետարանի (Մատոպոլսկի նահանգապետ) բերված հայցը, բավարարել է հայցվորների՝ 1997թ. Հողի կառավարման օրենքի 212-րդ բաժնում նախատեսված պարտավորությունը

Պետության կողմից չկատարելու արդյունքում պատճառված վնասի հատուցման պահանջը:

102. Շրջանային դատարանը գտել է, որ Հանրապետական համաձայնագրերը չէին կարող քաղաքացիական պահանջների համար հիմք հանդիսանալ, քանի որ մինչ այդ պահը դրանք պատշաճորեն չէին հրապարակվել Օրենքների տեղեկագրում: Նա, սակայն, այնուհետև գտել է, որ ոչ միայն Պետության կողմից վարկավորման իրավունքի արդյունավետ բավարարումը չապահովվելը, այլև նրա կողմից իր օրինական պարտավորության` Հանրապետական համաձայնագրերի հրապարակման, չկատարումը, որը խոչընդոտել է հայցվորներին հենվելու դրանց վրա` որպես իրավական հիմք, հանդիսանում է օրինական իրավունքների խախտում, որի համար պատասխանատու էր Պետական գանձապետարանը: Այն, *inter alia*, գտել է.

«(փաստերի վերաբերյալ)

Ցավոք, պետք է նշել, որ թեև այնքան երկար ժամանակ չի անցել Սահմանադրական տրիբունալի որոշման ընդունումից հետո, Գործակալությունը, որը տնօրինում է Պետական գանձապետարանի սեփականությունը, ներկայումս դադարեցրել է այդ սեփականության վաճառքի համար աճուրդների կազմակերպումը` այն հիմնավորմամբ, որ չկա որևէ նոր օրենսդրական նորմ, որը կփոխարինի չեղյալ հայտարարվածին: Սակայն, հարկ է նշել, որ Սահմանադրական տրիբունալի որոշումը ... վերաբերում է, ինչպես վերը նշվեց` «համակարգից սահմանափակումների վերացմանը», հետևաբար, Ինտերնետում հանրությանը մատչելի հայտարարության մեջ արտահայտված դիրքորոշման համար որևէ հիմք չկա: Արդյունքում, (պահանջների բավարարման) այդ հնարավորությունը մնում է պատրանքային Նեման (խտոր) գետի մարդկանց համար:

(Իրավունքի վերաբերյալ)

Դատարանի կողմից հաստատված փաստի լույսի ներքո, անկասկած է, որ թեև 1944թ. սեպտեմբերի 9-ի` Ուկրաինական ԽՍՀ հետ կնքված համաձայնագիրը վավերացվել է, սակայն այն մինչ օրս չի հրատարակվել Օրենքների տեղեկագրում (ինչը նույնությամբ վերաբերում է նաև Բելոռուսական ԽՍՀ-ի հետ կնքված համաձայնագրին): Ուստի վերը մեջբերված սահմանադրական դրույթների համաձայն այն չի կարող հանդիսանալ իրավունքի աղբյուր, քանի որ մինչ օրս չի կազմել ներպետական իրավունքի մաս: Հետևաբար, այդ համաձայնագիրը չի կարող անմիջականորեն կիրառվել կամ հայցվորների պահանջների բավարարման համար հիմք հանդիսանալ: Նման դիրքորոշում արտահայտել է նաև Սահմանադրական տրիբունալն իր` 2002թ. դեկտեմբերի 19-ի որոշման մեջ, որն արդեն հիշատակվել է տվյալ պարագայում կապված փաստերի հաստատման հետ...:

Հայցվորները պահանջել են 1944թ. սեպտեմբերի 9-ի` Ուկրաինական ԽՍՀ հետ կնքված համաձայնագրի հրապարակում, բայց Արտաքին գործերի նախարարը հրաժարվել է այդ ուղղությամբ միջոցներ ձեռնարկել, ինչը նա պարտավոր էր անել համաձայն Միջազգային պայմանագրերի մասին օրենքի, պատասխանելով, որ համաձայնագրի գործողությունը

դադարել է՝ կատարման ժամկետը լրանալու կապակցությամբ: Այդ միտքը հայտնելու համար հիմք է հանդիսացել այն, որ, ըստ Նախարարի կարծիքի՝ համաձայնագիրը կատարվել է, մոռացության է մատնվել, ուստի դրա գործողությունը դադարել է՝ հաշվի առնելով ԽՍՀՄ կառավարության հետ կնքված 1952թ. պայմանագիրը...:

Այդ կարծիքը սխալ է առնվազն երկու պատճառով:

Նախ, Վիեննայի կոնվենցիան ձևական առումով չի նախատեսում համաձայնագրի գործողության դադարեցման հնարավորություն՝ դրա կատարման հետևանքով, այլ ավելի շուտ՝ համաձայնագիրը չեղյալ հայտարարելու հետևանքով դրա գործողության դադարում...:

Եթե նույնիսկ հնարավոր լինի ընդունել այն հնարավորությունը, որ համաձայնագրերի գործողությունը դադարի՝ դրանց կատարման հետևանքով, սովյալ պարագայում դա տեղին փաստարկ չէ, երբ դրանք դեռ լիովին չեն կատարվել...:

Բացի վերոնշյալից, որը, որոշ իմաստով ծայրահեղ դեպքում կարող է ընդունելի լինել, կարելի է հավելել, որ այն փաստի ընդունումը, թե Հանրապետական համաձայնագրերի գործողությունը դադարել է 1952թ., կունենա տարօրինակ հետևանքներ, քանզի հարկ է հիշել, որ այդ պարագայում այդ արդյունքը կարձանագրվեր... ստույգ հենց այդ ամսաթվից: Բայց այդ դեպքում պետք է հարց տալ՝ ինչու՞, օրինակ, Գերագույն դատարանն իր նախադեպային իրավունքում անհանգստություն է հայտնել 50 տարվա վաղեմություն ունեցող համաձայնագրերի հիմնախնդրի առնչությամբ, որոնք արդեն գործողության մեջ չէին: Օրինակ, Գերագույն դատարանի 7 դատավորների՝ 1990թ. մայիսի 30-ի հայտնի որոշման մեջ (III CZP 1/90...), Գերագույն դատարանը հղում է կատարել ոչ միայն Հոլի կառավարման օրենքի 81-րդ բաժնին և 1985թ. էքսպրոպրիացիայի օրենքին, որոնցում ամրագրված է վարկավորման իրավունքը, այլ նաև 1944թ. Հանրապետական համաձայնագրերին և քննության է առել ըստ էության 3 հոդվածի 6-րդ կետը...:

Վերոնշյալ փաստարկներից կարելի է նկատել, որ գործադիր իշխանությունը, չնայած այդ խնդրով հայցվորների դիմումի առկայությանը, ձեռնամուխ չի եղել Ուկրաինական ԽՍՀ-ի հետ կնքված համաձայնագրի հրատարակմանը (առնվազն), թեև գոյություն ունեցող օրենքով սահմանված է վավերացված պայմանագրերի անհապաղ հրատարակման պարտավորություն...: Ավելի ստույգ՝ հանրային իշխանությունը ձեռնպահ է մնացել այդպիսի գործողությունից, չնայած ըստ օրենքով ամրագրված պարտավորության պետք է այդպես վարվեր, և, հետևաբար, նա գործել է ի խախտումն օրենքի (օբյեկտիվ օրինազանցություն): Հետևաբար, Քաղաքացիական օրենսգրքի 417 հոդվածով պահանջվող պատասխանատվության առաջին պայմանը՝ Սահմանադրության 77 հոդվածի 1-ին կետի հետ համակցված, կատարվել է...:

Գործի քննության արդյունքներով, այդ դատարանը գտել է, որ հայցվորները չեն կարողացել իրենց պահանջները բավարարել 1997թ. Հոլի կառավարման օրենքի համաձայն, քանի որ Պետական գանձապետարանը, որը ներկայացրել է մարզպետը, հնարավորություն չի ընձեռել օգտվել վարկավորման իրավունքից՝ աճուրդի համար չառաջարկելով որևէ անշարժ գույք, և այդ իրավիճակը տեսել է տարիներ շարունակ: Այդ հանգամանքներում, ինչպես արդարացիորեն նշել է Սահմանադրական տրիբունալը, այդ իրավունքը վերածվել է պատրանքի: Նշվել է նաև, որ իրավիճակը չի փոխվել նույնիսկ Սահմանադրական տրիբունալի որոշումից հետո...:

Ինչպես վերը նշվեց, եթե 1944թ. սեպտեմբերի 9-ի՝ Ուկրաինական ԽՍՀ-ի հետ կնքված համաձայնագիրը հրապարակվեր Օրենքների տեղեկագրում, ապա, համաձայն Սահմանադրության 241 հոդվածի՝ այդ Համաձայնագիրը կքննարկվեր Սահմանադրության 91 հոդվածի հիման վրա. այդ դեպքում կլիներ դրա ինքնակատարման բնույթի յուրատեսակ ենթադրություն, և այդ դատարանը պարտավոր կլիներ այն կիրառել տվյալ գործով...:

...եթե Հանրապետական համաձայնագրերը հրապարակված լինեին, այդ դեպքում ներկայումս որևէ խոչընդոտ չէր լինի վերը նշված պահանջները համաձայնագրերի դրույթների հիման վրա քննության առնելու համար... Ըստ այդ դատարանի կարծիքի՝ վերոնշյալ նկատառումները ցույց են տալիս, որ համաձայնագրերի այդ դրույթներն իրենց բնույթով ինքնակատարվող են...:

Որ էական նշանակություն ունեցող պնդում է: Քանի որ, թեև հայցվորները կարող էին վկայակոչել այդ փաստաթուղթը, սակայն դրա բացակայությունը իրավական համակարգում գործնականում դա անհնարին է դարձնում: Բայց այդ բացակայությունը գործադիր մարմնի կողմից թույլ տրված անօրինական բացթողման արդյունք է, որը շրջանցել է Համաձայնագիրն Օրենքների տեղեկագրում հրապարակելը:

Հաշվի առնելով այդ հանգամանքները, հստակ և անմիջական պատճառական կապ կա հանրային իշխանությունների կողմից թույլ տրված անօրինական բացթողման և հայցվորների կրած կորուստների միջև: Այդ դրամական կորուստները կայանում են այն փաստում, որ հայցվորների համար անհնարին էր իրենց պահանջների բավարարումն ստանալ քաղաքացիական հայցերի միջոցով՝ հիմնված Համաձայնագրի 3 հոդվածի 6-րդ կետի վրա, այն պայմաններում, որ այդպիսի դատավարության ելքը ներկայումս կանխորոշված է (պահանջների մերժումը կամ, ինչպես ներկա լսումներում է, որ այդպիսի պահանջները չհիմնավորված են): Որոշակի է, որ այդպիսի լսումները չեն կարող դրական ելք ունենալ...:

Հարկ է ընդգծել, որ վերը նկարագրված վնասները չէին պատճառվի, եթե հայցվորների համար հնարավոր լիներ օգտվել իրենց, այսպես կոչված՝ վարկավորման իրավունքից, որը կայանում է արտասահմանում թողած սեփականության արժեքի փոխհատուցման մեջ: Հետևաբար, վնասներ հասցնելու փաստը, զրկված լինելով լսումների անցկացման հնարավորությունից՝ սերտորեն կապված է նաև այդ փաստի հետ:

Եզրափակում. հանրային իշխանությունների կողմից թույլ տրված անօրինական բացթողումը կայանում է ոչ թե Օրենքների տեղեկագրում Համաձայնագրի չհրապարակման հանգամանքում, չնայած T. Rz.-ի և E. Rz.-ի դիմումներին, որ այդ հանգամանքն իրենց զրկել էր առավելաչափ արդյունավետ փոխհատուցում ստանալու հնարավորությունից, այն է՝ հայցվորների՝ Ուկրաինայում թողած սեփականության արժեքը, որը նրանք պահանջել էին Ուկրաինական ԽՍՀ-ի հետ կնքված համաձայնագրի 3 հոդվածի 6-րդ կետի հիման վրա»:

(g) Գերագույն վարչական դատարանի 2003թ. մայիսի 29-ի և 2003թ. դեկտեմբերի 12-ի որոշումները

103. 2003թ. մայիսի 29-ին Գերագույն վարչական դատարանը լսել էր E. Rz.-ի (հայցվորը վերը նշված լսումներում) և ոմն A. K.-ի բերած գանգատները: Դիմողները գանգատները ներկայացրել էին Գերագույն վարչական դատարանի 1995թ. մայիսի

11-ի օրենքի 26-րդ բաժնի հիման վրա, պնդելով Վարչապետի անգործությունն առ այն, որ նա չի հրատարակել 1944թ. սեպտեմբերի 9-ի Հանրապետական համաձայնագրերը՝ կնքված Լեհական Ազգային ազատագրման կոմիտեի և Ուկրաինական ու Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների կառավարությունների միջև (տես նաև վերը՝ կետեր 11 և 39-40):

104. Գերագույն վարչական դատարանը մերժել է գանգատները՝ գտնելով, որ դրանք սխալ ուղղվածություն ունեն: Մասնավորապես, որևէ խնդիր չի եղել Վարչապետի անգործության առումով, քանի որ նա չի կարող պատվիրել միջազգային պայմանագրի հրապարակումը՝ առանց Արտաքին գործերի նախարարի նախնական երաշխավորության: Վերջինս, սակայն, չի երաշխավորել Հանրապետական համաձայնագրերը հրատարակել Օրենքների տեղեկագրում:

Իր որոշման մեջ դատարանն արել է որոշ կարևոր եզրահանգումներ փաստի եւ իրավունքի հարցերով: Նա նաև վիճարկել է Սահմանադրական տրիբունալի կարծիքը՝ Հանրապետական համաձայնագրերի պարտադիր ուժ ունենալու առումով, և հայտնել է այն կարծիքը, որ համաձայնագրերից յուրաքանչյուրի 3-րդ հոդվածն անմիջականորեն կապված է հայրենադարձված անձանց իրավունքների ու պարտականությունների հետ և պարզապես չի պարունակել ուղղակի գործելու խոստում:

105. Ի թիվս այլնի, դատարանը գտել է.

«Ըստ Գերագույն վարչական դատարանի կարծիքի՝ այդ Համաձայնագրի էությունը, մասնավորապես 3-րդ հոդվածում, ցույց է տալիս, որ այն առնչվել է անմիջականորեն հայրենադարձված անձանց իրավունքներին և պարտականություններին: Այն չի պարունակել գործելու խոստում, ինչը չէր կարող ինքնին հանդիսանալ պահանջի հիմք, քանի որ այն միայն նախատեսում էր, ինչպես նշված է Սահմանադրական տրիբունալի 2002թ. դեկտեմբերի 19-ի որոշման մեջ, և Նեման (Խոտոր) գետի սեփականության հարցով Արտաքին գործերի նախարարության իրավաբանական խորհրդատվական կոմիտեի 2003թ. հունվարի 27-ի կարծիքում, Պետության հատուկ տեսակի պատասխանատվություն՝ ներպետական օրենքում կարգավորելու այն մարդկանց բնակեցման հիմնախնդիրը, որոնք սեփականություն են կորցրել Լեհական սահմանների սահմանման հետևանքով: Դա պարզորոշ երևում է 3-րդ հոդվածի 6-րդ կետից, քանի որ թողած շարժական և անշարժ գույքի արժեքը պետք է փոխհատուցվի ապահովագրական գնահատման հիման վրա . . . :

Ըստ Գերագույն վարչական դատարանի կարծիքի՝ խնդրո առարկա համաձայնագիրը, չնայած պատասխանողի դիրքորոշմանը և Սահմանադրական տրիբունալի 2002թ. դեկտեմբերի 19-ի որոշմանը, դեռևս պարտադիր է, որովհետև այն լիովին չի կատարվել: Համաձայն 1969թ. մայիսի 23-ի՝ Միջազգային պայմանագրերի մասին Վիեննայի կոնվենցիայի՝ պայմանագրերի գործողությունը համարվում է դադարեցված, եթե բոլոր կողմերը դրա վերաբերյալ ավելի ուշ կնքել են այդ նույն առարկային վերաբերող պայմանագիր, և ավելի ուշ կնքված պայմանագրում նշված է կամ այլ կերպ սահմանվել է, որ կողմերը նախատեսել են,

որպեսզի հարցը կարգավորվի այդ պայմանագրին համապատասխան, կամ եթե ավելի ուշ կնքված պայմանագրի դրույթներն այնքան են անհամատեղելի ավելի վաղ կնքված պայմանագրի նման դրույթների հետ, որ այդ երկու պայմանագրերը չեն կարող կիրառվել միևնույն ժամանակ . . .»:

106. 2003թ. դեկտեմբերի 12-ի վերջին երկու որոշումներում /թիվ II SAB 219/03 և II SAB 221/03/, որոնք վերաբերում էին Օրենքների տեղեկագրում Հանրապետական համաձայնագրերի հրապարակման առումով շարունակվող՝ Գործադիրի, մասնավորապես Արտաքին գործերի նախարարի, անգործության վերաբերյալ գանգատներին, Գերագույն վարչական դատարանը լիովին պաշտպանել է վերոնշյալ դիրքորոշումը: Նա այնուհետև կարգադրել է, որպեսզի Նախարարն զբաղվի դիմողների՝ Հանրապետական համաձայնագրերի պատշաճ կերպով հրապարակման վերաբերյալ դիմումներով:

(h) Գերագույն դատարանի 2003թ. նոյեմբերի 21-ի որոշումը

(i) Խորապատկերը

107. 2001թ. ապրիլի 25-ին Վարչավայի շրջանային դատարանը մերժել է Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս (այն մարզում, որը ներկայումս պատկանում է Ուկրաինային) թողնված սեփականության դիմաց դրամական փոխհատուցմանը վերաբերող դիմումը՝ տրված ոմն Cz. S.-ի կողմից ընդդեմ Պետական գանձապետարանի և Գանձապետարանի նախարարի: Cz. S.-ն խնդրել է խնդրո առարկա սեփականության արժեքին համարժեք փոխհատուցում և հիմնվել է, ի թիվս այլնի, Հանրապետական համաձայնագրի 3 հոդվածի 6-րդ կետի վրա: Դատարանը գտել է, որ Համաձայնագրի դրույթները չեն կարող ինքնուրույն իրավական հիմք հանդիսանալ պատասխանողի պատասխանատվության համար, և որ հայցվորը չի կարողացել ցույց տալ վնասի և Պետական իշխանությունների կողմից ցանկացած սահմանադրական խախտման կամ բացթողման միջև պատճառական կապը:

2002թ. մայիսի 28-ին Վարչավայի վճռաբեկ դատարանը հայցվորի գանգատի առնչությամբ պաշտպանել է առաջին ատյանի դատարանի որոշումը և դրա վերաբերյալ նրա պատճառաբանությունները:

(ii) Որոշումը

108. Որոշումն ընդունել է Գերագույն դատարանը, երեք դատավորի կազմով Cz. S.-ի կողմից ընդդեմ վերաքննիչ դատարանի որոշման մեջ բերված վճռաբեկ բողոքի քննության արդյունքում: Գերագույն դատարանը բեկանել է վերաքննիչ դատարանի վճիռը և գործը փոխանցել Վարչավայի վերաքննիչ դատարանին: Իր որոշման մեջ, որը դիտվում է որպես առանցքային որոշում Նեման (Խոտոր) գետի հետ կապված դիմումների և վարկավորման իրավունքի չապահովման համար Պետական քաղաքացիական պատասխանատվության առնչությամբ, Գերագույն դատարանն արել է բազմաթիվ կարևոր եզրահանգումներ:

109. Քննարկելով 1997թ. Հողի կառավարման օրենքի 212-րդ բաժնում ամրագրված իրավունքի բնույթը, Գերագույն դատարանը (ի թիվս այլնի) նկատել է.

«Թեև այդ իրավունքի բնույթը վիճարկելի է, կա, սակայն, գերակա կարծիք առ այն, որ այն կազմում է սեփականության ուրույն իրավունքի բաղադրատարր, (որը հանդիսանում է) ժառանգվող և որոշակի ձևով փոխանցվող, և որի էությունը կայանում է, այսպես կոչված՝ «Նեման (Խոտոր) գետի դրամական միջոցների» օգնությամբ առկա որոշ դրամական պարտավորությունների կատարման հնարավորության մեջ: Այդ, այսպես կոչված՝ իրավունքը . . . , անշուշտ, ունի դրամական արժեք, որը ծագում է այն ապրանքների պիտանելիությունից, որոնք կարող են դրանով գնվել: Այդ ապրանքների պիտանելիությունը որոշված է համաձայն . . . օրենսդրության և գործնականում դրա կիրառման»:

110. Նա այնուհետև նշել է հետևյալը.

«. . . Անշուշտ, կարող է, որ անցած մի քանի տարիներին ընդունված օրենսդրական նախաձեռնություններն ազդել են վարկավորման իրավունքի արժեքի վրա, և որ արժեքի այդ նվազեցումը կարելի է համարել նյութական կորուստ՝ թաքնված վնասի հասկացության տակ: Այդ առումով, անհրաժեշտ է վարկավորման իրավունքի արժեքը թերի համարված օրենքներից ազատ վարկածային իրավական իրադրությունում համադրել դիտարկվող օրենքների դրույթներից բխող այդ իրավունքի արժեքի հետ:

Վնասի առնչությամբ հնարավոր չէ չնշել այն ձեւերը, որոնց միջոցով Նեման (Խոտոր) գետի մարդկանց իրավունքներին վերաբերող իրավական դրույթները գործնականում կիրառվում են. առկա են փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ Պետական գանձապետարանը չի անցկացրել որևէ աճուրդ, որին նրանք կարող էին մասնակցել: Ո՛չ Գյուղատնտեսական սեփականության գործակալությունը, ո՛չ Զինվորական սեփականության գործակալությունը չեն կատարել Սահմանադրական տրբունալի որոշումը: Նման պրակտիկան դիմողների համար, գործնական նպատակներով, անհնարին է դարձնում իրենց վարկավորման իրավունքի իրացումը: Իհարկե,

վնասի առկայության և դրա արժեքի հարցերում ապացուցման բեռն ընկնում է հայցվորի վրա: Ըստ ընդհանուր կարծիքի, այդ վնասը չի նշանակում իրավունքից զրկում, և դրա արժեքը հավասար չէ Ուկրաինայում թողնված սեփականության արժեքին . . . :

Ի վերջո, Նեման (Խոտոր) գետի դիմողները Սահմանադրության 77 հոդվածի 1-ին կետի հիման վրա, կարող են դրամական փոխհատուցումն ակնկալել Պետական գանձապետարանից՝ աճուրդներին իրենց անարգել մասնակցելը սահմանափակող օրենսդրական ակտերի դրույթներից բխող՝ վարկավորման իրավունքի արժեքը պակասեցնելու համար, որն իրենց կամ զրկել է իրենց իրավունքներն իրացնելու հնարավորությունից կամ նվազեցրել է այդ իրավունքների իրացման հնարավորությունը . . . :

Բայց դա չի ենթադրում, որ հնարավոր է (դիմողների համար) ստանալ Սահմանամերձ մարզերում թողնված սեփականության ողջ դրամական արժեքը: Դա կհակասի . . . 1997թ. Հողի կառավարման օրենքի 212-րդ բաժնին, որի հիմքում օրենսդիր մարմինը - գործելով իր օրենսդրական ինքնավարության շրջանակներում - դրել է որոշակի փոխհատուցման մեխանիզմ: Առանցքային պահն այն է, սակայն, որ նախորդ օրենսդրական մեխանիզմները պատրանք են, ինչը Սահմանադրական տրիբունալը ոչ երկիմաստորեն ընդգծել է: Դա ազդեցություն է ունեցել վարկավորման իրավունքի փաստացի արժեքի վրա: Իրոք, այդ իրավունքի արժեքը նվազել է, քանի որ օրենսդիրը, մի կողմից, 212-րդ բաժնի շրջանակից բացառել էր . . . Պետական հողի (որոշ) մասեր, և, մյուս կողմից, գործնականում, այդ դրույթի կիրառման միջոցով այն դարձրել էր անիրագործելի: Արդյունքում, վարկավորման իրավունքը չէր կարող և մինչ օրս էլ չի կարող իրացվել:

Այդպիսի գործողություններն ընդունելի չեն ժողովրդավարական եւ իրավական պետությունում, որը ղեկավարվում է Սահմանադրության 2-րդ հոդվածում ամրագրված՝ սոցիալական արդարության սկզբունքով, կամ այնպիսի Պետությունում, որտեղ երաշխավորվում է սեփականության իրավունքի, գույքային այլ իրավունքների և ժառանգման իրավունքի հավասար պաշտպանությունը (Սահմանադրության 64 հոդվածի 2-րդ կետ):

Հարկ է նշել, որ սեփականության դիմաց փոխհատուցման իրավունք ունեցող անձանց մոտ 90 %-ը սեփականության դիմաց (լիարժեք) փոխհատուցում է ստացել վարկավորման իրավունքի իրացման միջոցով: Հաշվի առնելով, որ վարկավորման իրավունքն ուժի մեջ է գտնվում . . . , Նեման (Խոտոր) գետի այն դիմողների՝ լիարժեք փոխհատուցման պահանջը, որոնք

դեռևս չեն իրացրել վարկավորման իրավունքը, պետք է համարել արդարացված: (Այլ կերպ վարվելը) կլիներ չհիմնավորված խտրականություն Նեման (Խոտոր) գետի մարդկանց (տարբեր խմբերի) միջև՝ սահմանելով վարկավորման իրավունքի իրացման համար որոշակի ընթացակարգ:»

(i) 2003թ. դեկտեմբերի օրենքը

(i) Նախապատրաստական աշխատանքը և Խորհրդարանի կողմից ընդունումը

111. Նույն ժամանակամիջոցում Սենատը նախապատրաստել էր Հողի կառավարման օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրինագիծը, Պետական գանձապետարանի Գյուղատնտեսական սեփականության կառավարման մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը և այլ ակտերում փոփոխություններ կատարելու մասին օրինագծերը: Դրանք Խորհրդարան էին ներկայացվել 2003թ. մարտի 10-ին: Հակիրճ՝ Սենատն առաջարկել էր գործող նորմերի բարեփոխում, որպեսզի ողջ պետական հողերը մատչելի դարձվեն Նեման (Խոտոր) գետի դիմողներին:

112. Սենատի ներկայացրած օրինագծի առաջին ընթերցումը կայացել էր 2003թ. ապրիլի 16-ին: 2003թ. մայիսի 26-ին Կառավարությունը, որը 2003թ. սկզբին պատրաստել էր իր սեփական օրինագիծը (տես նաև վերը՝ կետ 33)՝ ներկայացրել էր իր կարծիքը, որում խստորեն քննադատվել էին Սենատի առաջարկությունները:

Կառավարության օրինագիծը Խորհրդարանին էր ներկայացվել 2003թ. հուլիսի 10-ին: Կառավարությունն առաջարկել էր, որպեսզի ողջ Պետական սեփականությունը մատչելի լինի Նեման (Խոտոր) գետի դիմողներին վաճառելու համար, բայց որ փոխհատուցման արժեքը նվազեցվի մինչև 20.000 PLN:

113. Դրանից հետո Խորհրդարանը որոշել է երկու օրինագծերի վրա աշխատել միաժամանակ:

Առաջին ընթերցումը կայացել էր 2003թ. հուլիսի 29-ին: Երկրորդ և երրորդ ընթերցումները կայացել էին համապատասխանաբար՝ 2003թ. հոկտեմբերի 28-ին և նոյեմբերի 12-ին: Ընթերցումների ընթացքում փոխհատուցելի սեփականության առավելագույն արժեքն ավելացվել էր մինչև 50.000 լեհական զլոտի:

2003թ. նոյեմբերի 12-ին Սեյմն ընդունել է օրինագծերը և օրենքը հանձնվել Սենատին: Սենատն առաջարկել է մի քանի փոփոխություն, որոնք, ըստ էության, Սեյմի կողմից ընդունվել են 2003թ. դեկտեմբերի 12-ին: Այդ նույն օրը 2003թ.

դեկտեմբերի օրենքը ներկայացվել է Լեհաստանի Նախագահին՝ ստորագրման համար: Նախագահն այն ստորագրել է 2004թ. հունվարի 5-ին:

(ii) Գործին առնչվող դրույթները

114. 2004թ. հունվարի 30-ին ուժի մեջ մտած՝ 2003թ. դեկտեմբերի օրենքի 1-ին բաժինը նախատեսում է.

«Այդ օրենքը սահմանում է 1939թ. սկսված պատերազմի հետևանքով Լեհաստանի գոյություն ունեցող սահմաններից դուրս թողնված սեփականության արժեքի՝ Պետական սեփականության դիմաց կամ անժամկետ օգտագործման վճարի դիմաց փոխհատուցման սկզբունքները, և (որոնց առնչությամբ) կիրառվում են հետևյալ փաստաթղթերը.

(1) 1944թ. սեպտեմբերի 9-ի Լեհական Ազգային ազատագրության կոմիտեի և Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կառավարության միջև Լեհաստանի քաղաքացիների՝ Բելոռուսական ԽՍՀ-ի տարածքից և Բելոռուսական բնակչության Լեհաստանի տարածքից տարահանման մասին համաձայնագիրը,

(2) 1944թ. սեպտեմբերի 9-ի՝ Լեհական Ազգային ազատագրության կոմիտեի և Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կառավարության միջև Լեհաստանի քաղաքացիների՝ Ուկրաինական ԽՍՀ-ի տարածքից և Ուկրաինական բնակչության Լեհաստանի տարածքից տարահանման մասին համաձայնագիրը,

(3) 1944թ. սեպտեմբերի 22-ի՝ Լեհական Ազգային ազատագրության կոմիտեի և Լիտվական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կառավարության միջև Լեհաստանի քաղաքացիների՝ Լիտվական ԽՍՀ-ի տարածքից և Լիտվական բնակչության՝ Լեհաստանի տարածքից տարահանման մասին համաձայնագիրը,

(4) 1945թ. հունիսի 6-ի՝ Լեհաստանի Ազգային Միասնության Հանրապետության ժամանակավոր կառավարության և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կառավարության միջև ԽՍՀՄ-ում ապրող՝ ազգությամբ լեհերի ու հրեաների՝ Խորհրդային քաղաքացիությունը փոխելու և Լեհաստան նրանց տարահանման իրավունքի, և Լեհաստանի տարածքում ապրող՝ ազգությամբ ուկրաինացիների, բելոռուսների, ռուսների և լիտվացիների քաղաքացիությունը փոխելու և ԽՍՀՄ տարահանման իրավունքների մասին համաձայնագիրը»:

115. 2-րդ բաժինը նախատեսում է հետևյալը.

«1. Արտասահմանում թողնված սեփականության արժեքի վարկավորման իրավունքը կարող է վերապահվել այդպիսի սեփականության տերերին, եթե նրանք բավարարում են հետևյալ բոլոր պայմանները.

(1) նրանք ապրել են 1939թ. սեպտեմբերի 1-ի օրենքի 1-ին բաժնում նշված տարածքներում՝ պահպանելով այդ օրվա դրությամբ լեհական քաղաքացիությունը և այդ տարածքները լքել են 1939թ. սկսված պատերազմի կապակցությամբ,

(2) նրանք լեհական քաղաքացիներ են, և

(3) նրանք մշտապես բնակվել են Լեհաստանի Հանրապետությունում՝ առնվազն այդ օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

2. Լեհական պետության գոյություն ունեցող սահմաններից դուրս մնացած սեփականության տիրոջ մահվան դեպքում սեփականության արժեքի վարկավորման իրավունքը կարող է փոխանցվել կամ նրա բոլոր ժառանգներին՝ համատեղ, եթե նրանք լեհական քաղաքացիներ են և մշտապես Լեհաստանի Հանրապետությունում բնակվել են առնվազն այդ օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից, կամ մեկ ժառանգի՝ մնացած ժառանգների կողմից որոշվող: Այդպիսի իրավունք ունեցող անձի նշանակումը պետք է կատարվի հայտարարագրի միջոցով՝ ստորագրությամբ (կամ ստորագրություններով) և վավերացվի նոտարի կողմից:

3. Լեհական պետության գոյություն ունեցող սահմաններից դուրս մնացած սեփականության արժեքի վարկավորման իրավունքը, ինչպես սահմանված է այդ օրենքին կամ այլ իրավական նորմերին համապատասխան, չպետք է փոխանցելի լինի՝ առանց վնասելու 2-րդ ենթաբաժինը:

4. Լեհական պետության գոյություն ունեցող սահմաններից դուրս մնացած սեփականության արժեքի վարկավորման իրավունքը չպետք է վերապահվի այն անձին, ով, այլ իրավական նորմերին, ներառյալ հողի կառավարման, գյուղատնտեսական բարեփոխումների կամ գյուղատնտեսական համակարգի և կարգավորման վերաբերյալ նորմերին համապատասխան, ձեռք է բերել սեփականություն կամ Պետական գանձապետարանի սեփականության անժամկետ օգտագործման իրավունք՝ 1-ին բաժնում հիշատակված համաձայնագրերով նախատեսված վերականգնման շրջանակներում»:

116. 3-րդ բաժինը վարկավորման իրավունքը սահմանում է հետևյալ կերպ.

«1. 2(1) և (2) բաժիններում նշված անձինք ունեն, առանց դրանց 2-րդ ենթաբաժնի դրույթները վնասելու, Լեհական պետության գոյություն ունեցող սահմաններից դուրս մնացած սեփականության արժեքի՝ Պետական սեփականության գնի դիմաց կամ այդպիսի սեփականության անժամկետ օգտագործման համար վճարի, այդտեղ գտնվող շենքերի, այլ շինության կամ բնակարանի գնի դիմաց փոխհատուցման իրավունք:

2. Պետության գոյություն ունեցող սահմաններից դուրս մնացած սեփականության արժեքի փոխհատուցումը, ինչպես նշված է (նախորդ) ենթաբաժնում, պետք է կատարվի մինչև այդ սեփականության արժեքի 15%-ին հավասար արժեքի չափով. փոխհատուցվող գումարը չպետք է գերազանցի 50.000 լեհական զլոտին»:

117. 4 և 5 բաժինների համաձայն՝ Նեման (Խոտոր) գետի բոլոր դիմողները պետք է դիմեն համապատասխան մարզի մարզպետին՝ վարկավորման իրենց իրավունքը հաստատելու համար: Հաստատումը կատարվում է վարչական որոշման ձևով, որը կարող է գանգատարկվել Բնակեցման և քաղաքային զարգացման գրասենյակի պետին: Այդպիսի դիմումների տրման վերջին ժամկետը սահմանվել է 2005թ. դեկտեմբերի 31-ը:

6-րդ բաժինը նախատեսում է, որ մարզպետները պետք է վարեն Նեման (Խոտոր) գետի դիմումների գրանցամատյան:

Համաձայն 2003թ. դեկտեմբերի օրենքի՝ փոխհատուցման իրավունքը կարող է իրացվել միայն աճուրդի մասնակցելու միջոցով:

118. 14-րդ բաժնում ամրագրված է հետևյալը.

«1997թ. օգոստոսի 21-ի՝ Հողի կառավարման օրենքում պետք է կատարվեն հետևյալ փոփոխությունները.

1. 212-րդ բաժինը պետք է չեղյալ հայտարարվի, . . . »:

119. 16-րդ բաժնում նշվում է.

«1-ին բաժնում նշված համաձայնագրերից բխող պարտավորությունները պետք է համարվեն պարտավորություններ 2(4) բաժնում նշված անձանց և այն անձանց հանդեպ, ովքեր, համաձայն այդ օրենքի դրույթների, ունեն Լեհական պետության գոյություն ունեցող սահմաններից դուրս մնացած սեփականության վարկավորման իրավունք»:

120. 2004թ. հունվարի 30-ին, 2003թ. դեկտեմբերի օրենքի ուժի մեջ մտնելու օրը, «Քաղաքացիական ծրագիր» կուսակցությունից պատգամավորների խումբը (տես նաև վերը՝ կետ 38), Սահմանադրության 191 հոդվածի հիման վրա՝ համակցված 188 հոդվածի հետ, դիմել է Սահմանադրական տրիբունալ՝ օրենքի բազմաթիվ դրույթների, ներառյալ 2(1) (2), 2 (1) (3), 2(2), 2(4), 3 (2) և 16 բաժինները, սահմանադրականության հարցը որոշելու խնդրանքով: Նրանք վկայակոչել են օրենքի առջև հավասարության, սեփականության և օրինական կարգով ձեռք բերված իրավունքների պաշտպանության սահմանադրական սկզբունքները և իրավական պետության սկզբունքը: Գործը գտնվում է քննության փուլում:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

1. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐԾԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

121. Դիմողը պնդել է Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտումն առ այն, որ Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս տարածքներում մնացած սեփականության համար փոխհատուցման իր իրավունքը, այսպես կոչված՝ «վարկավորման իրավունքը», չի բավարարվել:

Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը նախատեսում է.

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ՝ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում, իր հիմնական շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի, մյուս տուրքերի, կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

A. Դատարանին ներկայացված գործի շրջանակը

122. Դիմումի ընդունելիության մասին որոշման մեջ իր *ratione temporis* իրավագործության շրջանակը որոշելիս Դատարանը գտել է, որ դիմողի գանգատը չի վերաբերում միայն՝ Լեհաստանի կողմից թիվ 1 արձանագրության վավերացման օրվա՝ 1994թ. հոկտեմբերի 10-ից առաջ կամ նույնիսկ հետո տեղի ունեցած կոնկրետ միջոցառման կամ ընդունված որոշման: Կոնվենցիային առնչվող՝ դիմողի գանգատը կայանում է նրա՝ փոխհատուցման ենթակա սեփականության իրավունքի բավարարման հարցում պետության անգործության հանգամանքում, ինչը կրում է շարունակական բնույթ՝ համաձայն Լեհական իրավունքի:

Չաշվի առնելով, որ այդ իրավունքը նրան է վերապահվել վավերացման օրը և գոյություն է ունեցել 1996թ. մարտի 12-ին, երբ նա իր գանգատը հանձնել է Չանձնաժողովին, և 2002թ. դեկտեմբերի 22-ին՝ նրա գանգատի ընդունելիության որոշման կայացման օրը, Դատարանը գտել է, որ ինքն ունեցել է ժամանակավոր իրավագործություն գանգատը քննելու համար: Նա նաև գտել է, որ այն կարող է հաշվի առնել մինչև վավերացումը տեղի ունեցած փաստերը, այնքանով, որքանով դրանք ազդել են վավերացումից հետո ստեղծված իրավիճակի ձեւավորման վրա կամ կարող են օգնել այդ օրվանից հետո տեղի ունեցած փաստերն ըմբռնելու համար (տես՝ Բորնիովսկին ընդդեմ Լեհաստանի, Դեկտեմբեր, Լեհաստան /GC/, թիվ 31443/96, ECHR 2002-X , կետեր 74-77):

123. Սակայն այն օրը, որից սկսած Դատարանն ունի *ratione temporis* իրավագործություն, ոչ միայն ցույց է տալիս այն ժամանակահատվածի սկիզբը, որի ընթացքում և մինչ օրս Լեհական պետության գործողությունները կամ թերացումները Դատարանը կզնահատի Կոնվենցիային դրանց համապատասխանության

տեսակյունից, այլ նաև հիմք կհանդիսանան դիմողի օրինական շահերի փաստացի բովանդակությունն ու շրջանակը որոշելու համար:

124. Թեև գործի պատմական հիմքերը, ներառյալ Պետական սահմանների հետպատերազմյան սահմանումը, այն մարդկանց տարահանումները, որոնց վրա ազդել են այդ իրադարձությունները և Հանրապետական համաձայնագրերը, որոնցում հիմք է դրվել դիմողի համար առաջացած փոխհատուցման իրավունքին (տես վերը՝ կետեր 10-12, 31-41, 67-81), անշուշտ, կարևոր է այսօրվա դրությամբ ստեղծված բարդ իրավական և փաստացի իրավիճակի ըմբռնման համար, Դատարանը չի քննարկի Լեհական պետության որևէ իրավական, բարոյական, սոցիալական, ֆինանսական կամ այլ պարտավորություն, ինչը հանդիսացել է այն փաստի հետևանք, որ Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս սեփականության տերերը դրանից զրկվել են և հարկադրված են եղել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արտագաղթել Խորհրդային Միությունից: Մասնավորապես՝ Դատարանը չի քննարկի այն հարցը, թե պահպանվե՞լ է, արդյոք, Հանրապետական համաձայնագրերի հիման վրա նախկին Խորհրդային հանրապետություններում մնացած սեփականության արժեքն այդ անձանց վերադարձնելու Լեհաստանի պարտավորությունը, որը կարող էր ազդել դիմողի իրավունքի շրջանակի վրա, համաձայն ներպետական օրենսդրության և Կոնվենցիայի, եւ արդյոք Լեհաստանը կատարել է այդ պարտավորությունը:

125. Դատարանի առջև ծառայած միակ հիմնահարցը կայանում է նրանում, թե արդյոք խախտվե՞լ է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը՝ դիմողի՝ փոխհատուցման ենթակա սեփականության իրավունքի իրականացման հետ կապված՝ Լեհական պետության գործողությունների և անգործության հետևանքով, որը Լեհական օրենսդրությանը համապատասխան նա ունեցել է Արձանագրության ուժի մեջ մտնելու օրը, և 1996թ. մարտի 12-ին, երբ նա իր դիմումը հանձնել է Հանձնաժողովին:

B. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կիրառելիությունը

1. Կողմերի փաստարկները

(a) Դիմողը

126. Դիմողը, որը գանգատի ընդունելիության հայցի կապակցությամբ լսումների ժամանակ պնդել է, որ իր իրավունքը հանդիսանում է գույքային իրավունք, որը Լեհաստանը ճանաչել է՝ համապատասխան Հանրապետական համաձայնագրի 3 հոդվածի 6-րդ կետի հիման վրա հայրենադարձված անձանց փոխհատուցում տալու պարտավորություն ստանձնելով: Այդ պարտավորությունն այնուհետև ներառվել է ներպետական իրավունքում, որը նրան՝ որպես հայրենադարձված տատի ժառանգ, տվել է Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս նրա ընտանիքի թողած սեփականության արժեքի՝ Պետությունից գնված անշարժ գույքի անժամկետ օգտագործման գնի կամ վճարի դիմաց փոխհատուցման կոնկրետ իրավունք: Այդ իրավունքը, լեհական դատարանների կողմից ակնհայտորեն ճանաչվել էր որպես գույքային իրավունք և վերջերս Սահմանադրական տրիբունալի կողմից սահմանվել էր որպես «վարկավորման իրավունք»: Այն անվիճելիորեն տեղավորվել է «գույք» հասկացության շրջանակներում՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով:

(b) Կառավարությունը

127. Վկայակոչելով գանգատի ընդունելիության հարցով Դատարանի որոշումը և այն եզրահանգումը, որ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի է, Կառավարությունը պնդել է, որ համաձայն ներպետական օրենսդրության՝ դիմողը եղել է «ուղղակի հայցվոր»՝ փոխհատուցման ենթակա սեփականության վերաբերյալ խնդրանք ներկայացնելու հնարավորությամբ: Նա այդ կապակցությամբ ներկայացրել է դիմում, բայց քանի որ նա չէր ներկայացրել թողած սեփականության առկա շուկայական գինը որոշող փորձագիտական եզրակացություն, իշխանությունները չէին կարող տալ անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթեր, որոնք նրան թույլ կտային մասնակցելու Պետական սեփականության վաճառքի համար կազմակերպվող աճուրդներին:

128. Այդ առումով, Կառավարությունը համենատեղ է պրն Բրոնիովսկու իրավիճակն այլ դիմողի հետ՝ Յանտներն ընդդեմ Սլովակիայի գործում (թիվ 39050/97, կետեր 27 և seq., 4 մարտի 2003թ.)՝ փաստելով, որ նրա իրավունքը - պրն Յանտներինի նման - պայմանական պահանջ է, որը, դիմողի կողմից դրա կիրառման ընթացակարգային պահանջները չկատարելու հետևանքով, դարձել է ժամկետանց:

2. Դատարանի գնահատականը

129. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում «գույք» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն, որը սահմանափակված չէ նյութական իրերի սեփականությամբ և անկախ է ներպետական օրենքում ձևական դասակարգումից: Այնպես, ինչպես նյութական իրերը, ակտիվներ կազմող մյուս իրավունքները և շահերը եւս կարող են գնահատվել որպես «գույքային իրավունք» և, հետևաբար՝ «գույք»՝ այդ դրույթի նպատակների համար: Յուրաքանչյուր գործում ուսումնասիրման ենթակա հարցն այն է, թե արդյոք գործի հանգամանքները դիմողին տրամադրել են թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող անկախ շահ (տես՝ Լետրայդիսն ընդդեմ Յունաստանի, /GC/, թիվ 31107/96, կետ 54, ECHR 1999, երկրորդ, և Բեյելերն ընդդեմ Իտալիայի, /GC/, թիվ 33202/96, կետ 100, ECHR 2000-1):

130. Փանգատն ընդունելի հայտարարելիս՝ Դատարանը մերժել է Կառավարության փաստարկները թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ոչ կիրառելիության վերաբերյալ: Նա գտել է, որ դիմողն ունեցել է գույքային շահ, որը պաշտպանվում է նույն այդ հոդվածով: Նա այնուհետև նշել է, որ դիմողի իրավունքն անընդմեջ ունեցել է օրինական հիմք ներպետական օրենսդրությունում, որը գոյություն է ունեցել 1994թ. հոկտեմբերի 10-ից հետո, և որ այն Լեհաստանի Գերագույն դատարանի կողմից որակվել է, ի թիվս այլնի, որպես «Պետական գանձապետարանին վերագրվող պարտք», ինչն ունեցել է «դրամական և ժառանգական բնույթ» (տես՝ Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի, դեկտեմբեր, մեջբերված է վերը՝ 97-101 կետերում):

131. Այնուհետև, Օմբուդսմենի դիմումի քննության հիման վրա Սահմանադրական տրիբունալի 2002թ. դեկտեմբերին ընդունած որոշման մեջ նշվել է, (տես վերը՝ կետ 28) որ դիմողի իրավունքը «վարկավորման իրավունք» է, որը հանդիսանում է «հատուկ բնույթի գույքային իրավունք», որը «պետք է ճանաչվի որպես սահմանադրորեն երաշխավորվող պաշտպանությամբ օժտված սեփականության իրավունք», և որը եղել է «ուղղակի հանրային - օրինական բնույթի հատուկ սեփականություն»: Թեև Սահմանադրական տրիբունալն ընդունել է, որ այդ իրավունքի նյութականացումը կախված է եղել իրավասու անձի գործողություններից, նա հերքել է այն միտքը, որ իրավունքը գոյություն չի ունեցել մինչ Պետական սեփականության վաճառքի համար աճուրդների վերաբերյալ հաջողակ առաջարկի միջոցով դրա իրացումը: Արդյունքում, Սահմանադրական տրիբունալը որևէ կասկած չի ունեցել, որ վարկավորման իրավունքը ենթակա է պաշտպանության թիվ 1

արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա (տես վերը՝ կետեր 80-87, հատկապես 83 կետը):

Վերոնշյալ որոշմանը հետևած՝ 2003թ. նոյեմբերի 21-ի որոշման մեջ Լեհաստանի Գերագույն դատարանը գտել է, որ վարկավորման իրավունքը «դրամական արժեքի» «հատուկ գույքային իրավունք է», որը «որոշակի ձևով ժառանգվող է և փոխանցվող», և որի էությունը կայանում է «որոշ դրամական պարտավորության հնարավոր առկայության» մեջ, որը բավարարվում է, այսպես կոչված՝ «Նեման (Խոտոր) գետի դրամական միջոցների օգտագործմամբ» (տես վերը՝ կետ 109):

Դատարանն ընդունել է լեհական բարձրագույն դատական մարմինների կողմից կատարված այն իրավունքի վերլուծությունը, որը վերապահվել է դիմողին լեհական օրենսդրությանը համապատասխան: Նա Կառավարության փաստարկներում չի գտել էական ոչինչ, որպեսզի փոխի այն եզրակացությունը, ինչպես արդեն արձանագրվել է ընդունելիության որոշման մեջ, որ դիմողի վարկավորման իրավունքը հանդիսանում է «գույք»՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի նշանակության շրջանակներում:

132. Ինչ վերաբերում է դիտարկվող իրավունքի բովանդակությանը և շրջանակին, Դատարանն արդեն նշել է, որ այդ հիմնախնդիրը պետք է կախված լինի այն հանգամանքից, թե ինչ «գույք» է ունեցել դիմողը Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ և առնվազն այն օրվա դրությամբ, երբ նա իր գանգատը հանձնել է Կոնվենցիոն հաստատություններին (տես վերը՝ կետ 125):

Փաստորեն, այդ օրերի դրությամբ (թե՛ 10 հոկտեմբերի 1994թ. և թե՛ 12 մարտի 1996թ.) դիմողի վիճակը, ըստ էության, եղել է նույնը: Այդ ժամանակ վարկավորման իրավունքն ամրագրված է եղել 1985թ. Հողի կառավարման օրենքի 81-րդ բաժնում, որը նախատեսում էր, որ Նեման (Խոտոր) գետի տարածքից հայրենադարձված անձանց կամ նրանց ժառանգներին, համապատասխան մարմիններին ներկայացված դիմումների հիման վրա, կարողանան փոխհատուցել նրանց թողած սեփականության արժեքը՝ շինհրապարակի և ցանկացած շենքի կամ դրանում գտնվող շենքերի արժեքի կամ անժամկետ օգտագործման վճարի դիմաց, որոնք վաճառվել են Պետության կողմից (տես վերը՝ կետ 46):

Իրավունքի իրացման ընթացակարգը շարադրված է 1985թ. որոշման մեջ, ըստ որի 3-րդ կետի՝ եթե Նեման (Խոտոր) գետի սեփականության արժեքը գերազանցել է Պետության կողմից վաճառված՝ փոխհատուցման ենթակա սեփականության գինը, ինչը տեղի է ունեցել դիմողի դեպքում, գերազանցող քանակը կարող է փոխհատուցվել Պետական հողի արդյունաբերական կամ առևտրային հողամասի

կամ դրա որոշակի կատեգորիայի շենքերի կամ հիմնարկների գնի դիմաց (տես վերը՝ կետեր 18-21 և 47):

133. Հետևաբար, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի նպատակների համար, դիմողի «գույքը» ներառել է հետագայում՝ 1992թ. սեպտեմբերի 15-ին արդեն իր կողմից ներկայացված դիմումի հիման վրա փոխհատուցման ենթակա այն սեփականություն ստանալու իրավունքը, որը նշված է 1985թ. որոշման 3-րդ կետում (տես վերը՝ լավագույն դեպքում 18-րդ կետը և կետ 21): Թեև այդ իրավունքն ստեղծվել է յուրատեսակ նախնական ձևով, քանի որ դրա նյութականացումը պետք է կատարվեր Պետական սեփականությունը նրան հատկացնելու վերաբերյալ վարչական որոշմամբ, 81-րդ բաժինն իրավական հիմք է հանդիսանում Պետության կողմից այն իրացնելու պարտավորության համար:

C. Համապատասխանությունը թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին

1. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կիրառելի դրույթը

134. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը ներառում է երեք տարբեր դրույթներ. առաջին կետի առաջին նախադասությամբ շարադրված առաջին դրույթն ունի ընդհանուր բնույթ և արտահայտում է սեփականությունից անարգել օգտվելու սկզբունքը, երկրորդ դրույթը՝ շարադրված առաջին կետի երկրորդ նախադասության մեջ, վերաբերում է գույքից զրկելուն եւ սահմանում է դրա համար պայմաններ, երրորդ դրույթը՝ ամրագրված երկրորդ կետում, ճանաչում է Պայմանավորվող պետությունների իրավունքն առ այն, որ նրանք, ի թիվս այլնի, կարող են սեփականությունը կառավարել հանուն ընդհանուր շահի: Այդ երեք դրույթները, սակայն, չեն տարանջատվում՝ փոխկապակցված չլինելու իմաստով:

Երկրորդ և երրորդ դրույթները վերաբերում են սեփականության անարգել օգտագործման իրավունքին միջամտության որոշակի դեպքերի, ուստի պետք է դիտարկվեն առաջին դրույթում շարադրված ընդհանուր սկզբունքի լույսի ներքո (տես ի թիվս այլոց՝ Ջեյմսը և այլոք ընդդեմ Մեծ Բրիտանիայի, 26.02.1986թ. վճիռը: Շարքերի թիվ 98, էջ 29-30, կետ 37, որը մասամբ կրկնում է Դատարանի կողմից Sporromg-ը և Lonroth-ն ընդդեմ Շվեդիայի գործում ամրագրված սկզբունքները, 23.09.1982թ. վճիռը: Շարքերի թիվ 52, էջ 24, կետ 61, տես նաև՝ Latridis-ն ընդդեմ Հունաստանի, կետ 55, և Բեյելերն ընդդեմ Իտալիայի, կետ 98, վճիռները, մեջբերված են վերը):

135. Կողմերը չեն ձևավորել հստակ դիրքորոշում այն հարցի կապակցությամբ, թե թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի որ դրույթի ներքո պետք է գործն ուսումնասիրվի: Այն դեպքում, երբ նրանցից որևէ մեկը չի պնդել, թե վիճարկվող իրավիճակն արդյունք էր երկրորդ կետի իմաստի շրջանակներում «սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողությանն» ուղղված միջոցառումների, դիմողը պնդել է, որ նրա իրավունքի բավարարման հարցում եղել էր Պետության ընդհանուր անգործությունը, իսկ Կառավարությունը պնդել է, որ ոչ այդ իրավունքի հարգման ցանկացած մերժում և ոչ էլ այդ կապակցությամբ որևէ միջամտություն չեն կարող վերագրվել իշխանություններին (տես ստորև՝ կետեր 137-142):

136. Տվյալ դեպքում ներառված իրավական և փաստական բարդ հիմնախնդիրների առկայության պարագայում Դատարանը գտնում է, որ սեփականության իրավունքի ենթադրյալ խախտումը չի կարող դասվել որոշակի ստույգ կատեգորիայի: Ամեն դեպքում, 1-ին կետի 2-րդ նախադասությունում հիշատակված իրավիճակը սեփականության անարգել օգտագործմանը միջամտության միայն մասնակի միջամտություն է, ինչը երաշխավորված է առաջին նախադասությունում ամրագրված ընդհանուր դրույթով (տես՝ Բեյեյերն ընդդեմ Իտալիայի, վերոշարադրյալ կետ 106): Այդ գործը, ուստի, պետք է ուսումնասիրվի այդ ընդհանուր դրույթի լույսի ներքո:

2. Ենթադրյալ խախտման բնույթը

(a) Կողմերի փաստարկները

(i) Դիմողը

137. Դիմողը գտել է, որ Պետության կողմից իր իրավունքի բավարարման շարունակական մերժումները, որոնք նրա տեսանկյունից ինքնին գնահատվում էին որպես միջամտություն նրա սեփականության իրավունքին, տեղի էին ունեցել իշխանությունների գործունեությունում թույլ տրված մի շարք գործողությունների եւ անգործության հետևանքով:

Ըստ դիմողի՝ վիճարկվող իրավիճակը բխում էր նրանից, որ Պետությունը չէր կատարել իր օրենսդրական պարտականությունը՝ ժամանակին և պատշաճ կերպով կարգավորել Նեման (Խոտոր) գետի տարածքից դուրս գտնվող տարածքներից հայրենադարձվածների պահանջների հարցը և պայմաններ ստեղծել դիմողների իրավունքների լիարժեք իրացման համար:

Դատարանի իրավագործության ներքո գտնվելու ժամանակաշրջանում Պետությունը ոչ միայն չի ձեռնարկել միջոցներ և լուծումներ տվել օրենսդրական

եղանակներով՝ այդ պահանջները բավարարելու համար նախատեսված պետական գույքի անբավարար քանակի հիմնախնդրին (հողերի այդպիսի սակավությունը պայմանավորված էր 1990թ. Պետական հողերի կոմունալիզացիայով), այլ ընդունել է այնպիսի օրենքներ, որոնք անհնարին էին դարձրել սեփականության իրավունքի բավարարումը՝ ի հաշիվ Պետության հողային պահուստների:

138. Ավելին, դիմողը հավելել էր, որ պետական իշխանություններն իր իրավունքի իրացումը դարձրել են գործնականում անհնարին: Դա իշխանությունների կողմից համատարած տարվող ընդհանուր քաղաքականություն էր, համաձայն որի՝ Պետությունն ամեն կերպ խոչընդոտում էր պետական հողերի վաճառմանը և իրավասու անձանց դրանց համար աճուրդներին մասնակցելուն:

139. Վերջնական ակտը տեղի է ունեցել 2004թ. հունվարի 30-ին, այն օրը, երբ ուժի մեջ է մտել 2003թ. դեկտեմբերի օրենքը, որի հիման վրա դիմողի, ինչպես նաև բոլոր այն անձանց նկատմամբ, ովքեր նախկին օրենսդրության հիման վրա երբեւէ ձեռք են բերել փոխհատուցում հանդիսացող գույք, Պետության բոլոր պարտավորությունները համարվել են կատարված:

(ii) Կառավարությունը

140. Կառավարությունը չի ընդունել, որ տեղի է ունեցել դիմողի՝ գույքի անարգել օգտագործման իրավունքին միջամտություն, ինչպես այն հայտարարել էր բանավոր լսումների ժամանակ և հետագա գրավոր խնդրագրերում, քանի որ դիմողը չի ունեցել որևէ «գույք»՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի նպատակների համար:

141. Ինչ վերաբերում է Պետության կողմից թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածից բխող պրզիտիվ պարտավորությունների կատարման հարցում թերանալուն՝ կապված օրենսդրական բացթողումների հետ, Կառավարությունը շեշտել է, որ սկսած 1944-1947թթ.՝ Լեհաստանի քաղաքացիների հայրենադարձության առաջին և զլխավոր ալիքը տեղի է ունեցել այդ ժամանակաշրջանում, պետությունը շարունակում էր օրենքներ ընդունել այդ հարցի կարգավորման վերաբերյալ: Ավելի վաղ ընդունված օրենքների ուժով մեծ թվով հայրենադարձված անձինք ստացել էին սեփականության փոխհատուցում՝ հատկապես Լեհաստանի արևմտյան մասում, որը մինչև պատերազմը պատկանել էր Գերմանիային:

142. Հողի կառավարման վերաբերյալ հետագա օրենքներում, որ կիրառվել են հատկապես Դատարանի ժամանակավոր իրավագործության ներքո գտվելու ժամանակահատվածում, ամրագրվել են Նեման (Խոտոր) գետին առնչվող մնացած պահանջների իրացումը կարգավորող ընդգրկուն դրույթներ: Բացի դրանից, Պետությունը մշտական ջանքեր է գործադրել տարաբնույթ պահանջների, ներառյալ դիմողի իրավունքի, վերականգնմանն առնչվող որոշակի օրենսդրության ստեղծման ուղղությամբ: Իրոք, առաջին այդպիսի փորձն անպտուղ է եղել, քանի որ 1999թ. Վերականգնման օրինագիծը Խորհրդարանի կողմից մերժվել է: Սակայն Նեման (Խոտոր) գետին առնչվող օրենսդրության ստեղծման առումով աշխատանքը շարունակվել է, և վերջերս Խորհրդարանն ընդունել է 2003թ. դեկտեմբերի օրենքը, որը համակողմանիորեն կարգավորում է Նեման (Խոտոր) գետին առնչվող պահանջներին վերաբերող մի ամբողջական խումբ հիմնախնդիրներ:

Արդյունքում, ըստ Կառավարության՝ չի կարելի եզրակացնել, որ Լեհական պետությունը չի կատարել դիմողի՝ իր գույքի անարգել օգտագործման իրավունքի բավարարման պոզիտիվ պարտավորությունը:

(b) Դատարանի գնահատականը

143. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ելությունն այն է, որպեսզի անձը պաշտպանված լինի իր գույքի անարգել օգտագործմանը Պետության կողմից անհիմն միջամտությունից:

Սակայն Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ «պետք է ապահովի իր իրավագործության շրջանակներում յուրաքանչյուրի՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքներն ու ազատությունները»: Այդ ընդհանուր պարտականության կատարումը կարող է առաջացնել դրական պարտավորություններ՝ ուղղված Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների արդյունավետ իրականացման ապահովմանը: Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համատեքստից բխում է, որ, համաձայն այդ դրական պարտավորությունների, կարելի է պահանջել, որպեսզի Պետությունն անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի սեփականության իրավունքի պաշտպանության նպատակով (տես՝ *Sovtransavto* հոլդինգն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 48553/99, կետ 96, *ECHR* 2002-VII, հետագա հղումներով) և *mutatis mutandis*, Կիզանն ընդդեմ Իռլանդիայի, 1994թ. մայիսի 26-ի վճիռը, Շարքեր թիվ 290, էջ 19, կետ 49, *Kroon*-ը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների, 1994թ. հոկտեմբերի 27-ի վճիռը, Շարքեր թիվ 297-C, էջ 56, կետ 31):

144. Սակայն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում Պետության դրական և բացասական պարտավորությունների բովանդակությունը հստակ չէ: Մինչդեռ կիրառվող սկզբունքները նույնն են: Անկախ նրանից, գործը քննության է առնվում պետության դրական պարտավորության տեսանկյունից, թե՛ հանրային իշխանության միջամտության տեսանկյունից, կիրառվող սկզբունքներն ըստ էության չեն տարբերվում: Երկու դեպքում էլ անհատների և ընդհանրապես հանրության շահերի միջև պետք է պահպանվի արդարացի հավասարակշռություն: Հասարակական շահի և դիմողի սեփականության հիմնարար իրավունքի միջև հավասարակշռությունը գնահատելիս՝ պետք է հաշվի առնել նաև այդ դրույթում նշված նպատակները: Երկու դեպքերում էլ Պետությունը Կոնվենցիային համապատասխանությունն ապահովելուն ուղղված քայլերը որոշելիս օգտվում է գնահատման որոշակի ազատությունից (տես՝ *mutatis mutandis*, Կիզանն ընդդեմ Իռլանդիայի, մեջբերված վերը, կետ 49, և *Hatton*-ը և այլոք ընդդեմ Մեծ Բրիտանիայի /GC/, թիվ 36022/97, կետեր 98 և *seq.*, ECHR 2003-VII):

145. Տվյալ դեպքում դիմողի գանգատը՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա կայանում է նրանում, որ լեհական Պետությունը՝ տրամադրելով նրան սեփականության փոխհատուցման իրավունք, հետագայում օրենսդրական, վարչական և գործնական մեթոդներով զրկել է նրան այդ իրավունքի իրացման հնարավորությունից և, վերջին հաշվով, վերջին օրենսդրական ակտերի ընդունմամբ ընդհանրապես վերացրել այդ իրավունքը (տես վերը՝ կետեր 137-139):

Փոխկապակցվածությունը Պետության կողմից թույլ տրված բացթողումների և դրանց զուգակցող գործողությունների միջև, որոնք կարող էին գնահատվել որպես միջամտություն դիմողի սեփականության իրավունքին, թույլ չի տալիս դասակարգել դրանք մեկ կոնկրետ կատեգորիայում: Ինչպես ցույց էր տվել իրադարձությունների ընթացքը, 2003թ. դեկտեմբերի օրենսդրությամբ «գործողությունները» և «բացթողումները» խիստ սերտաճած են (տես կետեր 30-31, 48-49, 56-57, 59-61, 63-65, 69-70, 84-86, 96-98, 102, 110 և 114-119):

Տեղի ունեցած իրադարձությունների իրավական և գործնական հետևանքները, ինչպես նաև Պետության վարքագիծը տարաբնույթ գնահատականների են արժանացել ազգային դատարանների կողմից. օրինակ՝ Սահմանադրական տրիբունալը գտել է, որ օրենքները, որոնք սահմանափակել են Նեման (Խոտոր) գետի դիմողների սեփականության իրավունքները, հանգեցրել են *de facto* էքսպրոպրիացիայի (տես վերը՝ կետ 84): Որոշ քաղաքացիական դատարաններ գտել են, որ Պետությունը պատասխանատու է եղել Նեման (Խոտոր) գետի դիմողների կրած վնասների համար՝ ելնելով երկու փաստից՝ նախ՝ որ օրենքներն անհիմն

սահմանափակումներ են դրել վարկավորման իրավունքի իրականացման վրա, ինչպես նաև այն, որ Պետությունը չի կատարել սեփականության իրավունքը պաշտպանելու պոզիտիվ պարտավորությունը և պատշաճ կերպով չի հրապարակել Հանրապետական համաձայնագրերը (տես վերը՝ կետեր 98 և 102): Գերագույն դատարանը գտել է, որ Պետության պրակտիկան չի հանդիսացել սեփականությունից զրկում, սակայն պատշաճորեն սահմանափակել է խնդրո առարկա իրավունքը (տես վերը՝ կետ 110):

146. Գործի փաստերը ավելի ճիշտ կարող են քննության առնվել թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող իրավունքի արդյունավետ իրականացմանը խոչընդոտելու տեսանկյունից եւ այդ իրավունքի իրացումը չապահովելու տեսանկյունից: Հաշվի առնելով գործի առանձնահատուկ հանգամանքները, Դատարանն անհրաժեշտ չի համարել, որպեսզի խստիվ դասակարգվի գործի քննությունը՝ ըստ Պետության պոզիտիվ պարտավորության, թե՛ պետության նեգատիվ պարտավորության՝ ձեռնպահ մնալ սեփականության անարգել օգտագործմանն անհիմն միջամտությունից:

Դատարանը կգնահատի, թե արդյոք Լեհական պետության վարքագիծը՝ անկախ նրանից, թե այդ վարքագիծը կբնութագրվի որպես միջամտություն իրավունքին կամ դրա պաշտպանությունից հրաժարում, կարող է արդարացված լինել ներքոշարադրյալ կիրառելի սկզբունքների լույսի ներքո:

3. Ընդհանուր սկզբունքներ

(ա) Օրինականության սկզբունքը

147. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին պահանջն այն է, որպեսզի գույքի անարգել օգտագործման իրավունքին հանրային իշխանությունների ցանկացած միջամտություն կողմից լինի միայն օրինական. առաջին կետի երկրորդ նախադասությամբ ամրագրված է, որ գույքից կարելի է զրկել «միայն օրենքով նախատեսված պայմաններով», իսկ երկրորդ կետն ընդունելի է համարում այն, որ Պետություններն իրավունք ունեն վերահսկելու սեփականության օգտագործման գործընթացը՝ ընդունելով համապատասխան «օրենքներ»: Բացի դրանից, իրավունքի գերակայության սկզբունքը համարվում է ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկը և բնորոշ է Կոնվենցիայի բոլոր հոդվածներին (տես՝ Հունաստանի նախկին թագավորը և այլոք ընդդեմ Հունաստանի, /GC/, թիվ 25701/94, կետ 79, ECHR 2000-XII, հետագա հղումներով, և Յատրիդիսն ընդդեմ Հունաստանի, վերը մեջբերված կետ 58):

Օրինականության սկզբունքը ենթադրում է նաև, որ ներպետական օրենքը պետք է լինի մատչելի, հստակ և կանխատեսելի դրա կիրառման ժամանակ (տես՝ Բեյեյերի վճիռը՝ մեջբերված վերը, կետեր 109-110):

(b) Ի շահ հանրության իրավաչափ նպատակի սկզբունքը

148. Կոնվենցիայով ճանաչված իրավունքին կամ ազատություններին ցանկացած միջամտություն պետք է հետապնդի իրավաչափ նպատակ: Միաժամանակ պոզիտիվ պարտականություններ կատարելիս՝ պետք է լինի Պետության անգործությունն արդարացնող բացատրություն: «Արդարացի հավասարակշռության» սկզբունքը, որը բնորոշ է ինքնին թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին, ենթադրում է հանրության ընդհանուր շահի գոյություն: Բացի դրանից, պետք է կրկնել, որ 1-ին հոդվածում ամրագրված դրույթներն այնքան տարբեր չեն այն իմաստով, որ չլինեն փոխկապակցված, և որ երկրորդ և երրորդ դրույթները վերաբերում են միայն գույքի անարգել օգտագործման իրավունքին միջամտության որոշակի դեպքերի: Սրա արդյունքն այն է, որ երկրորդ նախադասությամբ պահանջվող «հանրության շահի» կամ երկրորդ կետում հիշատակվող «ընդհանուր շահի» գոյությունը, փաստորեն, բխում է առաջին նախադասությամբ ամրագրված սկզբունքից, այնպես որ միջամտությունը գույքի անարգել օգտագործման իրավունքի իրականացմանը՝ առաջին հոդվածի առաջին նախադասության իմաստով, պետք է եւս հետապնդի հանրության շահերից բխող նպատակ (տես՝ Բեյեյերի վճիռը՝ մեջբերված վերը, կետ 111):

149. Իրենց հասարակության եւ դրա պահանջմունքի ուղղակի իմացությունն ազգային իշխանություններին հնարավորություն է տալիս ավելի լավ գնահատել, քան միջազգային դատավորը, թե որն է տվյալ պարագայում «հասարակական շահը»: Կոնվենցիայով ստեղծված՝ մարդու իրավունքների պաշտպանության համակարգին համապատասխան, ներպետական իշխանությունների խնդիրն է առաջինը գնահատել հասարակական նշանակության այն հիմնախնդիրը, որը պահանջում է միջոցներ ձեռնարկել սեփականության իրավունքի իրացման ոլորտում, ներառյալ՝ սեփականությունից զրկելը եւ ռեստիտուցիան: Այստեղ, ինչպես նաև այն բոլոր ոլորտներում, որոնց վրա տարածվում է Կոնվենցիայի գործողությունը, ազգային իշխանություններն ունեն գնահատման որոշակի ազատություն:

Բացի դրանից, «հանրության շահ» հասկացությունը շատ ավելի լայն է: Մասնավորապես, օրենքի ուժով իրականացվող սեփականության հարկադիր օտարումը կամ օտարված սեփականության դիմաց փոխհատուցում տրամադրելը

մշտապես առնչվում է սոցիալական, տնտեսական և քաղաքական հիմնախնդիրների: Դատարանը նշել է, որ ընդունելով, որ սոցիալ-տնտեսական քաղաքականություն իրականացնելիս՝ օրենսդիր մարմնի գնահատման ազատությունը լայն է, ինքը պետք է հարգի օրենսդրի որոշումն առ այն, թե ինչն է հանդիսանում «հանրության շահ», բացառությամբ այն դեպքերի, երբ այդ որոշումը ողջամիտ չէ (տես վերը նշված վճիռները Ջեյմսը և այլոք գործով, էջ 32, կետ 46, և Յունաստանի նախկին թագավորը և այլոք, կետ 87): Այդ տրամաբանությունը կիրառելի է երկրի կառավարման համակարգում այնպիսի արմատական փոփոխությունների նկատմամբ, ինչպիսիք են ամբողջատիրական վարչակարգից ժողովրդավարական կառավարման համակարգի անցնելը, ինչպես նաև երկրում տեղի ունեցող քաղաքական, սոցիալական ու տնտեսական բարեփոխումների նկատմամբ, որոնք անխուսափելիորեն պետք է առաջացնեին սոցիալական ու տնտեսական ոլորտներում լայնածավալ օրենսդրական փոփոխություններ:

(c) «Արդարացի հավասարակշռության» սկզբունք

150. Ինչպես միջամտությունը սեփականության անարգել օգտագործմանը, այնպես էլ ցանկացած անգործություն պետք է արդարացի հավասարակշռություն պահպանեն հանրության շահի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջի միջև (տես՝ ի թիվս այլ աղբյուրների, Սփորոնգի վճիռը՝ մեջբերված վերը, էջ 26, կետ 69):

Նման հավասարակշռության հասնելու պահանջ նախատեսված է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում: Մասնավորապես, Պետության կողմից ձեռնարկվող միջոցների, այդ թվում ունեցվածքից զրկելը, և նպատակի միջև պետք է պահպանվի ողջամիտ համամասնություն: Դատարանը պետք է պարզի, թե արդյոք Պետության անգործության կամ գործողությունների արդյունքում շահագրգիռ անձը կրել է անհամաչափ եւ մեծ վնաս (տես՝ ի թիվս այլ աղբյուրների, Սփորոնգի վճիռը՝ մեջբերված վերը, կետ 73, և Յունաստանի նախկին թագավորը և այլոք, կետեր 89-90, հետագա հղումներով):

151. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին համապատասխանությունը գնահատելիս՝ Դատարանը պետք է կատարի բոլորի շահերի ամբողջական վերլուծություն՝ հաշվի առնելով այն, որ Կոնվենցիան կոչված է պաշտպանելու այն իրավունքները, որոնք «գործնական և արդյունավետ» են: Այդ գնահատականը կարող է վերաբերել ոչ միայն փոխհատուցման պայմաններին, այլև, եթե իրադրությունը մոտ է սեփականազրկմանը՝ ապա կողմերի վարքագծին, ներառյալ Պետության

կողմից կատարվող գործողությունները: Այս համատեքստում պետք է ընդգծվի, որ Պետության վարքագիծը գնահատելիս՝ հաշվի է առնվելու անորոշության գործոնը՝ օրենսդրական, վարչական, թե գործնական են: Իրոք, որտեղ վտանգված է ընդհանուր շահը, հանրային իշխանությունները պետք է գործեն ժամանակին, պատշաճորեն և հետևողականորեն (տես՝ Վասիլեսկուն ընդդեմ Ռուսիայի, 1998թ. մայիսի 22-ի վճիռը, Վճիռների և որոշումների ժողովածու, էջ 1078, կետ 51, Beyeler-ը՝ մեջբերված վերը, կետեր 110 և 114-120, "Sovetransavto" հոլդինգ, մեջբերված վերը՝ կետեր 97-98):

4. Վերոհիշյալ սկզբունքների կիրառումը սույն գործի առնչությամբ

(a) Արդյոք լեհական իշխանությունները հարգել են օրինականության սկզբունքը

(i) Դիմողը

152. Դիմողը պնդել է, որ Պետության կողմից իր սեփականության իրավունքը չբավարարելը, անտարակույս, չի համապատասխանում նրա ընդհանուր պարտականությանը՝ գործադրել օրենքով ճանաչված իրավունքները, մասնավորապես, դրանց կատարման համար պայմաններ ստեղծել:

Ինչ վերաբերում է նրա իրավունքի իրականացման հարցում հետևողական սահմանափակումներին, ապա դիմողն ընդունել է, որ դրանք կատարվել են մի շարք օրենսդրական ակտերի, մասնավորապես՝ 1997թ. Հողի կառավարման օրենքի և 2001թ. Փոփոխությունների հիման վրա: Սակայն նա ընդգծել է, որ, այնուամենայնիվ, այդ օրենսդրական ակտերն անհամատեղելի են եղել Սահմանադրության հետ: Չնայած այդ հանգամանքին, ինչպես նաև Սահմանադրական տրիբունալի հստակ դիրքորոշմանն առ այն, որ Նեման (խոտոր) գետի բնակիչների պահանջների բավարարման համար խոչընդոտներ հանդիսացող օրենսդրական ակտերը պետք է վերացվեն, Պետությունը շարունակում էր ընդունել հակասահմանադրական օրենքներ և թույլ տալ այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ Զինվորական սեփականության գործակալության և Պետական գանձապետարանի Գյուղատնտեսական սեփականության գործակալության կողմից աճուրդների միջոցով պետական սեփականության հողերի վաճառքի դադարեցումը: Ինչպես դիմողը պնդել է, որպես կառավարության վերջնական նվաճում պետք է համարել 2003թ. դեկտեմբերի

Օրենքը, օրենսդրություն, որը հակասելով Սահմանադրական տրիբունալի որոշմանը, մարել է նրա փոխհատուցման իրավունքի իրացման հույսը:

Ուստի չի կարելի ասել, որ իշխանությունները պահպանել են օրինականության սկզբունքը:

(ii) Կառավարությունը

153. Կառավարությունն իր գործողություններում որևէ անօրինականություն չի տեսել, քանի որ, իր կարծիքով, տեղի չի ունեցել միջամտություն գույքի անարգել օգտագործման` դիմողի իրավունքին (տես վերը` կետ 140):

(iii) Դատարանի գնահատականը

154. Դատարանը նկատել է, որ դիմողի իրավունքների սահմանափակումները կատարվել են մի շարք օրենսդրական ակտերով (տես վերը` կետեր 49, 59 և 114-119): Իրոք, իրավական դրույթները, որոնք, մինչև Սահմանադրական տրիբունալի որոշման ուժի մեջ մտնելը, խոչընդոտել են նրան իրականացնելու իր իրավունքը, համարվել են անհամատեղելի իրավունքի գերակայության եւ սեփականության իրավունքի պաշտպանության սկզբունքի հետ (տես վերը` կետեր 84-86): Նաև ճիշտ է, որ Լեհաստանի որոշ քաղաքացիական դատարաններ, հատկապես Գերագույն դատարանը, Սահմանադրական տրիբունալի որոշման ուժի մեջ մտնելուց հետո, գտել են, որ իշխանությունների գործողություններն անընդունելի և արդարացված չեն իրավական պետությունում: Կրակովի շրջանային դատարանը, ի թիվս մի շարք գնահատականների, դա անվանել է «անօրինականության վիճակ» (տես վերը` կետեր 98 և 110):

Այդուհանդերձ, ըստ Դատարանի` այս եզրահանգումները կարող են հաշվի առնվել գնահատելիս, թե արդյոք պահպանվել է հավասարակշռությունը խնդրո առարկա ներգրավված շահերի միջև: Դատարանն այդ կապակցությամբ կգնահատի` արդյոք դիմողի սեփականության իրավունքի` հաշտության կարգով բավարարման առումով «օրենքի սահմաններում» կատարված գործողությունները բխել են թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածից: Դատարանը ելնում է այն կանխավարկածից` քանի որ Լեհական պետության գործողությունները և բացթողումները հանդիսացել են միջամտություն դիմողի գույքի անարգել օգտագործման իրավունքի իրականացմանը կամ դրա սահմանափակում, դրանք նախատեսված են եղել «օրենքով»` թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով:

(b) Արդյոք լեհական իշխանությունները հետապնդել են «իրավաչափ նպատակ»

(i) Դիմողը

155. Դիմողը գտել է, որ ոչ մի հասարակական շահ չի կարող արդարացնել Պետության կողմից Նեման (Խոտոր) գետի տարածքի բնակիչների պահանջների լուծման անընդհատ մերժումը, որոնք լեհական օրենքի համաձայն ճանաչված են եղել շուրջ 60 տարի: Նա ընդգծել է, որ համաձայն Հանրապետական համաձայնագրերի՝ Պետությունն ստանձնել է Նեման (Խոտոր) գետի տարածքի բնակիչների սեփականության փոխհատուցման պարտավորություն՝ առանց որևէ պայմանի, ֆինանսական կամ այլ սահմանափակման: Մինչդեռ կարող է ընդունելի լինել, որ այդ պարտավորությունը հասարակական ընդհանուր շահի պատճառով կատարվեր ժամանակի ընթացքում, որել է կերպ չի կարող բացատրվել այնպիսի օրենսդրական քաղաքականության որդեգրումը, ինչը տարիներ շարունակ լիովին անտեսել է Նեման գետի տարածքի բնակիչների հանդեպ եղած պարտավորությունները:

(ii) Կառավարությունը

156. Կառավարությունը պատասխանել է, որ Պետությունն արել է հնարավոր ամեն ինչ՝ Նեման (Խոտոր) գետի տարածքի բնակիչներին պահանջները բավարարելու համար, մասնավորապես, նրանց մեծամասնությունն ստացել է սեփականության փոխհատուցում: Սակայն 1990-ականներին արդեն երկրի քաղաքական և տնտեսական վերակազմավորման պահանջներն ստիպեցին կրկին մտցնել տեղական ինքնակառավարում և փոխել Պետության և մուլտիցիպալիտետների միջև սեփականատիրական հարաբերությունները: Դա, իր հերթին, ավարտվեց պետական հողերի մեծ մասը վերջինիս հանձնելով, որին փոխանցվեց հողի կառավարումն իր վարչական տարածքի սահմաններում: Նման բարեփոխումների ծայրահեղ կարելությունն ակնհայտ էր, թեև այն զգալիորեն նվազեցրեց Նեման (Խոտոր) գետի բնակիչների պահանջների բավարարման հնարավորությունը:

157. Ըստ Կառավարության՝ Պետությունը չի անտեսել, ինչպես ներկայացրել է դիմողը, Նեման (Խոտոր) գետի դիմողների իրավունքները: Իշխանությունները մեծ ջանքեր են գործադրել, որպեսզի լուծեն նրանց հիմնախնդիրը, և այդ համատեքստում չպետք է անտեսել, որ նրանք բախվել են բազմաթիվ իրավական և բարոյական դժվարությունների: Այսպիսով, նրանք պարտավորված էին գործ ունենալ

տարբեր վերականգնման և փոխհատուցման պահանջների հետ, որոնք ծագել են ամբողջատիրական վարչակարգի օրոք, և նրանք պետք է գործեին այն ձևով, որպեսզի երաշխավորվեր այդ վարչակարգից տուժածներին հավասար իրավունքների վերապահումը:

(iii) Դատարանի գնահատականը

158. Ինչպես երեւում է, Դատարանի համապատասխան վճիռներից՝ դիմողի իրավունքի իրացմանը խոչընդոտող օրենսդրական ակտերի ընդունումը հետապնդել է հետևյալ նպատակները. մտցնել տեղական ինքնակառավարում, վերակազմավորել գյուղատնտեսական համակարգը և ֆինանսավորել ռազմական հաստատությունների արդիականացումը (տես վերը՝ կետեր 85 և 98): Դատարանը չի կասկածում, որ Լեհաստանի զարգացման համար կատարվող բարեփոխումներն անհրաժեշտություն էին, և Դատարանը նաև ընդունում է, որ Պետության կողմից ձեռնարկված միջոցներն արդարացված են եղել հասարակական շահի տեսանկյունից:

(c) Պահպանել են, արդյոք, լեհական իշխանությունները հասարակական շահի և դիմողի գույքի անարգել օգտագործման իրավունքի միջև հավասարակշռություն

(i) Նեման (Խոտոր) գետին առնչվող պահանջների խորապատկերը

(a) Կողմերի փաստարկները

159. Դիմողն ընդունել է, որ իր ընտանիքի սեփականության կորուստը տեղի է ունեցել պատմական և քաղաքական իրադարձությունների արդյունքում, որոնց հետ լեհական իշխանությունները որևէ առնչություն չունեն, և Լեհաստանը չի եղել այն պետությունը, որը բռնագրավել է իր սեփականությունը և ստիպել լքել իր հայրենիքը: Սակայն Լեհաստանի պարտավորությունն է միջազգային պայմանագրերի հիման վրա փոխհատուցել իր ընտանիքին: Այդ պարտավորությունը ներպետական օրենսդրությունում ամրագրվել է 1946 թվականից, և որքանով իրեն առնչվում է՝ երբևէ չի կատարվել այն ամբողջ ծավալով:

160. Կառավարությունն ընդգծել է, որ ազգությամբ լեհ բնակչության՝ Նեման (Խոտոր) գետից դուրս տարածքներից տարահանումներն սկսվել են Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով տարածքային փոփոխություններից հետո: Դրանք որոշվել են «Մեծ եռյակի» կողմից՝ Թեհրանի, Յալթայի և Պոտսդամի

կոնֆերանսներում, առանց Լոնդոն վտարված լեհական օրինական կառավարության նախնական համաձայնության: Այդ փոփոխությունների արդյունքում մինչ պատերազմը 388 600 քառ. կմ տարածք զբաղեցնող Լեհաստանը կորցրել է իր նախկին տարածքի մոտ 19.78%-ը:

Բացի դրանից, համաձայն Հանրապետական համաձայնագրերի՝ կնքված Լեհաստանի կոմունիստական իշխանությունների կողմից 1944-1945թթ., Լեհաստանն ստիպված էր ընդունել և տեղաբաշխել շուրջ 1 մլն 240 հազ. ազգությամբ լեհ տեղահանվածների՝ ապահովելով նրանց ինչպես կեցության համար անհրաժեշտ բոլոր պայմաններով, այնպես էլ ֆինանսապես: Չնայած այդ պարտավորությանը, Լեհաստանը պետք է ԽՍՀՄ-ին վճարեր 76 մլն ռուբլի (հաշվարկված ըստ ոսկու չափորոշիչի)՝ տարահանման համար: Փաստորեն, Լեհաստանը շատ թանկ է վճարել իր սեփական հպատակների, այսպես կոչված՝ «հայրենադարձման», իսկ հաճախ՝ նրանց կյանքի համար, քանի որ նրանցից շատերը, ովքեր մնացել էին Խորհրդային Միությունում կամ վերաբնակեցվել էին Ղազախստանում կամ այդ երկրի այլ մասերում, կամ կյանքից զրկվել էին լայնորեն տարածված ստալինյան հետապնդումների ընթացքում:

161. Ըստ կառավարության՝ «արդարացի հավասարակշռությունը» պետք է դիտարկել այս տեսանկյունից եւ այն փաստի լույսի ներքո, որ թեեւ Պետության ծանր ֆինանսական դրությանը, իշխանությունները հետևողականորեն փորձել են բավարարել Նեման (Խոտոր) գետին առնչվող պահանջները:

(b) Դատարանի գնահատականը

162. Դատարանն ընդունում է, որ հաշվի առնելով գործի պատմական եւ քաղաքական հիմքերը, ինչպես նաեւ այն սոցիալական, իրավական եւ տնտեսական գործոնների կարելորությունը, որոնք իշխանություններն ստիպված էին հաշվի առնել, Լեհական պետությունը բախվել է բացառիկ բարդ վիճակի հետ, որը ներառել է լայնածավալ քաղաքական որոշումների կայացում: Ներգրավված անձանց մեծ թիվը՝ 80.000 անձ եւ նրանց պահանջների ահռելի չափը գործոններ են, որոնք պետք է հաշվի առնվեն «արդարացի հավասարակշռությունը» գնահատելիս:

Այս համատեքստում պետք է նշել, որ Լեհական Կառավարությունը 1985թ. Հողի կառավարման և 1997թ. օրենքների միջոցով վերահաստատել է փոխհատուցում տալու իր պարտավորությունը, որոնք նա ստանձնել է նաև վավերացնելով մի շարք միջազգային համաձայնագրեր՝ մինչեւ Կոնվենցիայի վավերացումը (տես վերը՝ կետեր 46, 48 և 81): Դա տեղի է ունեցել այն պարագայում, երբ երկիրն ենթարկվել է

մեծ սոցիալ-տնտեսական վերափոխումների, և այստեղ անխուսափելիորեն երկընտրանք պետք է առաջանար՝ վճարել նյութական եւ բարոյական փոխհատուցում, թե՛ ոչ, այն մարդկանց, ովքեր եղել են ամբողջատիրական վարչակազմի իշխանության ներքո:

163. Ղատարանն ընդունել է, որ այդ բոլոր գործոնները պետք է ուշադրության առնվեն Պետության գնահատման ազատությունը գնահատելիս:

(ii) Իշխանությունների վարքագիծը

(a) Կողմերի փաստարկները

164. Ղիմողը կրկին պնդել է, որ Պետության վարքագիծը բաղկացած է մի շարք գործողությունների ու անգործության միակցությունից, ինչը հանգեցրել է իր իրավունքի խախտման, ինչը հնարավոր է դարձել մի շարք սահմանափակող օրենսդրական ակտերի ընդունմամբ, մասնավորապես՝ 2003թ. դեկտեմբերի օրենքի արդյունքում: Վերջինս լիարժեք հնարավորություն է տալիս կատարել սեփականազրկում առանց փոխհատուցման:

Ղիմողը պնդել է, որ հետադարձ հայացք ձգելով անցյալի իրադարձություններին, պետք է փաստել, որ 1990թ. օրենքի հիման վրա կատարված կոմունալիզացիայով տարադահանվածների պահանջի բավարարումը, Պետությունը որոշել է ոչ թե լուծել պետական հողերի հաշվին փոխհատուցման հարցը, այլ օրենքներ է ընդունել, որոնք էլ ավելի են սահմանափակել իրավունքի իրականացումը:

165. Այդ կապակցությամբ Ղիմողը նշել է, որ ինչպես գտել է Սահմանադրական տրիբունալը, տարահանվածների առնչությամբ կիրառված օրենսդրությունը եւ իշխանությունների կողմից կատարված գործողությունները խախտել են սահմանադրական հիմնարար սկզբունքները, ներառյալ համամասնության սկզբունքը:

Սահմանադրական տրիբունալի որոշման ուժի մեջ մտնելուց հետո՝ Ղիմողը հավելել է, որ Պետությունը այդ որոշման կատարման համար պայմաններ ստեղծելու փոխարեն արել է ամեն ինչ, որպեսզի խոչընդոտի իր իրավունքի իրականացմանը: Չենց այն օրը, երբ Սահմանադրական տրիբունալի որոշումն ուժի մեջ է մտել, Պետությունը դադարեցրել է պետական սեփականության վաճառք իրականացնող բոլոր աճուրդները՝ խուսափելով Նեման գետի պահանջների կատարումից:

166. Կառավարությունը համամիտ չէր: Նա պնդել է, որ Ղիմողի իրավունքի ենթադրյալ խախտումները խիստ անիրաժեշտ են եղել եւ բխել են երկրում

իրականացվող սոցիալ-տնտեսական բարեփոխումներից: Կառավարությունը գտել է, որ երկրում իրականացվող լայնածավալ սոցիալ-տնտեսական ու քաղաքական բարեփոխումների փուլում անհրաժեշտ է Պայմանավորվող պետություններին տրամադրել ավելի լայն հնարավորություններ դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ գործողություններ կատարելու և հասարակական շահը գնահատելու առումով:

167. Կառավարությունը նաև նշել է, որ Սահմանադրական տրիբունալի որոշումը մի շարք խոչընդոտներ է վերացրել դիմողի իրավունքի իրականացման առումով, որոնք նախապես խոչընդոտում էին փոխհատուցում տրամադրելու հետ կապված գործողությունների կատարմանը, առաջինը համարելով մի շարք իրավական ակտեր:

Կառավարությունը որևէ կերպ չի անդրադարձել դիմողի այն փաստարկին, որ իշխանությունները, դադարեցնելով աճուրդները՝ չեն կատարել Սահմանադրական տրիբունալի որոշումը: Դրա փոխարեն նա հիշատակել է նոր օրենսդրությունը, որի գործադրման պարագայում հնարավորինս կապահովվեն դիմողների պահանջները:

(b) Դատարանի գնահատականը

Մինչև 2002թ. դեկտեմբերի 19-ն ընկած ժամանակահատված

168. Քննության ենթակա ժամանակահատվածում դիմողն ուներ, ինչպես նշվել է վերը, իր ընտանիքի կորցրած սեփականությանը համարժեք փոխհատուցում ստանալու իրավունք: Նույնիսկ այն պարագայում, երբ այդ իրավունքը ձեւավորվել էր Inchoute ձեւով, քանի որ դրա նյութականացումը կատարվելու էր պետական գույքը տրամադրելու վերաբերյալ վարչական որոշման միջոցով, Հողի կառավարման 1985թ. օրենքի 81-րդ բաժինը հստակ իրավական հիմք էր հանդիսանում Պետության պարտավորության կատարման համար (տես վերը՝ կետեր 46-47, 133):

Լեհաստանում տեղական ինքնակառավարման ինստիտուտի վերահաստատման օրվանից ի վեր Պետական գանձապետարանում արդեն իսկ չէր մնացել պետության սեփականությունը հանդիսացող որևէ հողակտոր: Հողակտորների սակավության փաստն ընդունվել էր պաշտոնապես: Այդ համատեքստում, ինչպես նաև համաձայն 1993թ. Փոփոխության, որն անհնարին էր դարձնում Պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողերի ձեռքբերումը, Պետությունը խոստանում էր ընդունել այնպիսի օրենսդրական ակտեր, որոնք հնարավոր կդարձնեն ինչ-ինչ եղանակներով հայրենադարձվածների կորցրած

սեփականության դիմաց համարժեք փոխհատուցում տրամադրելը: Հետագայում նա օրենսդրություն ընդունեց, որով որոշակիորեն նախատեսված էին իրավունքի վերականգնման և փոխհատուցման տրամադրման ընթացակարգեր (տես վերը՝ կետեր 22-23, 44, 53-54, 56 և 62-65):

169. 1994-1998 թվականներին Պետական սեփականության հաշվին դեռևս հնարավոր էր բավարարել Նեման (Խոտոր) գետի բնակիչների պահանջները, քանի որ 1994-1996թթ. օրենքների հիման վրա Պետական գանձապետարանի կողմից Ռուսաստանի Դաշնության զինված ուժերից վերցված գույքը եւ Ջինվորական սեփականության գործակալության գույքը մատչելի էր այդ նպատակների համար (տես վերը՝ կետեր 56-59): Այդ փաստը չի թվում, որ դրական ազդեցություն է ունեցել դիմողի իրավունքի իրացման վրա, քանի որ, ինչպես արձանագրել է Կրակովի շրջանային դատարանը, 1991-98թթ. մարզի իշխանությունները կազմակերպել են պետական գույքի միայն 20 աճուրդ:

170. 1997թ. Հողի կառավարման օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 1998թ. հունվարի 1-ից սկսած հետագա իրադարձությունները վճռորոշ ազդեցություն ունեցան դիմողի վիճակի վրա: Այդ ժամանակից ի վեր իշխանությունները դեռևս չեն ընդունել խոստացած ռեստիտուցիոն օրենսդրությունը. փաստորեն, այդ խնդիրը կարգավորող օրենսդրական ակտը, վերջին հաշվով, մերժվել էր երկրի Խորհրդարանի կողմից (տես վերը՝ կետեր 62-65):

1997թ. Հողի կառավարման օրենքի 212 բաժնում վերահաստատվել են դիմողի իրավունքը և դրա իրագործման եղանակները՝ այնպես, ինչպես նախորդ օրենքներում: Այդ օրենքը գրեթե ամբողջովին կրկնում է 1985թ. Հողի կառավարման օրենքում ամրագրված դրույթները: Ըստ համընդհանուր կարծիքի՝ Պետության պարտավորության կրկին ամրագրման պարագայում չեն ստեղծվել դրա կատարումը երաշխավորող մեխանիզմներ: Ընդհակառակը, այդ ակտի գործադրումն ավելի մեծ սահմանափակումներ է ստեղծել դիմողի իրավունքի իրականացման համար: 213 բաժնի ուժով, պետական գյուղատնտեսական հողերից գույք ձեռք բերելու հնարավորությունը, որը մինչ այդ կասեցվել էր մինչև ռեստիտուցիոն օրենքների ընդունումը, վերացվեց: Բացի դրանից, համաձայն 1998թ. Որոշման՝ փոխհատուցում համարվող սեփականության ձեռքբերումը կարող է իրականացվել բացառապես տեղական ինքնակառավարման մարմնի կողմից կազմակերպված աճուրդին մասնակցության և միայն այդտեղ մրցունակ առաջարկություն անելու արդյունքում (տես վերը՝ կետեր 48-52 և 54):

171. Դատարան ներկայացված նյութերից ակնհայտ է դառնում այն փաստը, որ իշխանությունները խուսափում էին Նեման (Խոտոր) գետի տարածքից տարա-

հանվածների համար աճուրդներ կազմակերպելուց՝ նրանց առջև տարաբնույթ պայմաններ դնելով, իսկ ինչպես վկայում է Ջինվորական սեփականության գործակալության փորձը՝ բացեիբաց մերժում էին աճուրդում վաճառվող սեփականության համար գին առաջարկելու այդ անձանց իրավունքը (տես վերը՝ կետեր 61, 84, 97 և 110): Գործակալության պրակտիկան, որը մանրամասն նկարագրված է իր իսկ պաշտոնական փաստաթղթերում, եւ որը, ըստ Դատարանի կարծիքի՝ նպատակաուղղված է եղել դիմողի՝ հողի ձեռքբերման իրավունքի իրականացմանը խանգարելուն, իրականում դաշտ են նախապատրաստել հետագա սահմանափակիչ օրենքների ընդունման համար: 2002թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտած 2001թ. Փոփոխությունը դիմողի համար ի սպառ վերացրեց Պետական գինվորական սեփականության պաշարներից փոխհատուցում ակնկալելու հնարավորությունը (տես վերը՝ կետեր 58-59):

172. Հաշվի առնելով այն, որ այդ ժամանակաշրջանում Նեման (Խոտոր) գետի տարածքից տարահանվածների համար փոխհատուցում ստանալու՝ մատչելի պետական գույքային պաշարները՝ Ռուսաստանի Դաշնության զորքի կողմից նախկինում կառավարված հողերն էին, և որ Կառավարությունն ինքն ընդունել է, որ այդ պաշարները գործնականում սպառվել են (տես վերը՝ կետեր 49, 56-57, և 59), Դատարանը գտել է, որ իշխանությունները հետզհետե դուրս են մղել դիմողի իրավունքն իրավական դաշտից, և թեև տեսականորեն դիմողն ուներ փոխհատուցում ստանալու իրավունք, գործնականում այդ իրավունքի իրականացումը պատրանք էր դարձել:

173. Այս եզրահանգումը համապատասխանում է Պետության վարքագծի կապակցությամբ լեհական դատարանների գնահատականին, ներառյալ Գերագույն դատարանի գնահատականը (տես վերը՝ կետեր 84-86 և 110):

Սահմանադրական տրիբունալն անդրադառնալով Պետության վարքագծին, գտել է, որ դիմողի վարկավորման իրավունքի նկատմամբ այդչափ սահմանափակումները հանգեցրել են տարօրինակ իրադրության, երբ այդ իրավունքը չի կարող գործնականում իրացվել եւ այդ սահմանափակումներն արդարացված չեն ժողովրդավարական եւ իրավական պետությունում: Այդ համատեքստում իշխանությունների վարքագիծն անհամատեղելի է իրավական պետությունից բխող՝ պետության եւ նրա ընդունած օրենքների նկատմամբ հարգանքի սկզբունքին:

Դատարանը՝ Սահմանադրական տրիբունալի դիրքորոշումից հետ շեղվելու որևէ պատճառ չի տեսնում, քանի որ վերջինս իր դիրքորոշումը ձևավորել է ներպետական հանգամանքների խոր իմացության վրա:

2002թ. դեկտեմբերի 19-ից հետո ընկած ժամանակաշրջանը

174. Կառավարությունը պնդել է, որ Սահմանադրական տրիբունալն իր՝ 19.12.2002թ. որոշմամբ, որի համար հիմք է հանդիսացել Օմբուդսմենի դիմումը, բավականին շատ խոչընդոտներ է վերացրել դիմողի իրավունքի իրականացման ճանապարհից (տես վերը՝ կետ 167):

Իսկապես, 2003թ. հունվարի 14-ին օրենսդրության մեջ կատարվել է որոշակի փոփոխություն, ինչի արդյունքում Նեման (Խոտոր) գետի տարածքի բնակիչներին հնարավորություն տրվեց մասնակցելու սեփականաշնորհված պետական ձեռնարկությունների վաճառքի նպատակով կազմակերպված աճուրդներին (տես վերը՝ կետ 88): Գշնարիտ է նաև այն, որ 2003թ. հունվարի 14-ի և 2003թ. օգոստոսի Որոշումների հիման վրա Նեման (Խոտոր) գետի տարածքից տարահանվածներն ազատվել են աճուրդից առաջ ապահովագրական գումար մուծելու պարտականությունից (տես վերը՝ կետեր 90 և 92):

Սակայն, հիմք ընդունելով տեղի ունեցած այլ իրադարձությունները, որոնք հետևել են Սահմանադրական տրիբունալի որոշմանը, Դատարանը չի համարել, որ օրենսդրական փոփոխությունները, թեև եղել են հօգուտ դիմողի, բայց էապես բարելավել են առկա իրավիճակը:

175. Սահմանադրական տրիբունալի որոշման ուժի մեջ մտնելու օրը Պետական գանձապետարանի գյուղատնտեսական սեփականության գործակալությունը, ինչպես նաև Զինվորական սեփականության գործակալությունը պաշտոնական հայտարարություն են հրապարակել, որը տարածել են ինտերնետի միջոցով: Հայտարարության մեջ նրանք նշել են, որ գործակալությունները դադարեցրել են այն բոլոր աճուրդները, որոնցում վաճառվելու է պետական սեփականությունը, քանի որ դրանց առնչվող բազմաթիվ օրենսդրական ակտեր են ընդունվում (տես՝ կետեր 30-32): Այդ քաղաքականությունը հանգեցրել է նրան, որ արդյունավետ կերպով դադարեցվեց Սահմանադրական տրիբունալի որոշման կատարումը: Այդ երևույթը խիստ քննադատության է ենթարկվել երկրի դատական իշխանության կողմից, հատկապես Գերագույն դատարանը համարել է, որ նման գործողությունները հանդիսանում են սահմանադրական բնույթի խախտումներ: Սակայն ոչ գործադիր և ոչ էլ օրենսդիր իշխանությունները որևէ կերպ չեն արձագանքել գործակալությունների գործողություններին (տես վերը՝ կետեր 30-32, 98, 102 և 110):

Ըստ Դատարանի կարծիքի՝ պետական իշխանությունների այդպիսի վարքագիծը, որը կանխամտածված փորձ էր՝ ուղղված վերջնական և իրագործվելիք

որոշման կատարման ձախողմանը, եւ որը լռելյայն ընդունվել է եւ՝ գործադիրի, եւ՝ օրենսդրի կողմից, չի կարող արդարացված լինել որևէ հասարակական շահով: Ընդհակառակը, այդ ամենը խաթարում է իշխանությունների հանդեպ վստահությունը և վտանգավոր պայմաններ է ստեղծում դատական իշխանության արդյունավետության համար, և դրանք այն գործոններն են, որոնք ծայրահեղ կարևոր նշանակություն ունեն Կոնվենցիայի հիմքում ընկած հիմնարար սկզբունքների տեսանկյունից, և որոնք, սույն գործի համատեքստում, պետք է գերակայեն այն տնտեսական կամ սոցիալական քաղաքականության նկատառումների նկատմամբ, որոնցով կարող էր պատճառաբանվել պետության անգործությունը:

Այդ գնահատականը կիսել է նաև Լեհաստանի Գերագույն դատարանը՝ իր 21.11.2003թ. որոշմամբ, փաստելով, որ իշխանությունները վարկավորման իրավունքը դարձրել են գործնականում գրեթե անիրականանալի, ինչպես նաև այն, որ այդպիսի գործողություններն ընդունելի չեն կարող լինել ժողովրդավարական եւ իրավական պետությունում, որը հիմնված է սոցիալական արդարության սկզբունքի վրա (տես վերը՝ կետ 110):

176. Իրադարձությունն առավել հասունացել է 2004թ. հունվարի 30-ին՝ 2003թ. դեկտեմբերի օրենքի ուժի մեջ մտնելու օրը, որի սահմանադրականության հարցը որոշելու համար Խորհրդարանի անդամներն այդ իսկ ամսաթվին դիմել էին Սահմանադրական տրիբունալ (տես վերը՝ կետեր 37-38 և 120):

Այդ օրենքի հիման վրա Լեհական պետությունն իրեն ձերբազատված է համարել որևէ կերպ դիմողի՝ վարկավորման իրավունքի իրացման հետ կապված պարտավորությունից, քանի որ համաձայն նախկինում գործած օրենսդրության՝ դիմողի ընտանիքն ինչ-որ փոխհատուցում ստացել է (տես վերը՝ կետեր 35,37,114-119):

Դատարանը կրկնել է, որ օրենսդրությամբ նախատեսված փոխհատուցման պայմանները կարող են նշանակություն ունենալ այն հարցին պատասխանելիս, թե արդյոք վիճարկվող միջոցառումը բավարարում է արդարացի հավասարակշռության նախապայմանը եւ անհամաչափ բեռ չի դնում դիմողի վրա: Կորցրած սեփականության դիմաց փոխհատուցման տրամադրումը պետք է լինի ողջամտորեն արժեքին առնչվող, հակառակ պարագայում այն կարող է դիտվել որպես անհամաչափ միջամտություն, եւ փոխհատուցման ամբողջական բացակայությունը թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի լույսի ներքո կարող է արդարացված լինել միայն ու միայն բացառիկ դեպքերում (տես վերը նշված՝ Յունաստանի նախկին թագավորը և այլոք, կետ 89, հետագա հղումներով):

Դատարանը գտել է, որ տվյալ պարագայում կարևոր են նաև Պետության պարտավորությունների կատարման ժամկետները: Այդ պատճառով նա կարող է համապատասխան եզրակացություններ անել դիմողի՝ նախկինում գործած իրավունքին առնչվող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ:

(iii) Դիմողի վարքագիծը

(a) Կողմերի դիրքորոշումները

177. Կառավարությունը պնդել է, որ դիմողը չի սպառել Կոնվենցիայի 35 հոդվածի կետ 1-ին համապատասխան՝ մատչելի ներպետական պաշտպանության բոլոր միջոցները, և նա չի դրսևորել դիմողից պահանջվող հետեւողականություն:

Նա ընդգծել է, որ ներպետական օրենսդրությունը ենթադրում է, որ կորցրած սեփականության դիմաց փոխհատուցում ստանալու պահանջ ներկայացրած անձն ավելի ակտիվ վարքագիծ պետք է դրսևորի: Սակայն դիմողը քննության ենթակա ողջ ժամանակահատվածում փորձ չի կատարել մասնակցելու Պետական սեփականության վաճառքի աճուրդներին: Կառավարությունն ընդունել է, որ աճուրդին մասնակցությունն ինքնին պաշտպանության միջոց չէր Կոնվենցիայի 35 հոդվածի 1-ին կետին համապատասխան, սակայն աճուրդին մասնակցելն *in e qua non* պայման էր այդ իրավունքի իրականացման համար:

178. Ըստ Կառավարության՝ դիմողը սեփական անգործությամբ, որը դրսևորվել է սեփականության դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքի իրականացման՝ օրենքով սահմանված կարգով դրա բավարարման համար միակ ուղուց՝ աճուրդին մասնակցելուց հրաժարվելով, կանխամտածված իր համար բացառել է աճուրդի մասնակցելու ցանկացած հնարավորություն: Կառավարությունը պնդել է թողնված սեփականության շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ դիմողի կողմից փորձագիտական եզրակացություն չներկայացնելու նրա իրավունքը հաստատող որոշման կայացման անհրաժեշտությանը, ինչպես նախատեսված է 1998թ. Որոշմամբ:

Ի վերջո, Կառավարությունը նշել է, որ նույնիսկ վերջերս՝ 2002թ. ապրիլի և 2003թ. հոկտեմբերի միջև ընկած ժամանակահատվածում, դիմողի փաստացի բնակության վայրի՝ Վելիչկայի քաղաքապետը երեք աճուրդ է կազմակերպել, և եթե դիմողը պահպաներ դիմելու համար նախատեսված ընթացակարգային

պահանջները՝ ոչինչ չէր խոչընդոտի աճուրդին նրա մասնակցությանը եւ Choragwica և Niepolomi բնակավայրերում սեփականություն ձեռք բերելու համար հնարավորությանը:

179. Դիմողը պնդել է, որ հայտարարությունն այն մասին, թե իր վարքագիծը պատշաճ չի եղել, պետք է գնահատվի՝ հաշվի առնելով բոլոր հանգամանքները: Նախևառաջ, իշխանությունները որևէ արդյունավետ ընթացք չեն տվել նախկին թեկուզև սահմանափակիչ և թերություններով լի օրենսդրության իրագործմանը: Աճուրդների նվազագույն քանակը, ինչպես նաև աճուրդներից փոխհատուցում ակնկալող մասնակիցների մեծ թվաքանակը, հնարավորություն չէր տալիս իրացնել իր՝ վարկավորման իրավունքը: Կրակովի շրջանային դատարանը ճանաչել էր գրեթե անհնարին, և այդ դիրքորոշումը հետագայում պաշտպանվել է նաև Սահմանադրական տրիբունալի կողմից:

Նա նաեւ վկայակոչել է Սահմանադրական տրիբունալի և Կրակովի շրջանային դատարանի եզրակացությունն առ այն, որ առաջացել է պարադոքսալ մի վիճակ, երբ, հաշվի առնելով հողերի սակավությունը, Նեման գետի պահանջատերերը կորցրել են իրենց պահանջների մեծ մասը՝ աճուրդում վաճառվող հողի արժեքը բարձրացնելով շուկայականից շատ ավելի բարձր: Տեղի ունեցած աճուրդներում, իրոք, հողերը վաճառվել են իրենց իրական արժեքը մի քանի անգամ գերազանցող գնով:

(b) Դատարանի գնահատականը

180. Դիմողի իրավունքի իրականացման ընթացակարգերի արդյունավետության հարցն ամենայն խորությամբ ուսումնասիրվել է ազգային դատարանների կողմից, և, ինչպես նշել է Դատարանը նրանք շատ ավելի խորությամբ են տիրապետում իրավիճակին և ծանոթ են ազգային առանձնահատկություններին (տես վերը՝ կետեր 172-173):

Գնահատելով մինչև 2002թ. դեկտեմբերի 19-ը տիրող ընդհանուր իրավիճակը՝ Սահմանադրական տրիբունալը գտել է, որ Նեման (Խոտոր) գետի տարածքից տարահանված անձանց՝ Պետական գանձապետարանի կողմից առաջարկված սեփականության ձեռքբերման իրավունքի իրականացմանը խոչընդոտող ցանկացած օրենսդրական ակտ կարող է գնահատվել որպես ուղղակի ազդեցություն վարկավորման իրավունքի վրա: Նա գտել է, որ հետագայում փոխհատուցման առկա մեխանիզմները դարձան «փոխհատուցման երեւակայական միջոց» (տես վերը՝ կետեր 82-86):

Ինչ վերաբերում է այն մարզում տիրող իրավիճակին, որում դիմողի դիմումը գրանցվել էր ժամանակին, ապա Կրակովի շրջանային դատարանը, հիմնվելով ապացույցների վրա, ընդունել է, որ մինչև 1998թ. այդ ութ տարիների ընթացքում իշխանությունները կազմակերպել են միայն 22 աճուրդ, և որ դրանց ընդհանուր առմամբ վարկավորման իրավունք ունեցող 300 անձից մասնակցել է 20-ը: Կառավարությունը չի հերքել այդ փաստը (տես վերը՝ կետեր 97 և 169):

Բացի դրանից, ապացուցված է համարվել այն, որ 2003թ. հունվարի 8-ից՝ Սահմանադրական տրիբունալի որոշման ուժի մեջ մտնելու օրվանից, իշխանությունները հիշյալ որոշման չկատարումը քողարկելու նպատակով դադարեցրել են պետական սեփականության վաճառքի բոլոր աճուրդները (տես վերը՝ կետեր 174-175): Կրակովի շրջանային դատարանը և հետագայում՝ Գերագույն դատարանը գտել են, որ Պետության վարքագիծը պարունակել է սահմանադրական իրավունքների խախտումներ, և վարկավորման իրավունքը եղել է սոսկ պատրանքային (տես վերը՝ կետեր 98, 102 և 110):

181. Ստեղծված իրավիճակում և նկատի ունենալով աճուրդում գնի առաջարկման ընթացակարգին բնորոշ ռիսկը, Դատարանը գտել է, որ Պետության խոչընդոտող գործողությունների և անգործության հետևանքով ընթացակարգը չի կարող գնահատվել որպես «արդյունավետ» կամ «համարժեք» միջոց՝ լեհական օրենսդրությամբ դիմողին տրամադրված վարկավորման իրավունքի իրացման համար: Չի կարելի ասել, որ դիմողը պատասխանատու է եղել այն վիճակի համար, որի դեմ նա գանգատվում է: Ավելի շուտ, Դատարանը գտել է, որ գույքի անարգել օգտագործման համար խոչընդոտը բացառապես վերագրվում է Պատասխանող պետությանը (տես նաև վերը՝ 168-176 կետեր): Ուստի Դատարանը մերժել է Կառավարության՝ ներպետական պաշտպանության միջոցները չսպառելու հիմքով գանգատն անընդունելի ճանաչելու խնդրանքը:

IV. «Արդար հավասարակշռության» վերաբերյալ եզրակացություն

182. Դատարանն ընդունել է, որ նմանատիպ դեպքերում, երբ խնդիրը ներառում է ողջ երկրի տնտեսությանն առնչվող լայնածավալ, սակայն հակասական օրենսդրություն, Պետությունն ունի էական հայեցողություն՝ ոչ միայն միջոցներ ձեռնարկելու սեփականության իրավունքի նկատմամբ հարգանքն ապահովելու համար, այլ նաեւ ընտրելու այդ միջոցի կիրառման ժամանակը: Այդպիսի միջոցների ընտրությունը կարող է ներառել որոշումներ, որոնք փոխհատուցման արժեքը

սահմանափակում են գույքի շուկայականից շատ ավելի ցածր գնով: Ուստի, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը բոլոր դեպքերում չի երաշխավորում սեփականության կորստի դեպքում լիարժեք փոխհատուցում (տես Ջեյմսը և այլոք, հիշատակված վերը՝ կետ 54):

Չավասարակշռել խնդրո առարկա շահերը, ինչպես նաև այն անձանց կորուստները եւ ձեռքբերումները, որոնց վրա ազդեցություն է գործել պետության տնտեսական եւ իրավական համակարգի անցումային գործընթացը, բացառիկ դժվար խնդիր է: Նման հանգամանքներում գնահատման լայն շրջանակ պետք է վերապահվի Պատասխանող պետությանը:

Այդուհանդերձ, Դատարանը գտել է, որ պետության հայեցողության շրջանակն անսահմանափակ չէ, եւ ինչ ծավալների ու բարդության էլ որ լինեն օրենսդրության բարեփոխումները, պետությունը չի կարող առաջացնել Կոնվենցիայի չափորոշիչներին հակասող հետեւանքներ (տես վերը՝ կետեր 149-151):

183. Թեեւ Դատարանն ընդունել է, որ երկրում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական համակարգի արմատական բարեփոխումը, ինչպես նաև պետության ֆինանսները կարող են արդարացնել Նեման (Խոտոր) գետի տարածքից տարահանվածների փոխհատուցման սահմանափակումը, այնուամենայնիվ, Դատարանը գտել է, որ Լեհական պետությունը չի ներկայացրել այնպիսի փաստարկներ, որոնց հիման վրա նրա գործելակերպը հնարավոր կլիներ արդարացված համարել՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, այն է՝ երկարատև ժամանակահատվածում դիմողի՝ սեփականության դիմաց օրենսդրությամբ սահմանված փոխհատուցում ստանալու իրավունքի ապահովման հարցում դրսեւորված անգործությունը:

184. Կոնվենցիայում ամրագրված իրավական պետության գաղափարը և թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հիմքում ընկած օրինականության սկզբունքը պետություններից պահանջում են, որպեսզի ոչ միայն թափանցիկ և հետևողական ձևերով հարգվեն և կիրառվեն օրենքները, այլև, որպես այդ պարտավորության ածանցում, ստեղծվեն դրանց կատարման իրավական ու գործնական բոլոր պայմանները: Տվյալ դեպքի համատեքստում Լեհական պետությունը պարտավոր էր վերացնել օրենքի տառի եւ Պետության պրակտիկայի միջեւ անհամապատասխանությունը, որը խոչընդոտում էր Նեման գետի սեփականության իրավունքի արդյունավետ իրացմանը: Այդ սկզբունքները Լեհական պետությունից պահանջում էին ժամանակին, պատշաճ կերպով եւ հետևողականորեն իրականացնել իր իսկ օրենսդրական խոստումը՝ փոխհատուցում տրամադրել Նեման (Խոտոր) գետի տարածքից տարահանվածներին: Դա կարևոր հասարակական ու

ընդհանուր շահի հարց է (տես վերը՝ կետ 150): Ինչպես իրավացիորեն նշված է լեհական Սահմանադրական տրիբունալի կողմից (տես վերը՝ կետ 82)՝ օրենքի ու Պետության հանդեպ քաղաքացիների անվերապահ հարգանքը պահանջում է, որ իշխանությունները վերացնեն իրավական դաշտում առկա դիսֆունկցիոնալ դրույթները և շտկել էքստրա-իրավական պրակտիկան:

185. Սույն գործում, ինչպես հաստատել են լեհական դատարանները եւ Դատարանը, իշխանությունները կիրառելով հետեւողական սահմանափակումներ դիմողի վարկավորման իրավունքի նկատմամբ, նրա իրավունքը դարձրել են երեւակայական եւ զրկել բովանդակությունից:

Դիմողի անորոշ վիճակը, որում նա հայտնվել է իր իրավունքի իրականացման անընդհատ ու հետևողական ձգձգումների ու խոչընդոտների հետևանքով, ինչի համար պատասխանատու են ազգային իշխանությունները, ինքնին անհամատեղելի է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված՝ գույքի անարգել օգտագործման իրավունքը երաշխավորելու պարտավորության հետ (տես վերը՝ կետ 152):

186. Բացի դրանից, 2003թ. դեկտեմբերի օրենսդրությամբ դիմողի իրավունքը դարձել է փաստացի անիրականանալի, այսինքն՝ նա կորցրել է սեփականության դիմաց փոխհատուցում ստանալու նախկինում տիրապետած իր իրավունքը:

Ինչպես նշվել է վերը (տես՝ կետեր 134 և 182), համաձայն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի՝ Պետությունը, օրենքի հիման վրա, ունի եփականությունից զրկելու, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով տրամադրվող փոխհատուցման ծավալներն էապես կրճատելու իրավունք:

Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջն է, որ փոխհատուցումը լինի գույքի արժեքին ողջամտորեն առնչվող (տես վերը՝ կետ 176): Դատարանը չի կարող վերացականորեն ասել, թե սույն գործում որն է փոխհատուցման «ողջամիտ» մակարդակը: Լեհական իշխանությունների կողմից դիմողին որպես փոխհատուցում տրամադրված 2%-ը որևէ կերպ արդարացված չէ, և նրան պետք է տրամադրվեր փոխհատուցում իր կորցրած սեփականությանը համամասնորեն, ինչպես որ նախկին օրենսդրության համաձայն փոխհատուցում են ստացել նույն բնակավայրից տարահանվածները:

(d) Ընդհանուր եզրակացություն

187. Դատարանը՝ հաշվի առնելով վերոհիշյալ գործոնները եւ տարիների ընթացքում Նեման գետին առնչվող օրենսդրության ազդեցությունը դիմողի վրա,

գտել է որ նա կրել է ոչ համամասն եւ չափից ավելի մեծ բեռ, ինչը չի կարող արդարացվել իշխանությունների կողմից հետապնդված նպատակով:

Չետևաբար, դիմողի դեպքում խախտվել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 46 ԵՎ 41 ՅՈՂՎԱԾՆԵՐԸ

A. Կոնվենցիայի 46 հոդվածը

188. Կոնվենցիայի 46 հոդվածն ամրագրում է.

«1. Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են իրականացնել Դատարանի վերջնական վճիռները բոլոր այն գործերով, որոնցում կողմ են:

2. Դատարանի վճիռը պետք է տրամադրվի Նախարարների կոմիտեին, որն էլ պարտավոր է վերահսկողություն իրականացնել դրա կատարման նկատմամբ»:

189. Դատարանի եզրահանգումից բխում է, որ դիմողի՝ Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորվող իրավունքի խախտումը ծագել է լայնածավալ մի հիմնախնդրից, որն արդյունք է թերի օրենսդրության եւ վարչական պրակտիկայի, եւ որը կարող է ազդել մեծաթիվ անձանց վրա: Իշխանությունների կողմից դիմողի իրավունքի խախտումը չի կրել անհատական բնույթ, այլ այդ իրավունքի իրագործմանը խոչընդոտող բոլոր գործողություններն ամրագրվել են օրենսդրորեն և հետագայում ևս կանդրադառնան մեծ թվով քաղաքացիների, մասնավորապես՝ Նեման (Խոտոր) գետի տարածքից տարահանվածների իրավունքների վրա:

Այդ խնդրի առկայությունն ու դրա համակարգված բնույթը փաստվել են նաև լեհական դատարանների կողմից՝ իրենց կայացրած որոշումներում: Օրինակ՝ Սահմանադրական տրիբունալը 2002թ. դեկտեմբերի 19-ի իր որոշման մեջ նշել է, որ առկա օրենսդրական համակարգը «անթույլատրելի համակարգային շփոթ» է ստեղծում երկրում (տես վերը՝ կետ 85): Դատարանը՝ հիմնվելով Լեհաստանի դատական մարմինների կողմից հաստատված փաստերի վրա, գտնում է, որ Լեհաստանի իրավական համակարգում առաջացել է թերություն, որի արդյունքում մի ամբողջ խումբ անձինք չեն կարողանում փոխհատուցում ստանալ իրենց կորցրած սեփականության դիմաց:

190. Կոնվենցիայի մեխանիզմների արդյունավետությունը երաշխավորելու համար որպես միջոցների փաթեթի մաս՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների

կոմիտեն ընդունել է 2004թ. մայիսի 12-ի հանձնարարականը Res. (2004)3՝ համակարգային հիմնախնդիրներ բացահայտող վճիռների վերաբերյալ, որում համապատասխան պետությանը հիմնախնդիրները եւ անհրաժեշտ միջոցները ճանաչելու հարցում աջակցելու շահագրգռությունն ընդգծելուց հետո (նախաբանի 7-րդ կետ), նա Դատարանին առաջարկել է խախտման փաստը ճանաչող իր վճիռներում հստակեցնել, թե որն է հիմնական համակարգային խնդիրը եւ այդ խնդրի աղբյուրը, մասնավորապես, երբ այդ հիմնախնդիրը ծնունդ է մի շարք համանման գանգատներ՝ օգնելու համար պետություններին համապատասխան լուծումներ գտնելու եւ Նախարարների կոմիտեին՝ վճիռների կատարումը վերահսկելու հարցում (Հանձնարարականի 1-ին կետ): Այդ հանձնարարականը պետք է դիտարկվի Դատարանի ծանրաբեռնվածության աճի համատեքստում, հատկապես մի շարք գործերի արդյունքում, որոնք հարուցվել են միեւնույն կառուցվածքային կամ համակարգային պատճառներով:

191. Նույն այդ համատեքստում Դատարանն ուշադրություն պետք է դարձնի Նախարարների կոմիտեի 2004թ. մայիսի 12-ի /2004/6/ հանձնարարականին՝ ներպետական պաշտպանության միջոցները կատարելագործելու վերաբերյալ, որում ընդգծվում է, որ, ի լրումն Կոնվենցիայի 13 հոդվածով նախատեսված ներպետական պաշտպանության արդյունավետ միջոց տրամադրելու պարտավորության, պետություններն ունեն նաեւ խախտման հիմքում ընկած հիմնախնդիրները լուծելու ընդհանուր պարտավորություն: Հաշվի առնելով, որ ներպետական մակարդակում պաշտպանության միջոցների կատարելագործումը, մասնավորապես՝ կրկնվող գործերով, կնպաստի Դատարանի ծանրաբեռնվածության նվազեցմանը, Նախարարների կոմիտեն Կոնվենցիայի մասնակից պետություններից պահանջում է ներպետական իրավունքում եւ պրակտիկայում կառուցվածքային կամ ընդհանուր բնույթի թերություններ բացահայտող՝ Դատարանի վճիռների հիման վրա վերանայել եւ «անհրաժեշտության դեպքում ստեղծել պաշտպանության միջոցներ՝ կանխելու համար Դատարան ներկայացված գործերի կրկնությունը»:

192. Կոնվենցիայի 41 հոդվածի հիման վրա դիմողի՝ արդարացի բավարարման վերաբերյալ պահանջը քննության առնելուց առաջ, հաշվի առնելով սույն գործի հանգամանքները եւ Դատարանի ծանրաբեռնվածության աճը, Դատարանը ցանկանում է քննարկել, թե ինչ հետեւանքներ կարող են ծագել պատասխանող պետության համար Կոնվենցիայի 46 հոդվածից: Դատարանը կրկնել է, որ Կոնվենցիայի 46 հոդվածի հիման վրա պետությունը պարտավոր է կատարել Դատարանի վերջնական վճիռն այն գործով, որի կողմ է ինքը հանդիսանում, իսկ Նախարարների կոմիտեն վերահսկողություն է իրականացնում նման վճռի

կատարման նկատմամբ: Դրանից հետեւում է, որ խախտման փաստ արձանագրած վճիռը Պատասխանող պետությանը պարտավորեցնում է ոչ միայն Կոնվենցիայի 41 հոդվածի հիման վրա վճարել արդարացի բավարարում, այլ նաեւ, Նախարարների կոմիտեի վերահսկողության ներքո, իր ներպետական իրավական համակարգում ընտրել համապատասխան ընդհանուր կամ անհատական բնույթի միջոցառումներ՝ վերջ տալու համար Դատարանի արձանագրած խախտմանը եւ հնարավորինս վերացնելու դրա հետեւանքները: Նախարարների կոմիտեի վերահսկողության ներքո, պատասխանող պետությունն ազատ է ընտրելու այն միջոցները, որոնցով կկատարվի Կոնվենցիայի 46 հոդվածով նախատեսված պարտավորությունը, պայմանով, որ այդ միջոցները կհամապատասխանեն Դատարանի վճռի եզրահանգումներին (տես Չեզարի Ջանտաուն ընդդեմ Իտալիայի [GC], թիվ 39221/98 ու 41963/98, կետ 249, ECHR 2000-VII):

193. Դատարանն արդեն իսկ նշել է, որ տվյալ դեպքի արձագանքներն առնչվելու են մեծ թվով մարդկանց: Փաստորեն, թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին համապատասխան Նեման գետի բողոքների լուծման մեխանիզմը չկիրառելն ազդել է 80 000 անձի վրա (տես վերը՝ կետեր 33-34): Դատարան են դիմել ու իրենց հարցի լուծմանն են սպասում Նեման (Խոտոր) գետի տարածքից տարահանված թվով 167 անձինք: Դա ոչ միայն ծանրացուցիչ գործոն է Պետության՝ Կոնվենցիայով ստանձնած պարտավորության առնչությամբ, այլև մեծ սպառնալիք է ներկայացնում Կոնվենցիոն մեխանիզմի հետագա արդյունավետության համար:

Թեև Դատարանի խնդիրը չէ որոշելու այն միջոցները, որոնցով Պատասխանող պետությունը կբավարարի Կոնվենցիայի 46-րդ հոդվածով նախատեսված իր պարտավորությունը, այնուամենայնիվ, հաշվի առնելով համակարգային իրավիճակը, Դատարանը պետք է նշի, որ ընհանուր միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն ի կատարումն սույն վճռի, պետք է ազդեցություն ունենան մեծ թվով անձանց վրա: Այդ միջոցները պետք է ուղղված լինեն Դատարանի կողմից ճանաչված համակարգային թերության վերացմանը, ինչը հնարավորություն կտա Դատարանին ձերբազատվել միեւնույն հիմքի վրա ներկայացված համանման գանգատներից: Այս համատեքստում Դատարանը շահագրգռված է դյուրացնել ներպետական համակարգում մարդու իրավունքների պաշտպանության կապակցությամբ առաջացած թերացումների արագ եւ արդյունավետ շտկումը: Եթե արձանագրվել է նման թերացում, ապա ներպետական իշխանությունների խնդիրն է, Նախարարների կոմիտեի վերահսկողության ներքո, ձեռնարկել իրավունքի վերականգնման համապատասխան միջոցներ՝ Կոնվենցիայի սուբսիդիար բնույթին համապատասխան, որպեսզի Դատարանն ստիպված չլինի կրկնել իր

եզրահանգումները համանման բազմաթիվ գործերով (տես՝ Բոտարին ընդդեմ Իտալիայի [GC] թիվ 34884/97, կետ 22, ECHR 1999-V, Դի Մաուրոն ընդդեմ Իտալիայի [GC] թիվ 34256/96, կետ 23, ECHR-1999-V և Նախարարների կոմիտեի հանձնարարականը /2000/135, 25 հոկտեմբերի 2000):

194. 46-րդ հոդվածի դրույթի հիման վրա իր պարտավորությունները կատարելու հարցում Պատասխանող պետությանն օգնելու նպատակով Դատարանը ձգտել է ցույց տալ այն միջոցի տեսակը, որը կարող է ձեռնարկվել Լեհական պետության կողմից, որպեսզի վերջ դրվեր ներկա գործում ճանաչված համակարգային իրավիճակին: Դատարանը հնարավորություն չունի գնահատելու, թե արդյո՞ք 2003թ. դեկտեմբերի օրենքը (տես վերը՝ կետեր 114-120) կարելի է դիտել այդ կապակցությամբ համարժեք միջոց, քանի որ դրա ոչ մի իրավակիրառական պրակտիկա դեռևս արձանագրված չէ: Ցանկացած դեպքում, այդ օրենքը չի առնչվում այն անձանց, որոնք, Բրոնիովսկու նման, արդեն ստացել են մասնակի փոխհատուցում՝ անկախ այդպիսի փոխհատուցման քանակից: Այսպիսով, պարզ է, որ Նեման (Խոտոր) գետի դիմողների այդ խմբի համար օրենքը չի կարող գնահատվել որպես միջոց, որը կարող է վերջ դնել այն համակարգային իրավիճակին, որը ճանաչվել է սույն վճռում:

Սակայն, ինչ վերաբերում է ձեռնարկվելիք ընդհանուր միջոցներին, Դատարանը գտել է, որ Պատասխանող պետությունը պետք է, նախևառաջ, կամ վերացնի ցանկացած արգելք՝ բազմաթիվ մարդկանց իրավունքներն իրացնելու ճանապարհից, ինչպես դիմողին, որոնց առնչվում է ստեղծված իրավիճակը՝ ի խախտումն Կոնվենցիայի, կամ էլ փոխարենն ապահովի նախորդ ընտրության առումով համարժեք վերականգնում: Պատասխանող պետությունը, ուստի, պետք է իրավական և վարչական միջոցների կիրառմամբ ապահովի Նեման (Խոտոր) գետի մնացյալ դիմողների խնդրո առարկա իրավունքի արդյունավետ և արագ իրացումը՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում ամրագրված սեփականության իրավունքի պաշտպանության սկզբունքներին համապատասխան, հատուկ ուշադրություն դարձնելով փոխհատուցմանը վերաբերող սկզբունքներին (տես վերը՝ կետեր 147-151, 176 և 186):

B. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը

195. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը երաշխավորում է.

«Եթե Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի փոխհատուցման

հնարավորություն, ապա Դատարանն անհրաժեշտության դեպքում տուժած կողմին արդարացի բավարարում է տրամադրում»:

1. Նյութական վնասը

196. Որպես նյութական վնասի հատուցում դիմողը պահանջել է 990 000 լեհական զլոտի (PLN)՝ որպես իր սեփականության իրավունքի կորստի դիմաց փոխհատուցում: Նրա գնահատմամբ՝ դա Լվովում մնացած՝ սեփականության արժեքի չափն է, որի համար ինքը փոխհատուցում չի ստացել: Այնուհետև նա պահանջել է 1548000 PLN՝ ավելի քան 50 տարվա ընթացքում չստացած շահույթի դիմաց, այդ ժամանակահատվածում ո՛չ ինքը, ո՛չ իր իրավահաջորդները չեն կարողացել իրենց գույքից ստանալ որեւէ օգուտ:

Դիմողն այնուհետև խնդրել է Դատարանին իրեն հատկացնել 12 000 եվրո (EUR)՝ ոչ նյութական վնասի դիմաց, որը նա կրել է սեփականության իր իրավունքից օգտվելու շարունակվող անկարողության հետևանքով առաջացած անվստահության, լարվածության և ընկճվածության պատճառով:

Այնուհետև, Դատարանում իր օրինական շահերը ներկայացնելու համար երկու փաստաբանների վարձատրության համար կրած ծախսերի դիմաց, ըստ իր հաշվարկի, դիմողը պահանջել է 125 000 PLN:

197. Կառավարությունը, որին խնդրել էին անդրադառնալ արդարացի բավարարման խնդրին, գտել է, որ դիմողի պահանջները չափազանցված են: Ինչ վերաբերում է ծախսերի դիմաց դիմողի պահանջին, նա նշել է, որ փաստաբաններն իրենց աշխատանքի համար դիմողից պահանջել են չափազանց մեծ գումար: Օրինակ, դիմողի ներկայացուցիչներից մեկը 1 ժամվա համար պահանջել է բացառիկ մեծ վճար՝ 1000 PLN, այսինքն՝ 250 EUR, ինչը, հաշվի առնելով իրավիճակը Լեհաստանում, անթույլատրելի է:

2. Դատարանի եզրակացությունը

(a) Նյութական եւ ոչ նյութական վնաս

198. Գործի հանգամանքներում Դատարանը գտել է, որ նյութական և/կամ ոչ նյութական հատուցման հարցը դեռևս պատրաստ չէ որոշման համար: Հետևաբար, այն պետք է հետաձգվի և պետք է հաստատվի հետագա ընթացակարգը՝ հաշվի առնելով ցանկացած համաձայնություն, որը կարող է ձեռք բերվել Պատասխանող կառավարության և դիմողի միջև (75-րդ դրույթ, 1-ին կետ), և այն անհատական կամ

ընդհանուր միջոցների լույսի ներքո, որը պատասխանող Պետությունը կարող է ձեռնարկել ի կատարումն սույն վճռի: Մինչև ընդհանուր միջոցների կատարումը, որոնք պետք է ձեռնարկվեն ողջամիտ ժամկետում, Դատարանը հետաձգում է այն զանգատների քննությունը, որոնք բխում են միեւնույն ընդհանուր պատճառից:

(b) Ծախքերն ու ծախսերը

199. Ինչ վերաբերում է ծախքերին ու ծախսերին, որոնք դիմողը կրել էր Դատարանում լսումների ժամանակ, Դատարանը, գնահատելով այն իրավահավասարության հիման վրա, նրան տրամադրել է 12000 EUR` հանած 2409 EUR` իրավաբանական օգնություն ստանալու համար Եվրոպայի Խորհրդի կողմից տրված գումարը` վճռի կայացման օրվա դրությամբ արտարժույթի փոխարկելի արժեքին համարժեք լեհական զլոտիի փոխարկված:

(c) Տոկոսներ չվճարման համար

Դատարանը գտել է, որ չվճարման համար տոկոսները պետք է հիմնվեն Եվրոպական կենտրոնական բանկի նվազագույն փոխատվական տոկոսադրույքի վրա, որին պետք է հավելել երեք տոկոս:

Այս հիմքերով Դատարանը միաձայն

1. Մերժում է Կառավարության նախնական առարկությունը,
2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետի խախտում,
3. Վճռում է, որ վերոնշյալ խախտումը բխել է համակարգային հիմնախնդրից` կապված ներպետական օրենսդրության և պրակտիկայի թերության հետ, որն առաջացել է այնպիսի արդյունավետ մեխանիզմի ստեղծումից հրաժարվելու հետևանքով, որով կիրականացվեր Նեման (Խոտոր) գետի դիմողների «վարկավորման իրավունքը»,
4. Վճռում է, որ Պատասխանող պետությունը պետք է համապատասխան իրավական միջոցներով և վարչական պրակտիկայով ապահովի Նեման (Խոտոր) գետի մնացյալ դիմողների առնչությամբ խնդրո առարկա սեփականության իրավունքի իրացումը կամ փոխարենն ապահովի դրանց համարժեք վերականգնումը` թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա սեփականության իրավունքի պաշտպանության սկզբունքներին համապատասխան,

5. Վճռում է, որ այնքանով, որքանով խոսքը վերաբերում է սույն գործում բացահայտված խախտումներից դիմողի կրած նյութական կամ ոչ նյութական վնասի հատուցմանը, 41-րդ հոդվածի կիրառման հարցը դեռևս պատրաստ չէ որոշման համար, հետևաբար՝

(a) նշված հարցն ամբողջությամբ հետաձգվում է,

(b) առաջարկում է Կառավարությանը և դիմողին, սույն վճռի այդ եզրակացության մասին ծանուցվելուց հետո վեց ամսվա ընթացքում Դատարանին ներկայացնել հայցի վերաբերյալ իրենց գրավոր դիտողությունները եւ հայտնել իրենց միջև ցանկացած համաձայնության ձեռքբերման մասին,

(c) հետաձգում է հետագա ընթացակարգը և իրավունք է վերապահում Դատարանի նախագահին անհրաժեշտության դեպքում այդ նույնը սահմանել.

6. Վճռում է,

(a) որ Պատասխանող պետությունը պետք է դիմողին երեք ամսվա ընթացքում վճարի 12000 (տասներկու հազար) EUR՝ դատարանում մինչ օրս լսումների առնչությամբ կատարած ծախքերի ու ծախսերի դիմաց, հանած 2409 (երկու հազար չորս հարյուր ինը) EUR՝ իրավաբանական օգնություն ստանալու համար Եվրոպայի խորհրդի կողմից տրված գումարը, որը պետք է փոխարկվի ազգային արտարժույթի՝ վճռի օրվա դրությամբ արտարժույթի փոխարկելի արժեքին համարժեք գումարի չափով, հավելած ավելացված արժեքի հարկը,

(b) վերոնշյալ եռամսյա ժամկետը լրանալուց սկսած, մինչև լիովին վճարումը, չվճարման համար տոկոսները պետք է հիմնվեն Եվրոպական կենտրոնական բանկի՝ չվճարման ժամանակահատվածում նվազագույն փոխատվական տոկոսադրույքի վրա, որին պետք է հավելել երեք տոկոս:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով և հրապարակվել է Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 2004թ. հունիսի 22-ին:

Նախագահ

Լուիզիուս Վիլդհաբեր

Քարտուղար

Պոլ Մահոնի